

ՍԻՈՆ

ԼՍՏԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՆՐԱՏ ԵՐԿՈՒՄԱՐՆԵՐ ԵՒՅ ՊԱՏՐԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1957

ԼԱ
ՏԱՐԻ

«سیون» مجله ارمنیة شهریة، ادبیة، ادبیة، ثقافتیة، للغة والبیان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ազգ. երկրորդական վարժարաններու Տնօրէնութեանց եւ գրասէր հասարակութեան կը տեղեկացնենք թէ, ձեռնարկած ենք վերստին հրատարակել, մեծարժէք եւ իր տեսակին մէջ եզակի գործ մը. — Հանգուցեալ մեծանուն գրագէտ-հննագետ Յ. ՕՇԱԿԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ դասագիրքը՝ Բ. Տպագրութիւն:

Այս առիթով, Արքեպիսկոպոսեան Տպարանիս Տեսչութիւնը, մասնաւոր աշխատանքով պիտի փութացնէ հրատարակութեան գործը, յառաջիկայ դպրոցական վերամուտին, դասագիրքը պատրաստ ընելու համար:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԵՐԳԵՅՈՂ ՈՒԹԻՒՆՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ

Քառաձայն խումբի համար եւ երգեհոնի ընկերակցութեամբ

Հայերէն բնագրով եւ Անգլերէն բարգմանութեամբ

Դաւանաւորեց՝

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Անգլերէնի բարգմանեց՝

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

Հրատարակեց՝

ԹՈՐԳՈՄ ՎՐԳ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Էջ 70, Գին 4 դոլլար, առաքման ծախքը ներառեալ

10 եւ աւելի օրինակ ապսպրանքին՝ 15% զեղչ

Գիմել՝ Armenian Patriarchate, Printing Press, P. O. B. 4001, Jerusalem, Jordan.

Armenian Church Diocesan Office, 630 2nd Ave., New York 16, N. Y., U. S. A.

ԱՄԲՈՂՋ ԵՐԿԵՐ

Տ. ԹՈՐԳՈՍ ՊԱՏԻԱՐՔԻ

Բ.

ՍՈՒՐԲՔ ԵՒ ՏՕՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ

(Համառոտ տեղեկութիւններ Հայց. Եկեղեցւոյ տօնակի Սուրբերու եւ Տէրունական Տօներու մասին)

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Էջ՝ 300

Գին՝ 5 Շիլին
կամ Լիր. 3 քրորակի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	<u>Երես</u>
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	169
— Կրթական մեր հունձֆր	
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Աղօթք Ներսէս Հայրապետի խաղողի օրհնութեան համար	173
— «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	175
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— La Profundis	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 178
— Նայիրեան դալար բարդի	ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ 180
— * * *	» » 180
— Կակաշ	» » 180
ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Պապ Արեակուսի	ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ 181
ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ	
— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ 187
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ	
— (հել) Յովնաննէս Թլկուրանցի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 190
ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ	
— «Միսիկ Տաւիլ»	ՍՕՍ - ՎԱՆԻ 195
ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ	
— Քելհամի ասուածաբանական դպրոցը Անգլիոյ մէջ	197
Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի այցելութիւնը Սուրիա եւ Լիբանան	198
Զեռնագրութիւն կուսակրօն քահանաներու	200
Կիսասաղաւազութեան եւ դպրութեան ասիաններու զբոսը	202
Երանաշենոհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շրջանառութիւն	203
Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեռնարանը	204
Խարբուրտի եկեղեցիին բարեբարը	204
Պատշտական Հաղորդագրութիւն Ս. Արտոյ Դիւաննէ	205
Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիրներ	209
— Եկեղեցական - Բեմական	209
— Պատշտական	210
— Ամալեղի հանգեսներ Ս. Արտոյ վարժարանաց	212
— Ամալեղի հանգես Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի	216
Գրիգոր Դեռոյ Կարապետեան կտակ	

تصدراها - بطريكية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النياة الاستف هايكازون أبراهيان
 يوليو - أغسطس ١٩٥٧ طبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٧ - ٨

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Ա. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1957

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 7-8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՄԵՐ ՀՈՒՆԶՔԸ

Արտասահմանի մէջ Հայ Ազգային-եկեղեցական կեանքի ամենէն յուսադրիչ և սրտապնդիչ կողմը կրթական գործն է, որուն համար վերջին տասնամեակին, մասնաւորաբար Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ զնահատելի ճիգ կը թափուի և որուն յատուկ ուշադրութիւն կ'ընծայուի: Այս ընդհանուր շարժման և զովելի հետաքրքրութեան մէջ կարեւոր բաժին ունի երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը, որուն հսկողութեան ներքե կը գործեն, բացի ժառանգաւորաց Վարժարանէն և Ընծայարանէն՝ Ս. Թարգմանչաց Նախակրթարանը և երկրորդական վարժարանը և քանի մը ուրիշ ազգային վարժարաններ:

Անցնող ամիսներու ընթացքին տեղի ունեցան Ս. Աթոռոյս վարժարաններուն ամսավերջի քննութիւնները, վկայականներու և մրցանակաբաշխութեան հանդէսները, ինչպէս նաև դաշտահանդէսներն ու պազարը, ուր յաջորդաբար յայտարարուեցան մեր տղոց ֆիզիքական կրթութիւնը և աղջիկներու ձեռագործներն ու աշակերտներու ձեռարուեստի աշխատութիւնները: Այս առիթները լաւազոյն պատենութիւնը ընծայեցին մեզի, վերահասու ըլլալու նաև այս տարուան մեր կրթական գործին նշանակելի յաջողութեան:

Արդարև երջանիկ պարագայ մըն էր տեսնելը թէ ինչպէս տքնաշան աշխատանքով և զոհողութիւններով մեր վարժարանները կարեւոր յաջողութիւն մը արձանագրեցին այս տարի, իբրև կրթական մակարդակի բարձրացում, իբրև որակ, ոյի, և ընթացաւարտ աշակերտներու թիւ:

Իսկ եկեղեցական ասպարէզի մէջ մտնելու համար մեր ժառանգաւորաց վարժարանին և Ընծայարանին մէջ պատրաստուած Արեղաններու և Սարկաւազաներու ձեռնադրութիւնը ամէնքս դրաւ կրօնական-եկեղեցական խանդավառութեան բարձր մթնոլորտի մը մէջ:


Ս. Ա. Թ. ՈՌՈՑՍՍ Ժ. Ա. Ռ. Վ. Ա. ՐԺ. Ա. Ր. Ա. Ն. Ն ՈՒ ԸՆԾՍ. ՅՍ. Ր. Ա. Ն Ը

Հակառակ մեր բազմապիսի դժուարութեանց, որոնց տեսակները բացատրած ենք Սիւնի էջերէն մեր յարգելի ընթերցողներուն, ժառանգաւորաց

Վարժարանը այս տարի ևս շարունակեց իր զործը: Ընծայարանի բաժնին համար այս տարի ունեցանք ուսուցչական զօրաւոր կազմ մը զոր կը զխառնէր Բէր Ամեն. Պատրիարք Սրբ. Հայրը: Ուսուցչական կազմին մէջ կը գտնուէին Գերշ. Տ. Ծնորհք Եպս. Գալուստեան, Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան, Գերշ. Տ. Հայկազուն Եպս. Արրահամեան, Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէան և Վեր. Էվըրի Անկլիքան երէցը և այլ աշխարհական ուսուցիչներու կարող փաղանդ մը:

Իբրև աւարտականներ, այս տարի ժառ. Վարժարանը և Ընծայարանը տուաւ մեր Ս. Եկեղեցիին չորս ընծայեալներ, որոնք ձեռնադրութեան շնորհը ընդունելով մտան կուսակրօն քահանայութեան կարգը, ծառայելու համար Աստուծոյ և Հայաստանեայց Եկեղեցւոյ: Անոնք իբրև զիտակից և պատրաստուած եկեղեցեականներ, կուգան իրենց թարմ ուժերով և զգօն լրջութեամբ աւելցնել Հայց. Եկեղեցւոյ ծառայողներու թիւը:

Ընդհանուր կրթական զործին առնչութեամբ, չորս նոր Արեղաններու մեր թիւին վրայ յաւելումը ինքնին ուրախալի երեւոյթ մըն է, վասնզի Ս. Աթոռոյս նեղ օրերուն մէջ մեծցած և հասակ առած, բազում զոհողութիւններու զինը եղող Արեղաները կը կոչուին ասպարէզի մը որուն զանազան մարզերու — կրթական, եկեղեցական, վարչական, ուսումնասիրական —, աշխատանքները առաջ պիտի տանին Աստուծոյ օգնութեամբ:



Ս. ԱԹՈՌՈՍՅ ՓԱՌ. ՎԱՐՃԱՐԱՆԸ

Ժառ. Վարժարանը այս տարի տուաւ նաև բարձրագոյն դասարանէն հինգ ընթացուարաններ, որոնցմէ երեքը իրենց մէջ Ս. Եկեղեցիին ծառայելու կոչումը զգալով, ստացան Սարկուազութեան աստիճան: Յառաջիկայ տարի պիտի կազմեն Ընծայարանի բաժնին Ա. դասարանը և եռամեայ շրջանէ մը ետք պիտի կոչուին կուսակրօն քահանայութեան:

Անվերապահօրէն կրնանք յայտարարել թէ նիւթական խնամք, ճիւղ, եռանդ շննայուեցան ժառ. Վարժարանին համար թէ վանական վարչութեան և թէ տեսչութեան կողմէ, բաղձալի արդիւնքի մը հասնելու համար: (Տե՛ս Տեղեկագիր ժառ. Վարժարանին):

Մեր ուսուցչական կազմը իր կարելի լաւագոյնը ըրաւ աշակերտները մեր նախահարց կրօնական բարձր ոյիին և հաւատքին

մէջ պահելու, միշտ մօտեցնելով և հաղորդ պահելով մեր մշակոյթին որպէսզի սնանկելով և լեցուելով, իրենց կարգին անոնք ևս կարենան քրիստոնէաբար և հայեցի դաստիարակութեամբ հաղորդ պահել ուրիշներ մեր արժէքներուն, որով կ'երաշխաւորուի մեր գոյութիւնը:

ՍՐԲՈՅ Թ.Ա.Ր.Գ.Մ.Ա.Ն.Չ.Ա.Յ Վ.Ա.Ր.Ժ.Ա.Ր.Ա.Ն.Ը

Այս տարուան կրթական մեր հունձքին մէջ նշանակելի պարագայ մըն է նաև Սրբոց Թարգմանչաց Վարժարանի երկրորդական բաժնի շրջանաւարտները: Հակառակ տասնամեակէ մը ի վեր Ս. Երկրին մէջ տիրող քաղաքական տագնապին, Ս. Աթոռոյս նիւթական անձկութեան և մեր ժողովուրդին տնտեսական նեղ պայմաններուն, հինգ տարիներ առաջ, Տնօրէն Ժողովոյ բարեհաճ կարգադրութեամբ և վարժարանիս սրտեռանդն և հոգեւին նուիրուած տեսչին ջանքերուն, կարելի եղած էր աւելցնել Թարգմանչաց Նախակրթարանին վրայ երկրորդական բաժին մը ևս որ ահաւասիկ, այս ուսումնական շրջանի աւարտին, կուտայ իր առաջին հունձքը — վեց շրջանաւարտներ. զիտակից, կորովի և ուսեալ տղաք, որոնք իրենց ազգին, հայրենիքին և եկեղեցիին սիրով լեցուած մեծ և զեղեցիկ նուէրներ են վարժարանիս միջոցաւ ազգէն ազգին ընծայուած: Իր պիւտճէն պատահական նուիրատուութիւններով հաւասարակշռող Հաստատութեան մը համար, որպիսին է Թարգմանչաց Վարժարանը, լուրջ պատասխանատուութեան խնդիր մըն է երեսուն որակաւոր ուսուցիչներու խումբ մը պահել. սակայն ապաւինած Աստուծոյ նախախնամութեան և ի սփիւռս աշխարհի ցրուած, ի մասնաւորի Ամերիկայի Միացեալ Նահանգներու կրթասէր հայ ժողովուրդի օժանդակութեան, սկսուած զեղեցիկ և զնահատելի այս զործը առաջ կը տարուի նուիրեալ և զոհողութեան ոգիով տոգորուած ուսուցիչներու օժանդակութեամբ: (Տե՛ս վարժարանիս տարեկան Տեղեկագիրը):

Նախակրթարանի բաժինէն ընթացաւարտ եղան 18 պատանիներ և պարմանուհիներ, որոնց մեծամասնութիւնը կ'անցնի յառաջիկայ տարի մեր Թարգմանչաց Վարժարանի երկրորդական բաժնին: Տեղւոյս այլ վարժարաններու տնօրէնութեանց իսկ վկայութեամբ կարճ ժամանակի մը ընթացքին մեր զըզըրոցը հաւասարեցաւ և այժմ կը մրցի այլ վարժարաններու հետ: Մեր աշակերտները մասնակցելով կրթական նախարարութենէն ճանչցուած Լոնտոնի համալսարանին *General Education Certificate*ի քննութիւններուն, յաջողութեամբ կ'անցընեն զայն:

Ս.Մ.Մ.Ա.Ն.Ի ՀԵԹՈՒՄԵԱՆ ԵՒ Ա.ՅԼ Վ.Ա.Ր.Ժ.Ա.Ր.Ա.Ն.ՆԵՐ

Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ ունինք մօտ 3000 հայեր որոնց զաւակներուն կրթութիւնը ևս ստանձնած է Ս. Աթոռը հովանաւորելով և օժանդակելով անոր ամէն կերպով: Վարժարանին տեսուչն է Ս. Ուխտիս Միաբանութեան անդամներէն տեղւոյն հոգեւոր հովիւը: Գժքախտաբար վարժարանին շէնքը արգիտական դպրոցի մը բոլոր տուեալները չի լրացներ, և տարուէ տարի աճող աշակերտութեան համար անբաւարար կուգայ: Այնուամենայնիւ այս վարժարանն ալ վերջին հնգամեակին օժտուած ըլլալով ուսուցչական որակաւոր կազմով մը աւարտեց ուսումնական շրջանը լաւագոյն արդիւնքներով, պահ մը մոռցնել տալով շէնքին անյարմարութիւնները:

Ամեն. Պատրիարք Սրբազանը, ինչպէս Երուսաղէմի մէջ, նոյնպէս և այս-

տեղ, անձամբ ներկայ եղաւ ամալերջի հանդէսին, և մրցանակաբաշխութիւնը կատարեց իր Հայրական օրհնութիւնները տալով 27 շրջանաւարտ սան-սանուհիներու:

Յիշեալ կրթարաններէն գատ, Ս. Աթոռս կը հովանաւորէ նաև մայրաքաղաքէն 30 քիլոմէթր հեռաւորութեան վրայ գտնուող Ռըսէյֆա գիւղին Ազգ. վարժարանը: Այս վարժարանն ալ անմիջական հսկողութեան ներքեւն է Ամմանի հոգեւոր հովիւին:

Այս տարի իրենց կրթական գործը շարունակեցին նաև Իսրայելի մեզոյց վարժարանները, Յոպպէի Ս. Գլխադիր ու Հայֆայի Ս. Եղիա ազգային ու սուֆնարանները: Վերոյիշեալ քաղաքներէն մեր ժողովուրդի արտագաղթը ու երթեւեկի դժուարութիւնները աչքի առջև ունենալով՝ կարելի է ըսել թէ այդոյց վարժարանները նոյն կենսունակութիւնը չունին այժմ, ինչ որ ունէին Պաղեստինի նախապատերազմեան շրջանին: Այնուամենայնիւ այստեղ եւս հնարաւորութեան սահմաններուն մէջ առաջ կը տարուին կրթական աշխատանքները Իսրայելի հոգեւոր հովուի տեսչութեամբ:

Համաշխարհային զոյգ պատերազմներու հետեւանքով առաջ եկած է քառասային վիճակ մը, ուր անխուսափելիօրէն կը տիրեն յոռետեսութեան, անհաւատութեան և անհանդուրժողութեան բնագոյնը: Որուն հետեւանքով դարերով ի պատուի եզոյց ու նուիրականացած բարոյական, հոգեկան արժէքներ կը խեղաթիւրուին ու կ'եղծուին: Զանազան յոռի ազդեցութիւններ իրենց աւերը կը գործեն նաև մեր ընկերութեան «փոքրիկ հօտին» մէջ, որուն առաջքը առնելու համար մեծ ու նուիրական դեր մը կատարելու կոչուած են մեր կրթական վառարանները: Հետեւաբար ցորենը որոմէն գատելու պայծառ աշխատանքն է որ պէտք է տանին հայ ուսուցիչները իրենց աշակերտներու մէջ ներարկելով առողջ կրթութեան կենսասնութիւնը, զգուշացնելով զանոնք յոռի ազդեցութիւններու թոյնէն և ապականութենէն: Հոգեկան առողջ և բարոյական ճշմարիտ սնունդ պէտք է ջամբուի մեր երիտասարդ սերունդին, վասնզի ամենէն աւելի այդ տարիքին է որ անոնք ատակ են ազդուելու և ծռելու փշոզ նոր հովերու առջև: Ս. Աթոռոյս հովանիին ներքև, խնկաբոյր մթնոլորտի մը մէջ մեր աշակերտները կը զարգանան Աւետարանի Լոյսին մէջ, եկեղեցու սիրով, քրիստոնէական առաքինութիւններով և հայրենիքին հանդէպ տածուած անկեղծ զգացումներով:

Կը հաւատանք թէ ամէն բան, յատկապէս մեր հայեցի նկարագրի ազնւագոյն գծերուն պահպանութիւնը կախում ունի նոր սերունդին առողջ դաստիարակութենէն: Եւ Ս. Աթոռը, արուած պայմաններու տակ, իր կարելին կ'ընէ նման կրթութիւն մը ջամբելու իր հովանիին ներքև զանուող վարժարաններու աշակերտներուն:

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՂՕԹՔ ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԽԱՂՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Աւթարհաբարի վերածուած: Կը կարդացուի վերափոխման օտին — խաղողօրհնէփի ատեն)

(Աւղղուած առ Հայր Աստուած)

Տէր Աստուած, Հայր անսկիզբ, անստեղծ և անմահ բնութիւն. դուն ինքնագոյ հոս և ոչինչէն գոյացուցիր բոլոր արարածները: Դուն ստեղծագործութեան երրորդ օրը հրամայեցիր որ երկիրը բուսցնէ զանազան պտղատու տունկեր և բոյսեր շնչաւոր և զգայական կենդանիներու պէտքին համար: Անոնց հետ՝ քեզմէ իր անունը ստացած դրախտին մէջ՝ վայելուչ ծառեր տնկեցիր բանական արարածներուս բնականութեան և վայելքին համար: Ասոնք օրհնեցիր, աստուածային խօսքիդ համաձայն, թէ՛ ատեսաւ Աստուած որ շատ բարի են և օրհնեց զանոնք Աստուած»:

Իսկ երբ մարդ մեղանչեց Քու պատուիրանիդ դէմ, արգիլեալ պտուղէն ուտելով, երկրի և անոր պտուղներուն վրայ Քու ըրած աստուածային օրհնութիւնդ անէծքի փոխեցիր, երբ Ազամին ըսիր. «երկիրը անիծեալ պիտի ըլլայ քու աշխատանքիդ համար»: Այսու արդար վճիռ մը տուիր. որովհետեւ երբ գլուխը կը մեռնի, անկարելի է որ անդամները կենդանի մնան. այնպէս ալ անկարելի էր որ զգալի արարածներուն գլուխը, մարդը, մեղքով մեռնելէ վերջ, իր ծառայութեան համար ստեղծուած բնութիւնը՝ Քու կենդանարար խօսքիդ օրհնութեան մէջ անփոփոխելի մնար:

Իսկ երբ Քու ծածկուած հայրական սէրդ յայտնեցիր մարդկային ցեղին, Քու Միածին Որդիդ զրկելով, որպէսզի իրբն ծաղկեալ գաւազան բղխի Յեսսէի արմատէն ըստ մարմնոյ, և բուսնի իրբն գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ անարատ կոյս

Մարիամէն, և իրբն կեանքի ու անմահութեան պտուղ տրուի մեր մահկանացու բընութեան, խաչին վրայ Քրիստոսով վերստին օրհնեցիր ամբողջ տիեզերքը, համաձայն Քու անսուտ խոստումիդ որ հաւատքի հօր Արարահամին տրուեցաւ, թէ՛ «Քու զաւակիդ մէջ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը»: Եթէ անէծքի դատապարտութիւնը տիրեց՝ թէ՛ ամէն ինչի վրայ իշխան կարգուած մարդուն և թէ՛ անոնց՝ որոնք իր իշխանութեան ներքեւ էին, ո՛րչափ ևս առաւել մարդկային բնութեան օրհնուելուն՝ նիւթական աշխարհն ալ հաղորդ պիտի ըլլար աստուածային օրհնութեանց: Ամենէն աւելի այդ օրհնութեան մեծագոյն շնորհին արժանացաւ խաղողը, որ Միածին Որդիիդ փերկական արեան նիւթը եղաւ, և որով զընուեցանք ու ազատեցանք մեղքի և մահուան ծառայութենէն: Խաղողի այս հիւթն էր որ խորհուրդի վերնատան մէջ Իր ձեռքն առնելով օրհնեց ըսելով. «Այս իմ արիւնս է»: Այս օրհնութեամբ խաղողի սեռին պատկանողները, այսինքն բոլոր պտուղները, ընդունեցան կառարեալ օրհնութիւն:

Եւ արդ, Տէր, այն օրհնութեամբ որով օրհնեցիր՝ Քու կողմէդ բարի ստեղծուած արարածները, թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ ստեղծագործութեանդ ատեն, օրհնէ՛ նաև այժմ խաղողի այս ողկոյզները որոնք Քեզի կը նուիրուին իրբն տարուան առաջին պըտուղները: Քանզի օրէնք դրիր Իսրայելի տոհմին, Մովսէսի միջոցաւ, որ բոլոր պըտղաբերներուն առաջին պտուղը Քեզի ընծայեն վկայութեան Խորանին մէջ որպէսզի մասնաւոր այդ ընծաներով բոլոր պտուղներն ալ ստանան Քու օրհնութիւնդ: Այն-

պէս ալ այս նուիրուած պտուղին խառնէ և միացուր Քու աստուածային և հոգեւոր օրհնութիւնդ, որպէսզի այս նիւթական պտուղը ճաշակելով, Քու օրհնութեանդ աննիւթ շնորհը միանայ ասկէ ճաշակողներու հոգիներուն հետ, ընդունելով այս ճաշակումին հետ մեղքերէ մաքրութիւն և թողութիւն. ասով նաև արժանի ըլլանք ճաշակել կեանքի ծառին պտուղէն զոր Քերովքէներու դասուն հրամայեցիր պահել կրակէ սուրով: Այս ճաշակումով անմահացած և անմահներու խումբերուն հետ միշտ փառաւորենք զՔեզ Որդիին հետ և ամենասուրբ Հոգիովդ, այժմ, և միշտ, և յաւիտեանս. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Ուղղուած առ Որդին Ասուած)

Օրհնեալ ես Որդի, Հօր Բանը, առաջին լոյսին անձառելի ճառագայթը, աներեւոյթ Աստուծոյ կերպարանքը և պատկերը, գոյակից Անոր հետ, և արարչակից Հօր՝ արարածներու ստեղծումին ատեն: Դուն խօսքով ըսիր՝ և եղան. հրամայեցիր՝ և հաստատուեցան. որովհետև Քու մտածելդ և կամենալդ արդէն կատարուած գործ է:

Դուն, ով Տէր, ծառատունկերէն ամենէն տկարը, որթատունկը, բարձրագոյն ծառերէն աւելի զօրաւոր ըրիր, անոր պտուղին օգտակարութեան համար: Զայն Քեզի, Դերագոյնիդ, նմանցնելով պատուեցիր, որովհետև զՔեզ որթատունկ անուանեցիր, իսկ սիրով Քեզի կապուածները ճիւղ կոչեցիր, Հայրդ՝ մշակ, որպէսզի արդարութեան պտուղ բերողները սրբէ, յօգողներու պէս, իսկ անպտուղները կտրէ նետէ իբրև նիւթ յաւիտեանական կրակի:

Մարգարէներով գինին տրտմութեան փարատիչ՝ և ուրախութեան պատճառ ցոյց տուիր. որովհետև «գինին կ'ուրախացնէ» ըսաւ ըստ մարմնոյ քու Հայրդ, Դաւիթ. իսկ անոր որդին Սողոմոն, կը հրահանգէ որ տրտմութեան մէջ եղողներուն գինի տրուի, զոր Դուն արդարև տուիր Վերնատան մէջ իբրև ուրախարար կրկին բաժակ Քու Քաւիչ արիւնդ, և Հոգիին իմաստութիւնը:

Այս խորհուրդը նշանակեցիր նաև Քու օրինակդ եղող Մելքիսեղեկով, երբ սա հաց


ու գինի մատոյց Աբրահամ նահապետին, նոյնը յայտնեցիր Նոյով, որ տրտմած էր աշխարհ ջրհեղեղով ջնջուած ըլլալուն համար, տալով ասիկա իրեն որպէս մխիթարութիւն. քանզի նոյ տնկեց առաջին այգին, ինչպէս կ'ըսէ Ս. Գիրքը, և խմեց գինին և զմայլեցաւ արդարը:

Գինին թէև Քեզմէ իբրև բարի պարգև տրուեցաւ, սակայն զայն յիմարարար գործածողները՝ արբեցութեամբ զայն իրենց համար չարիքի աղբիւրի կը վերածեն:


Եւ արդ, Տէր, օրհնէ Քու անունիդ փառքի տաճարին ընծայուած այս խաղողները, ինչպէս օրհնեցիր ողկոյցներու մէջ գտնուած ճիւղ: Շնորհէ, օրհնեալ այս պտուղէն ճաշակողին մեղաց թողութիւն և առողջութիւն հոգւոյ և մարմնոյ: Տուր ասկէ հաւատով ճաշակողին եղեմական Դրախտ անմահական պտուղէն ճաշակել, Դրախտ ժառանգող աւազակին պէս:

Օրհնէ, Տէր, այս նոր պտուղի նուիրատուները և այս անցաւոր պտուղի փոխարէն տուր անոնց անմահ կեանքը ընդունելու վայելքը:

Օրհնէ, Տէր, այն որթատունկերը և այգիները, որոնցմէ կտրուեցան օրհնութեան համար բերուած այս ողկոյցները և նուիրուեցան սուրբ եկեղեցիի. ըրէ զանոնք առատաբերք և բազմաբեղուն՝ պարարտ և բարի երկրի նման: Առանց փորձանքի պահէ, Տէր, արտերն ու այգեստանները, և հեռու պահէ զանոնք ամէն տեսակ վնասակար պատահարներէ որոնք վերէն կ'իջնեն մեր մեղքերուն համար. կարկուտէ, սառնամանիքէ, խորշակահար հովերէ, վնասակար ճճիներէ, որպէսզի վայելելով Քու նիւթական բարիքներիդ այս աշխարհին մէջ, արժանի ըլլանք Քեզի հետ ուտել և խմել Քու Հօրդ արքայութեան սեղանին վրայ ամենալեցուն որթատունկիդ բերքէն, համաձայն Քեզմէ տրուած անսուտ խոստումին: Ի պատիւ և ի փառս համագոյ երրորդութեանդ, Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգիիդ, որուն վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ամէն:



“ԵԿԱՅՔ ԶԻՆԵՍՅՈՒՔ ՍՈՒՐԲ ԶԽՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՅ”



«Տեղիդ այդ լիցի Տաճար Աստուծոյ եւ Տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, եւ Աթոռ Քահանայապետութեանն»:

Այսպէս խօսեցաւ Աստուած «երանելի Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի»:

«Եւ լոյս հոսեալ ի վերուստ ի վայր, մինչեւ յերկիր հասանէր»:

Եւ ահա Ինքը Միածինը, «ի ձեռին իւրում ուռն մի մեծ ոսկի, սլացեալ խոյացեալ գայր. ըստ նմանութեան արագաթեւ արծուոյ. եւ եկն էջ եհաս մինչեւ մօտ ի յատակս երկրիս, ի շինամէջ քաղաքին եւ քաղխեաց զթանծութիւն լայնատարած գետնոյն»:

Եւ «կանգնեցաւ սիւնն հրեղէն՝ Կաթողիկէ Եկեղեցի. որ ժողովէ զամենայն ժողովուրդն ի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ թելոց իւրոց»:

Սիրելի հաւատացեալ հայ ժողովուրդ, տասնեւվեց փոթորկալից դարերու խորքէն կը յառնէ այսօր մեր հոգիներուն մէջ՝ ըսքանչելի հրաշք տեսիլքը Ա. Գրիգոր Լուսաւորչի:

Երազ եւ իրականութիւն դարերու հետ կը հիւսուին, երազ եւ իրականութիւն դարերու հետ կը բարձրանան, եւ դարերու ծնունդ կուտան՝ հայոց հաւատքի փառքը երգելով:

Այս հաւատքի փառքով լուսաւորուած, մենք կանք ահա այստեղ, տեսնելու համար մեր սրտերու Տաճար Ա. Էջմիածինը: Այս է, սիրելիք, Տաճարը Աստուծոյ եւ Տունը աղօթքի՝ համայն հայ հաւատացեալներուն, եւ Աթոռը ամենայն հայոց Քահանայապետութեան:

Այսօր, Տէրը եւ Փրկիչը մեր՝ Միածին

Եւ ասէ Աստուած. «Հեղից յկոյոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարէացիս ուսեմք ձեր եւ դսեմք ձեր եւ ձեմք ձեր երազովք երազեցին, եւ երխատարգ ձեր սեփիս սեցեց: ... Եւ քաց ճշամս յերկինս ի վեր եւ ճշամս յերկիր ի խոճարճ՝ արիւն եւ հօւր եւ մրրիկ ձխոյ»: ԾՈՎԷԼ, Բ. 28, 30

Որդին Աստուծոյ, խորհուրդներու աշխարհի մը բարձունքներէն, Իր կենարար հայացքը կ'ուղղէ դէպի Իր իսկ հիմնած այս Ա. Տաճարը եւ աշխարհը Հայաստանեայց:

Այսօր, մեր բոլոր սուրբերը, հայոց պատմութեան ոգիով կեանք առած, մեզ հետ ձնրադիր, կ'աղօթեն անծայն եւ իջման հրաշքին փառքը կ'օրհնեցան:

Այսօր, Մեր բոլոր զաւակները հաւատացեալ, ուր որ ալ գտնուին անոնք աշխարհի ճամբաներուն վրայ, իրենց եկեղեցիներու կամարներուն ներքեւ, իջման տեսիլքը կը տեսնեն, Էջմիածինը կ'երազեն եւ իրենց երազով ոսկի՝ կը միանան մեզի:

Եկէք, հարազատներ Մեր, բոլոր ծագերէն, եկէք, մօտեցէք, երկրպագեցէք իջման հրաշքին՝ այս Ա. Սեղանին առաջ, քանզի հրաշակերտուած այս հրաշք Տաճարով, ժողովուրդը մեր հրաշքով ապրեցաւ դարեր ու դարեր...:

Այս է հրաշքը հայոց հաւատքին:

Հայաստանեայց Առաքելական Ա. Եկեղեցին այսօր կը տօնէ իր Մայր Աթոռ Կաթողիկէ Ա. Էջմիածնի հիմնադրութեան տարեդարձը: Հազար վեց հարիւր յիսուն եւ չորս տարիներ անցած են այն սուրբ օրերէն, երբ հայ ժողովուրդը վերածնաւ Միածնի իջման լոյսի փայլատակումով: Քրիստոսի սիրով արգասաւորեցաւ հայ հոգին եւ բացուեցաւ ճշմարիտ զիրքը հայոց պատմութեան: Մէկ դար իսկ չանցած, Ա. Էջմիածինը դարձաւ ամրակուռ բերդ մը հաւատքի, ան կազմակերպեց Հայաստանեայց Ա. Եկեղեցին, միաւորեց հայուն հոգին, ներքին ուժ եւ իմաստ տուաւ անոր, անխախտ ու ապահով նեցուկ եղաւ հայ պետութեան

Քարոզ խօսուած Ա. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Կարաղիկոսի կողմէ, Կարաղիկէ Սրբոյ Էջմիածնի տօնին օրը, Կիրակի 23 Յունիս 1957ին:

եւ դրօշակիրը Մայր երկրի անկախութեան: Եւ ուրիշ հրաշքով մը, Ս. Մեսրոպի ձեռամբ, տուաւ մեր ժողովուրդին զիր ու դպրութիւն, եւ Ս. Գրքի թարգմանութեամբ՝ հիմը դրաւ հայ մատենագրութեան:

Ս. Էջմիածինը վառեց կրակը հայ մշակոյթին:

Հայ ժողովուրդը ծնաւ ու ապրեցաւ, կ'ապրի ու պիտի ապրի՝ լուսաշող ծիածանովը Գրիգոր եւ Մեսրոպ սուրբ լուսաւորիչներու երկնառաք տեսիլքներուն: Այդ տեսիլքներով Ս. Էջմիածինը «Եղիցի լոյս»ն է հայոց պատմութեան:

Ս. Էջմիածինը անոնց լոյսերով դարեր շարունակ կերտեց Եղեմը մեր Ազգի մըտքին, հոգիին:

Հայ ժողովուրդը թերեւս միակ ժողովուրդն է, որ իր իսկութիւնը գտաւ, ինքզինքը իրականացուց եւ իր առաւելագոյնը տուաւ՝ Քրիստոսի սիրոյ նոր աշխարհին մէջ:

Հելլենները անմահացան իրենց փառապանծ Պերիկլեսեան դարով, Քրիստոսէ հինգ դարեր առաջ. ուրիշ ժողովուրդներ իրենց վերածնունդը կերտեցին Քրիստոսէ բազում դարեր վերջ:

Հայոց մէջ, սակայն, ոսկեայ վերածնունդը՝ սբանչելի հանդիպումով եղաւ մարդու եւ Աստուծոյ միատեղ ծնունդին:

Քրիստոնէութիւնը իջաւ հրեղէն շաղախի մը նման հայ ժողովրդի նոր ընծիւղող հոգիին վրայ, ճիշդ այն պահուն, երբ այդ հոգին, տակաւին փափուկ կաղապարներու մէջ՝ իր ձեւը կ'առնէր:

Ս. Էջմիածինը այն մայր հնոցը եղաւ, ուր դարբնուեցան անճառ ձեւերը հայոց հանճարին եւ այն զանճարանը, ուր մեկտեղուեցան այդ հանճարի գոհարները լոյս:

Ս. Էջմիածինը մեր Սինա լեռն է, մեր Ակրոպոլը, մեր Ս. Պետրոսը:

Էջմիածինը սակայն անցեալ չէ միայն. ան է նաեւ ներկայ եւ մեր ապագան: Կենդանի է ան ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ կը բաշխուի ու չի նուազիր. ինչքան բաշխուի, այնքան կը շատանայ, ինչքան լոյս սփռէ՝ այնքան կը շողայ: Դարերը կու

զան, դարերը կ'անցնին, ան կը բարձրանայ, կը լուսաւորէ ու կը ներշնչէ միշտ. կեանք տալով՝ կ'ապրի . . .

Մովբեր, ովկիաններ կամ օտար ձեռքեր կրնան մեզ բաժնել, բայց Էջմիածինը միշտ մօտ է մեզի: Եւ ինչքան հեռու, այնքան մերձ է ան, այնքան կը դառնայ խորհուրդ եւ հրաշք, երազ եւ իսկութիւն, յոյս եւ ստուգութիւն:

Եւ ահա մենք, այսօրուաններս, կանգնած աստուածակառոյց այս Ս. Տաճարի սալերուն վրայ, յափշտակուած կը դիտենք՝ մեր նախնեաց հաւատքի ու սիրոյ լոյսերով յորինուած կամարներն այս սուրբ: Մեր հոգիներու բոլոր լարերով կը հպինք այս հազարամեայ ծանր քարերուն, կը շնչենք խորունկ՝ մթնոլորտին մէջ այս խորհուրդներով լեցուն: Անիմանալի սարսուռ մը քաղցր եւ այրող, կը փոթորկէ մեր էութիւնը ամբողջ եւ կը փոխադրուինք տարբեր աշխարհ մը՝ խոր իմաստներու, իրաւարժէքներու, անկորնչելի գեղեցկութիւններու:

Ս. Էջմիածնի սիրովը վառուած, կանք ահա այստեղ, ու կը մնանք այսպէս:

«Հերթը մի պահ մերն է հիմա», — պիտի ըսեր մեծ բանաստեղծը: Եւ անցնելէ առաջ այս անցաւոր կեանքի հովիտէն, կ'ուզենք քար մը եւս աւելցնել այս բազմադարեան քարերուն վրայ: Կ'ուզենք տող մը եւս շարել մեր երկաթագիր մագաղաթներուն մէջ եւ պուտ մը լոյս եւս կաթեցնել կ'ուզենք Ս. Լուսաւորչի անմար կանթեղին մէջ: Մենք ներկայ ենք այստեղ մեր ժողովրդի կեանքին, սրտին մէջ, Արարատի փէշերուն, Իջման Վէմին վրայ: Եւ նոր կեանք առած կ'ապրի Էջմիածինը մեր հոգիներէն ներս: Ան կը խոկայ եւ կ'որոնէ, ան կը գործէ, եւ միշտ կը յուսայ եւ լուս կ'աղօթէ . . .

Արդ, հայ ժողովուրդ, «զգոյշ լեր աւանդիդ, որ բեզդ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»: Մնացիր հաւատարիմ բու սուրբ հաւատքիդ, բու մայրենի քաղցրահոս լեզուիդ, բու սրբութիւններուդ, բու մշակոյթիդ լոյս արժէքներուն, վերածնած բու Մայր Հայրենիքիդ եւ ամենասուրբ Ս. Էջմիածնիդ:

Լուսաւորուած եւ զօրութեամբ լեցուած՝ Փրկչի իջման խորհրդով եւ Օշականի Մեծ Մուրբին լոյսով, յայտարարեմք մենք բոլորս անխտիր, որ հայ անունը կը կրենք արդար պարծանքով՝ Մայր Հայրենիքէն ներս, թէ ի սփիւռս աշխարհի ցրուած բեկորներ, ուխտներ շէնցնել, ուխտներ ծաղկեցնել եւ փառաւորել՝ մեր յաւերժութեան կենդանի վկան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ամենայն հայոց:

«Եղիցի, եղիցի եւ եղիցի»:

Եւ ամուր է Մեր համոզումը, թէ այս ուխտը՝ իրաւ ապրումն է համայն հայ ժողովրդին: Չկայ ճշմարիտ հայ, որ չդաւանի Ս. Էջմիածինը. չկայ ճշմարիտ հայ, որ բաժանուած ըլլայ իր Մայր Աթոռէն: Ս. Էջմիածինէն բաժանուած չենք նկատեր Մենք հայ աւետարանական հարազատները Մեր, եւ ոչ իսկ անոնք, որոնք իրենց անունը կապած են Հռոմին:

Իսկ անդին, Անթիլիասի ափերուն, եթէ դէպի անջատում, դէպի հերձում ընթացողներ կան, միշտ յուսով ենք Մենք, թէ կը վերադառնան Հայ Եկեղեցւոյ սիրոյ միութեան մէջ, Կիլիկեան Աթոռի օրինապահ Միաբանութեան եւ ժողովրդեան կողքին, ընդհանուր հաշտութեամբ:

Ամէն բանէ վեր, Ս. Էջմիածինը կը միացնէ գմբզ բոլորս՝ երէկ եւ այսօր, միշտ եւ յաւիտեան:

Սիրելի ժողովուրդ, յայտնի է բոլորիդ, մանաւանդ ձեզ՝ հայաստանցիներ, թէ մեր օրերուն Ս. Էջմիածինը նոր կեանքի սեմին՝ կը գտնուի լուսաւոր հորիզոնի առաջ: Ահա բարի են ժամանակները եւ յուսադրիչ բոլոր նշանները: Մեր կողքին է մեր ժողովուրդը. Մեզ նեցուկ է մեր Հայրենի պետութիւնը. Մեզ օգնութեան ձեռք կ'երկարեն սփիւռքի մեր հարազատ զաւակ-

ները: Կը զգանք, կը տեսնենք, թէ բարի է այդ ձեռքը եւ առատաբաշխ:

Եւ այս օրերուն մեր կեանքի ճամբան առաւել կը պայծառանայ՝ յաւէտ անմոռաց երջանկայիշատակ Դալուստ Կիւլպէնկեանի թողած աւանդի կենսագործումով:

Թող աշխարհ գիտնայ, թէ Մեծ Բարերարի հոգւոյ պարգեւով, հիմնովին եւ ամբողջապէս պիտի վերաշինուի՝ բազմադարեան այս Ս. Աթոռը իր բոլոր սրբավայրերով, իր բոլոր հաստատութիւններով:

Քրիստոնէութեան սիւն Ս. Էջմիածնի վերաշինութիւնը Մեր կեանքի նպատակն իսկ է:

Երազը անգամ մը եւս իրականութիւն կը դառնայ:

Ո՛վ հոգեւոր Մայր մեր՝ Դուն Ս. Էջմիածին, այսօր, այս սուրբ աղօթքի պահուն, երբ Քեզ կ'երգենք, կը փառաւորենք սիրով անարատ, մենք՝ զաւակներդ եւ ծառաներդ, հաւատքով լեցուն, անգամ մըն ալ կ'ուխտենք Քեզ պայծառացնել, Քեզ ծաղիկ դարձնել, Քեզ ուրախացնել, որպէսզի Քեզմով Աստուած ընդ մեզ մնայ եւ մենք՝ ընդ Աստուծոյ:

«Պարծանք զօրութեանց մերոց Դու ես եւ ի կամս Քո՝ բարձր եղիցի եղջիւր մեր» (Սաղմ. 22. 18):

Արդ, Ազգ Մեր սիրելի, ժողովուրդ հայոց, «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Ողջոյն եւ մաղթանք եւ բիւր օրհնութիւն ձեզ բոլորիդ, հարազատներ Մեր, Միածնաէջ Մայր Տաճարէն ամենայն հայոց:

«Շնորհք եւ զօրութիւն Միածնի Որդւոյն Աստուծոյ մերոյ եղիցին ընդ ձեզ: Ամէն»:

LA PROFUNDIS

Ա.

I

Երեկ էր դեռ ... երե՞կ էր թէ դարեր առաջ
 ես կէս մը փուն ու կէս մ'արթուն մօրքս գիրկին,
 Լուսնակ փութիկն վերէն, ինչպէս խոտը մէկ աչք,
 Կը նայէր վար կարօսագին:

Ու կը հօտէր, կը վարարէր գետը կեանքին,
 Դուռին առջեւ ու տունէն ներս, փողոցին մէջ,
 Խաղով, երգով, աշխատանքով երանգագին,
 Ու կը թրէր խնճոյքն անվերջ:

Երեկ էր դեռ ... բայց անցեր է կեանքն այդ անդարձ,
 Բայց անցեր են անոնք բոլոր որ հոն իմ շուրջն
 էին երբեմն. զօդուած սիրով պարզ, աննախանձ ...
 Իրա՞ւ էր այդ թէ ոչ անուրջ:

Մտացուրթեան սուգուեր ամէնքն անդունդն ի վար,
 Կարծես անցած չըլլային այս կեանքին մէջէն,
 Եւ անուններն իսկ շատերուն մոռցած եմ ա՛լ —
 Բառեր՝ ջնջուած գիրքի մ'էջէն:

II

Պիտի երբեք ա՛լ չըզառնան օրերն անցեալ,
 Չը հանդիպինք պիտի այլեւս դէմքերուն հին,
 Ու կարօքը միայն, ինչպէս հուր անըսպառ,
 Պիտի մընայ մեզի բաժին:

Ուրեմըն ա՞յս է գիրը խեղճ ադամօրդուն —
 Բանալ աչքերն իր արեւուն գեղեցկուրթեան,
 Ի զուր փնտռել իմաստութեան ակը ... համբուն՝
 Իյնալ վի՞հը մտացուրթեան:

Եւ իր նիզէն իրեն ոչի՞նչ պիտի մընայ,
 Պիտի ցնդի՞ Այնրօքայնի մ'միտը վըսեմ,
 Շէյքսպիրի սիրքը պիտի անհետանա՞յ ...
 Վերջն հանճարին ա՞յս է նըսեմ:

Տիւ ու գիւեր պիտի իրա՞ր յաջորդեն միտ,
 Ու ձըմեռէն յետոյ գարնանը հարսնանայ,
 Եւ խնդութեան պիտ' անպայման յաջորդէ վի՞տսն...
 Ոչի՞նչ պիտի նոյնը մընայ:

Պիտի դառնա՞նք որ մ'անպայման մեր սարրերուն,
 Ու չունենա՞նք այլեւս բընաւ Երազ ու Սէր,
 Պիտ' չըբախծի՞նք, մեր նայուածքը ուղղած հեռուն,
 Ու չըսպասե՞նք ալ անհամբեր

'Ներկայութեան անոր որ որ մը պիտի գար,
 Լեցնել մեր սիրսը անպատում երջանկութեամբ,
 Պիտի ըլլար մեր երկինքի արեւ պայծառ,
 Յըրեր ամէն մտուտ եւ ամպ:

III

Բայց ծիւ - ծաղկին մէջ պիտ' դառնանք կեանքին նորէն,
 Վերընձիւղին սերմերուն մէջ, հողին ներքեւ,
 Պապը պիտի իր բռունիկին մէջ օրօրեն,
 Ու հոսի կեանքը հեւ ի հեւ:

Հազար ձեռով վերադառնանք պիտի նորէն.
 Նիւթէն - ոյծէն ոչինչ պիտի անէանայ.
 Իբրեւ արցունք պիտի տեղանք մենք ամպերէն,
 Ու հովին մէջ պիտի մընայ

Հառաչն ամէն մէկ անցորդին կարօտակէզ...
 Սիրսը մարդուն պիտի ծըլի, ծաղիկ բանայ,
 Ու Սէրն անոր ծիածանի կամար ինչպէս,
 Միջոցին մէջ յաւերժանայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ՆԱՅԻՐԵԱՆ ԴԱԼԱՐ ԲԱՐԴԻ

Նազում ես ու շորորում զմրուխտէ քո շորերում,
Շուք արած ճամբի վրայ մանկութեան կանաչ արտի,
Քո կանչը զնզում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Դու հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Ս:խ, ասես խարոյկ լինես բռնկուած կանաչ բոցով,
Ես հեռուից քեզ եմ գգւում կարօտով կրակ սրտի,
Լցնում ես դաշտերն ամէն հարազատ քո խշշոցով,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Իմ արտոյտ մանուկն ահա խաղում է քո շուաքում,
Քո փառքին երգ է շրջում շրթերով կոկոն վարդի.
Ջով արա նրա կեանքին, հօր նման գգուիւր անքուն,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց գատ,
Քեզ նման կանաչ կեանքով քեզ համար ելած մարտի,
Կը մեռնեմ, միայն թէ դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նայիրեան դալար բարդի:

* * *

Կ Ա Կ Ա Չ

Իրար հազիւ ճանաչելով,
Հեռուից - հեռու հառաչելով
Հայոց սարերն իրար ասին.
— Ե՞րբ կը ծաղկենք մենք միասին:
Իրար ասին
Ու Նայեցին աչքերով թաց՝
Վարսը փետտած, արիւնտուած
Մայր Արաքսին:
Եւ մայրական խորին գուժով
Արաքսն ասաց.
— Շուտով, շուտով...
Տարիներ են գալիս - գնում,
Եւ իր խօսքն է դեռ միշտ կրկնում
Մայր Արաքսը խուլ որոտով.
— Շուտով, շուտով...

Ասում են թէ՛ հովը մի օր
Հարցմունք արաւ կակաչին.
— Դու ինչո՞ւ ես այդքան կարմիր,
Այդ ի՞նչ սեւ է քո միջին:

Կակաչն ասաւ. — ուրախ էի,
Թերթերս էին ըսպիտակ,
Իողջողում էր սիրտս սիրով
Գարնան շուշան ամպի տակ:

Մի վերաւոր եղնիկ անցաւ,
Արիւնն ընկաւ իմ շրթին,
Եւ սգաւոր նրա սրտի
Սեւը մնաց իմ սրտին:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ



ՊԵՏՐԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՊ ԱՐԾԱԿՈՒՆԻ

Գ Լ ՈՒ Խ Ծ Ա.

ՊԱՊ ԻՆՔՆԻՇԽԱՆ

Նոյնը աղքատանոցները: Մուլութիւնը, առ հասարակ, մարդ արարածի հեշտասէր բնաւորութեան համար մասնաւոր հրապոյր մը ունենալուն — (մտնալու չենք որ ճակատի քրտինքով հաց ճարելը որպէս ծանր պատիժ տրուեցաւ Ադամին և իր սերունդին) — աղքատանոցներն ալ լիցուեցան արագօրէն և շատ զիւրուիեամբ:

Ներսէսի այս հիմնարկութիւնները և մանաւանդ անսովոր բազմամարդութիւնը կը ստեղծէին կացութիւն մը, որ պետական գոնաբաւ լուծելի հարց մը պիտի ըլլար:

Պապ թագաւոր բողոքեց Ներսէսին, և պահանջեց նուազեցնել այն հաստատութիւններու թիւը ու ցրուել անոնց բնակիչները: Այնպէս ինչպէս ատենօք Ներսէս բողոքած էր Արշակին և պահանջած որ թագաւորը վերջ տայ Արշակաւան քաղաքին և ատոր բնակիչները ետ իրենց տեղերը զրկէ:

Պապը յիշած ըլլալու էր Վաղէս կայսեր արմատական քայլերը բազմամարդ վանքերու հանդէպ: Մանաւանդ Եզրիպտոս: Նիթրիա լիբան վրայի մեծ վանքին մէջ հինգ հազար վանականներ կ'ապրէին: Սր. Յերենիմոս, իր Մարտէն Իշտիտէ զրքին մէջ՝ Ոքսիրհինկոս քաղաքի մասին գրելուն, կը պատմէ թէ քաղաքին եպիսկոպոսը յայտներ է որ իր հեղինակութեան տակ կը զբտնուէին 10,000 վանական և 20,000 կոյսեր:

Վաղէս կայսրը իր Արեւելքի կոմսին հրաման զրկեց որ ան ստիպէ վանք ապաստանած ծոյլերը կամ ձգեն իրենց ունեցածները, և կամ քաշաքացիի յատուկ պարտականութիւնները կատարեն⁽¹⁴⁾:

Պապի պահանջքին դէմ ընդվզեցաւ

Ներսէս, և կրկնապատկուած եռանդով շարունակեց՝ Պապի Հայաստան գալէն վերջ իր սկսած գործունէութիւնը, կրօնական հաստատութիւններէն աւերուածները վերաշինել, նորերը կառուցանել, և ամէն տեղ տեսուչ — եպիսկոպոսներ կարգել⁽¹⁵⁾:

Թագաւորը անզորուելի մնաց և պնդեց իր պահանջքին վրայ:

Ներսէս, զայրացած, ըրաւ այն ինչ որ իր մեծ հայրը Յուսիկ կաթողիկոս ըրած էր Տիրան թագաւորին: Ներսէս արգիլեց Պապ թագաւորին եկեղեցի մուտքը⁽¹⁶⁾:

Պապ, սակայն, այս պարագային, ըզգուշացաւ օրինակելու իր մեծ հայրը Տիրան:

3. ՆԵՐՍԵՍԻ ՄԱՂԸ

Պայքարը կը մտնէր իր վճռական փուլին: Մէկ կողմը, կաթողիկոսը, իր համբաւի գագաթնակէտին: Բացարձակապէս վստահ հաւատարմութեանը այն եկեղեցական և վանական բազմութեան, որուն կազմակերպման և յարատեւութեան համար տարիներու ճիզը թափած էր:

Միւս կողմը, երիտասարդ թագաւորը: Իր արքայական հեղինակութեան համար չափազանց նախանձախնդիր, աննահանջ հաստատամտութեամբ որոշած իր ծրագրի գործադրման դէմ յարուցուած խռնչողոտները վերցնել: Չձգել որ կաթողիկոսն ալ, Մուշեղի օրինակին հետեւելով, խնամակալական հովեր առած, թագաւորին կարենայ ըսել թէ ինչ կրնայ ընել, և ինչ չկրնար:

Կաթողիկոսի և իր հետեւորդներու տե-

(14) Gibbon, vol. 3, p. 27.

(15) Փաւստոս, Ե. 21:
(16) » » Ե. 23:

սակէտէն, վանքերու, կուսանոցներու և աղքատանոցներու փակումը, կամ անոնց թուին նուազումը, ինչպէս նաև եկեղեցւոց պատկան կալուածներէն մէկ մասին արքունի տնօրինութեան վերադարձուիլը, ուրիշ բան չէր այլ ամբարիշտ, անքրիստոնաւփայել արարք մը, որուն պէտք է ընդդիմանային Քրիստոսի ծառաները:

Թագաւորի համար, վերոյիշեալ հաստատութիւնները պետութեան և հայ աշխարհի բարօրութիւնը պիտի վտանգէին եթէ շարունակուէին: Հայաստանի բանակը կը զրկուէր բազմահազար զինուորներէ, որոնք փոխանակ իրենց քաղաքացիական պարտականութիւնը կատարելով՝ բանակի մէջ ըլլալու, վանքերու և աղքատանոցներու մէջ ապաստանած, բեռ կ'ըլլային համայնքին: Պետական գանձն ալ անպակն կորուստ կ'ունենար, որովհետև այդ բազմաթիւ անձեր հարկէ ազատ կը մնային, և ընդարձակ հողերէ եկամուտ կամ տուրք չէր ստացուեր: Իսկ կուսանոցները պատճառ պիտի ըլլային ամուսնութիւններու հետզհետէ նուազելուն և այդպիսով երկրի ապագային համար աղէտ պատրաստէին: Պահ մը անտես աննելով ընտանեկան ողբերգութիւնները, ինչպէս նաև գայթակղութիւնները, որ անօրէն մարդիկ, չարամիտ ասորժակներով, առեւանգումի արկածախնդրութիւններու ետևէ ըլլային, հոգ չէ թէ կաթողիկոսը պարիսպներով պատած էր կուսանոցները:

Յանկարծ դէպք մը ճգնաժամային բնոյթ տուաւ սաստկացող պայքարին:

Ներսէս կաթողիկոս անակնկալօրէն մեռաւ 372 թուականին:

Հայրապետը դեռ վաթսուն տարեկան չկար, և որովհետև մահը յանկարծական եղած էր, ու Արքային տուած խնճոյքի մը ատեն, եկեղեցական դասը և Պապի հակառակորդները անմիջապէս յայտարարեցին թէ Ներսէս կաթողիկոս զոհ գացած էր անարգ դաւի մը, և Պապն է որ թոյն տալով մեռցուցած էր մեծ Հայրապետը:

Թագաւորի և կաթողիկոսի հաշտութեան փորձերէն միոյն ատենն էր: Պապ եկեղեցաց գաւառի Խախ աւանին մէջ գլտնուող իր ապարանքին մէջ ճաշկերոյթ սարքած էր, և հոն, աւագանիի խումբ ներկայութեան, Ներսէս կը մեռնէր:

Ինչպէս յաճախ կը պատահի նման պարագաներուն, երբ պայքարը իր փոթորկալի ընթացքը կը շարունակէ և կրքերը բորբոքած են, առաջնորդի մը յանկարծական մահը գրեթէ միշտ իր կողմնակիցներուն կողմէ կը մեկնաբանուի որպէս արդիւնք հակառակորդի դաւադրական յաջող մէկ մահափորձին: Այսպէս ալ եկեղեցականներ և վանականներ հրապարակը աղմկեցին, ամբաստանելով Պապ թագաւորը:

Փաւստոսն ալ մեծ ասորժակով տրձագանդ կ'ըլլար այս ամբաստանութեան, և ճոխացնելով կը պատմէր սարսափելի դաւը: Նկատելով Փաւստոսի անսահման պաշտամունքը Ներսէս կաթողիկոսին, և նոյնքան անչափելի ատելութիւնը Պապ թագաւորի հանդէպ, եթէ նման ամբաստանութիւններ չ'ըլլային իսկ, Փաւստոս, իր երեւակայութիւնը սրած, պիտի հիւսէր թունաւոր բաժակի պատմութիւնը, որ թագաւորը կը մատուցանէր կաթողիկոսին, մեծամեծ իշխաններու ներկայութեան⁽¹⁾:

Տանք Փաւստոսի պատմածը:

Պապ թագաւոր միտքը դրած էր Աստուծոյ մեծ քահանայապետ Ներսէսին ըսպանել: Բայց այս բանը յայտնապէս չէր կրնար ընել: Աւստի կեղծաւորաբար այնպէս ձևացուց թէ ուղղութեան եկեր է և Ներսէսին աղաչեց որ իրեն ապաշխարանք տայ: Կաթողիկոսը հրաւիրեց ընթրիքի՝ Խնդրեց անկէ բազմիւլ արքայական գահը:

Երբ կաթողիկոսը նստաւ Պապի գահը, ինքը թագաւորը վրայի պատմուճանը հանած, մէջտեղը ոտքի կանգնած՝ ընթրիքի ժամանակ, անապակ զինի կը մատուցանէր Աստուծոյ մարդուն Ներսէսին, և մահուան զեղ խառնելով, անոր առաջարկեց: Երբ Ներսէս այդ բաժակը խմեց, իսկոյն հասկցաւ, խօսիլ սկսաւ և ըսաւ»:

Կաթողիկոսը ներկաներուն կը խօսի երկար ճառ մը, օրհնելով Տէրը, որ զինք արժանի ըրաւ այս բաժակին և այլն: Յետոյ ան ելաւ գնաց իր կացարանը: Իրեն հետ գացին «հայոց բոլոր մեծամեծ նախարարները, և հայոց Մուշեղ սպարապետը և այլ Մարդպետը և առհասարակ բոլորը որոնք սեղանատանն էին»:

(1) Տե՛ս Պապի մասին Փաւստոսէն մէջբերումներ ներածութիւն-ի մէջ:

Երբ իր կացարանը հասաւ, Ներսէս սպարեզօտը բացաւ և ցոյց տուաւ սրտի վըրայ մի տեղ, որ կապուեցած էր մի նկանակի մեծութեամբ: Նախարարներ անմիջապէս իրեն հակաթոյն և դեղթափ մատուցին, բայց Ներսէս մերժեց, և դարձեալ ճառ մը խօսեցաւ անոնց: «Այնուհետև արիւնն սկսաւ զունդ զունդ դուրս գալ և բերանէն հոսել մօտ երկու ժամ»: Ապա հոգին աւանդեց⁽¹⁸⁾:

Փաւստոս նախորդ գլուխին մէջ (Ե. 23) ցոյց կուտար թէ, սխալ Պապ թագաւոր կը ցանկար զայն սպանել, բայց Յունաց թագաւորի անէն նա չէր համարձակէր նոյնիսկ խօսքով անարգել զայն յայտնապէս կամ անոր դէմ խտուածիւն բանեցնել, թող թէ մահացնել: Նոյնիսկ հայոց աշխարհի ժողովուրդն ալ, զօրքերն ալ թող չէին տար այսպիսի բան ընել մարդու մը, որմէ կախուած էին հայոց աշխարհի բոլոր մարդիկ . . . Եւ թագաւորը ոխ կը պահէր անոր դէմ, միջոց կը փնտռէր զայն սպանելու, և յայտնապէս այս բանը ընել չէր համարձակէր, այլապէս զօրքերը իրեն կը սպանէին:

Եւ Պապը նախարարներու հսկայ բազմութեան առջև թոյն կուտայ Ներսէսին!

Հարկ չէմ տեսներ այս անհիթեթ պատմութիւնը նոյնիսկ մակերեսային քննութեան ենթարկել ջոյց տալու ատոր յերիւրածոյ ըլլալը: Փաւստոս յորդառատ քէն և ատելութիւն ունի, բայց վարպետ խորամանկութիւն բնաւ, սքօղելու զանոնք, որպէսզի անոնց զրգուժով հիմնած պատմութիւնը գոնէ քիչ մը տրամաբանական ըլլայ:

Սակայն որքան տխուր է խորհրդածել թէ մինչև Քսաներորդ զար հայ ժողովուրդը հաւատք ընծայեց Ներսէս կաթողիկոսի թունաւորման պատմութեան, որպէս հաստատ պատմական իրողութիւն մը, և անիւծեց յիշատակը Պապ թագաւորին, առանց ամենադոյզն գաղտփարը ունենալու թէ, այս երիտասարդ Արքան Հայ Եկեղեցւոյ բարերարներէն մին համարուելու էր, զայն Յոյն Եկեղեցւոյ գերակաութենէն ազատելուն համար, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք այդ ուղղութեամբ անոր մղած տրտանական պայքարը յոյն և հայ մարտնչող-

ներուէն դէմ, մանաւանդ յոյն հսկայի, իր ատենի Ուղղափառեաններու ամենահզօր ատոյեանին, Բարսեղ Կեսարացիին:

Այսու ամենայնիւ մէկը կրնայ մխիթարական գոհացում գտնել, որ Փաւստոսէն 1500 տարի վերջ, Հայ Եկեղեցւոյ բարձրատիճան արժանաւորագոյն մէկ պաշտօնեան, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, սոյն Եկեղեցւոյ պատմութիւնը շարահիւսելուն, մէկզի կը վանէ Ս. Ներսէսի թունաւորման մասին Փաւստոսին պատմածը, նկատելով այդպիսի ոճիր մը բոլորովին օտարօտի Պապի բնաւորութեան և կ'աւելցնէ.

«Մեր կարծիքով շատ աւելի ուղիղ կերպով կը մեկնուէին յիշուած պարագաները, եթէ ըսենք թէ Ներսէս սիրտի կամ թոքերու անրուժելի ատոյով հիւանդ էր, ինչ որ իր գործելու ոճէն և թափէն ալ կը մակարեւորի: Խախտ հացկերոյթը իր յոգնութիւններով, և թերեւս յուզումներով ալ պատճառ եղաւ վերջնական թափի, կամ ինչպէս կ'ըսեն նոպայի մը, և յանկարծական տապնապը թունաւորման վերագրուեցաւ, ինչպէս մեր օրերն իսկ այդ կասկածը կը ծագի ամէն անակնկալ դիպուածի մը առթիւ: Ներսէս զիտցաւ զայն, և իր վերահաս մահը զուշակեց, աննպատակ և անշանակ դարմանները մերժեց, վասնզի անտեղի և անօգուտ ըլլալին զիտէր, կուրծքին վըրայի կապոյտ բիծն ալ, արիւն փոխելու պարագան ալ, ատտի նշաններ են, և ոչ թէ թոյնի»⁽¹⁹⁾:

Օրմանեանին կ'արձագանգէ Ակադեմիկոս Ստ. Մալխասեանց.

«Պապ թագաւորը զուր է մեղադրուով Փաւստոսից, Խորենացուց և հետագայ պատմիչներէից իբրև Ներսէս Մեծին թունաւոր-

(19) Օրմանեան, հատոր Ա. 213-219: Ներսէս կաթողիկոսի մահուան առթիւ այսպէս արտայայտուող Մաղաքիա Արք.ը, կը խորհիմ թէ անյիշալար բարի ժպիտ մը կ'ունենար երբ, ամէն տարի, Ս. Ներսէսի տօնին առթիւ, երանելի Հայրապետի յիշատակին նուիրուած շարահանէն կ'երգէր կամ կը կարգար երկու հատուած, ուր Փաւստոսի «տուեբը կ'երևայ. . . «Որ ի վերայ պատկիւհանաց քաղաւթին երկնաւորի՝ զբաժակ մահու ընկալաւ ի քաղաւորէն»: Եւ քիչ մը անդին. — «Որ յսնդիմանելով զքաղաւորն՝ անգոյն Մեծին Յովնանուով երանելի Տէր սուրբ Ներսէս, Եւ ի վերայ պատկիւհանաց զբաժակ մահու արեայ ընդ անմահիցն դասս վերակարգեցար»:

(18) Փաւստոս, Ե. 24:

րող: Նոր հեղինակներն այս բանը չեն ընդունում: Ներսէս Մեծը վախճանուեց արիւնաքամ լինելուց, թոքերի մէջ մի մեծ երակ պատուելով, ինչպէս յաճախ պատահում է թոքախտաւորներին: (Ճաշկերոյթն առատ գինիով գուցէ արագացրեց այս մահը): Նա ինքը գիտէր իր հիւանդութիւնը և արիւնահոսութեան պատճառը, ուստի մերժեց ընդունիլ առաջարկուած դեղթափերը, որովհետև գիտէր որ թունաւորուած չէ: Թունաւորելու աւանդութիւնը կամ արգիւնք է հոգևորական դասի թշնամութեան Պապի դէմ, կամ տգիտութեան»⁽²⁰⁾:

Ներսէսի մահով բացառիկ անձնաւորութիւն մը կ'անհետանար հայ աշխարհէն: Անվարան կրնանք ըսել թէ ինք կը հանդիսանար նորահաստատ Հայ եկեղեցին քայքայումէ փրկողը: Մեծն Տրդատի հրամանով կանգուն, և անոր արքայական հարկադրանքով արագօրէն տարածուած, ժողովուրդի, մանաւանդ ազնուականութեան համար գեռ անմարսելի՝ քրիստոնէական կրօնը, Տրդատի մահէն վերջ, ակնկալիլի տեղատուութեամբ կ'ընկրկէր հեթանոսական վերադարձնած բարքերու առաջ, որ Տիրան արքայի օրով կը ստանար երկիւղալի համեմատութիւն:

Ներսէս վարչական կուռ կազմակերպութեամբ օժտեց տաղնապահար եկեղեցին: Համահայաստանեան Սինոդ: Կանոններ, որոնք ուղղութիւն տան թէ եկեղեցականի և թէ աշխարհականի: Մանաւանդ եկեղեցականներու վարքն ու գործունէութիւնը ենթարկել խիստ հակակշիռի, գրեթէ հոգևոր զինուորական տիտղոսի, որ եկեղեցւոյ պաշտօնեաներուն անունը և վարքը մաքրագործէ անցեալի չարաշուք բամբասանքներէն, և բարձրացնէ զանոնք օրինակելի բարձրութեան, վայել Քրիստոսի սպասարկուներուն: Անձամբ կատարուած յաճախակի այցելութիւններ Հայաստանի գաւառներուն, հսկելու, գօտեպնդելու, ի հարկին պատժելու: Նոր Պողոս Առաքեալ մը հայ աշխարհի:

Եւ ինչ որ ամենատպաւորիչն է բարոյապէս, այս իշխանական Արչակունին, մոռցած իր ազնուականի կապերը և անոնց թելադրած երևութական փառքն ու վայել-

քը, իր իսկ անձին օրինակովը ապրեցաւ քրիստոնէական խտաբարոյ կեանքը, ապրեցաւ իր քարոզած սկզբունքները՝ նուիրեալ զօրապետը, որ հասարակ զինուորներուն հետ կուսի առաջաւոր գծերէն չհեռացաւ, որպէսզի իր հրամանին տակ եղողները քաջալերուին և սիրայօժար պայքարին բազմազուլս Չարին դէմ:

Մեսրոպ Երէց, Ժ. դարու գրող, հիններէն քաղուածաբար Ներսէսի կենսագրութիւնը գրող, հիացող և պաշտող անոր, այսուհանդերձ չի չափազանցեր երբ կը գրէ. «Չի ինքն լինէր օրինակ բարեաց ամենայն աշխարհի, մշակ առանց ամօթոյ»⁽²¹⁾:

Իր քրիստոնէական սկզբունքները սակարկութեան չդրաւ, և անվարան ընդդիմեցաւ ամէն անձի դէմ, որ իր համոզումով, անարդար արարք կը գործէր, հոգ չէ թէ այդ անձը իր մօրեղբօր դաւակ Արչակ թագաւորն էր: Որպէս կազմակերպիչի եկեղեցական մարզի մէջ, Ներսէսի ամենէն արդիւնաւէտ գործը պէտք է համարել Գերագոյն Խորհուրդի մը կազմութիւնը, որուն անդամներէն իւրաքանչիւրը որոշ պարտականութեան մը լծուած էր, որպէս տեսուչ, վերակացու, գործավար: Սրինակ մէկը՝ վանքերու ընդհանուր տեսուչ, միւսը՝ աշխատանոցներու, մի ուրիշը, կալուածներու, և այլն:

Սա համազօր էր մեր օրերու կառավարական Դահլիճի մը (Cabinet): Փաւստոս Ներսիս Խորհրդարան կը կոչէ այդ⁽²²⁾: Տեսնե՞րկու եպիսկոպոսներէ կը բաղկանար: Թերևս Հայրապետը ի մտի ունէր Յիսուս և անոր 12 առաքեալները:

Այս Գերագոյն Խորհուրդի հաստատուելը և գործունէութիւնը ամենամեծ զօրավիգը կը հանդիսանար վարչական տեսակէտէ, և ընդարձակած աւալ նուիրապետութեան բարդ մեքենային յաջող ընթանալուն զաղտնիքը և բանալին:

Եւ այսօր, Էջմիածնի Գերագոյն Խորհուրդը յիշելնուս, մեր միաքը կ'երթայ ատոր նախատիպարին, Ներսէսի կազմակերպած առաջին Խորհուրդին, որ եկեղեցւոյ կանոններուն անխափան գործադրութիւնը պիտի ապահովէր:

(20) Խորենացի, Ծանօթութիւն 299, էջ 540:

(21) Մեսրոպ Երէց, 42:

(22) Փաւստոս, 2. 5:

Եկեղեցական դասու կազմակերպու-
թիւնը, շնորհիւ ներսէսի, անոր անունին,
վարկին և հմայքին շաղախովը կարծես
թրծուած, զինուորական բանակի մը հզօր
միաւորութիւնը ունեցաւ, այն աստիճան,
որ հրաժարած ներսէսի տեղ, երբ Արշակ
իր ուզած եպիսկոպոսը ընտրեց անոր յա-
ջօրդ, Մեծ Հայքի մէջ չգտաւ ո՛չ մէկ ե-
պիսկոպոս, որ անսար իր հրամանին՝ գալու
օժնու Արշակի մարդը, և թագաւորը ծայ-
րագաւառներէն միայն կրցաւ երկու հատ
ճարել: Ներսէսի զինուորներն էին, որ ի-
րենց լուսթեամբ աւելի երկիրը ազգած ըլ-
լալու էին Արքային, քան իրենց բարձրա-
զաղակ բողոքներով:

Պետական մարզի մէջ ալ ներսէս փայ-
լեցաւ, ո՛չ միմեակ զեպագանական առաքե-
լութեամբ Բիւզանդիոնի արքունիքին, այլ
Հայաստանի ներքին խնդիրներուն մէջ, մա-
նաւանդ ճգնաժամային խառնաշփոթ վայր-
կեաններուն երբ թագաւոր և նախարար ներ-
սէսի զիմեցին, որպէսզի այս վերջինը մի-
ջամտէ՝ դժուարութիւնները հարթելու:

Աղէտի այն ժամուն, երբ կը կարծուէր
թէ յաղթական Ծապուհի զինուորական և
զիւանագիտական հարուածներուն տակ հայ
պետական կառուցուածքը պիտի քայքայ-
ուէր, ներսէս իր գործակից իշխաններով
զիմեց Վաղէսին, և երբ հայ և յոյն բա-
նակներ շտապեցին թշնամիին հանդիպելու,
ինքն ալ հայ զօրքերու հետ վազեց ռազ-
մադաշտ, զինուորներու մտքին մէջ գրոշ-
մելով ներշնչող պատկերը իրենց սիրական
Հայրապետին, որ լիբան վրայ բազկատա-
րած, իրենց ղէնքի յաջողութեան համար
երկնքի դուռները կը բախէր:

Անակնկալ և անժամանակ մահը վրայ
հասաւ, երբ կաթողիկոսը նոր և սպառնա-
կան պայքարի մը թահուրոնին կը նետուէր,
երիտասարդ թագաւորի մը ձեռքը հետու
պահելու հիմնարկութիւններէ և հարստու-
թենէ, որոնք տարիներու յամառ աշխատան-
քին գրոշմը կը կրէին:

Ներսէսի մահով, եկեղեցական խնդիր-
ներ մէկէն ի մէկ պետական ծանրակշիռ
հարց դարձան, և Պապ թագաւոր, պահ մը
քաղաքական բաղձատեսակ հոգերը մէկզի
քշելով, ասպարէզ իջաւ մաքառելու ներ-
սէսի եպիսկոպոսներուն և քահանաներուն
ղէմ:

Ք Ա Պ Ի Ե Ք Ք.

ՊԱՊ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

1. ՊԱՊԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Ներսէսի վարկը և անհատականու-
թիւնը զգուշացուցիչ և նոյնիսկ զսպողա-
կան հակակշիռ մըն էր Պապ թագաւորի
մտադրած յանդուգն քայլերուն: Որքան
աաեն Հայրապետը կ'ապրէր, դժուար էր
անգիտանալ անոր անվիճելի բարոյական
հեղինակութիւնը, որ երեսուն տարիներու
յարատե ու յամառ գործունէութիւնը կա-
ռուցեց և անգլմադրելի հմայքով մը պա-
տեր էր:

Այժմ ներսէսի մահը կարծես կը չքա-
ցնէր խոշընդոտ մը թագաւորի գործունէու-
թեան: Երկուքին միջեւ շարունակուող
վէճը՝ խօսքի, փոխադարձ յանդիմանական
և սպառնալի ամբաստանութեան փուլէն
անցնելով, արքայական անտարկելի և
կտրական հրամաններու շրջանին կը մտնէր:

Ներսէս կաթողիկոսի եկեղեցիէն տար-
բեր և դուրս հիմնարկած հաստատութիւն-
ները, ինչպէս կուսանոց, աղքատանոց և
վանք, Պապի անմիջական հրամանները ի-
րենց վրայ հրաւիրեցին:

Այս հաստատութիւնները բազմաթա-
բար նորութիւններ էին: Առաջին քրիստոնե-
այ Արշակունի թագաւորներ, Տրդատ,
Թոսրով, Տիրան, չէին գիտեր զանոնք: Ար-
շակն ալ, երբ իր օրով ներսէս սկսաւ Հա-
յաստան ներմուծել այս նորութիւնները,
սկզբի օրերուն, զեռ նորահաստատ հիմնար-
կութիւններ, թուով քիչ, բնակչութեամբ
սակաւ, մտահոգիչ երևոյթ մը չէր համա-
րած: Իսկ իր վերջին տարիներուն, քաղա-
քական և պետական պայքարներու միջը-
ճուած, բոլորովին անտես առեր էր անոնց
հսկայական ծաւալումէն յառաջ եկած խըն-
դիրները:

Այս հաստատութիւններէն մանաւանդ
երկուքը Պապի անմիջական ուշադրութեան
առարկայ եղան: Կուսանոցներ և աղքա-
տանոցներ: Իսկ ատոնցմէ վերջ, վանքերը:

Այս քան բազմաթիւ հայ աղջիկներու համախմբումը, քաղաքներէ դուրս, երբեմն աւալի վայրերու մէջ կառուցուած կուսանոցներու մէջ, հոգ չէ թէ ներսէս պարիսպներով շրջապատած էր զանոնք, ընկերական լուրջ և կնճռոտ հարց մը կը ստեղծեր: Բացի ընտանեկան մանր մունր ողբերգութիւններէ, որ նման բաժանումներ յաճախ կը պատճառեն, այս աղջիկներուն ամուսնական պատեհութենէ զրկուիլը կը համարուէր չարիք մը: Թագաւորը թերևս վախ ալ կրնար զգացած ըլլալ, որ, իր տեսակէտէ, կոյսերու այս բազմութեան մաքերն ալ կը թունաւորուէին Ազգափառեան մոլոր դաւանանքով:

Պապ հրամայեց փակել այս կուսանոցները, և հոն գտնուող աղջիկներ և կիներ վերադառնալու էին իրենց ընտանիքներուն:

Յետոյ բազմամարդ աղքատանոցները, որոնք տեսակ մը ծաւանոցներ դարձած էին, այլևս պէտք է վերջ գտնէին:

Վանքեր և մենաստաններ բնակողներ զուրս աշխարհ պէտք է գային և կատարէին պետութենէն բնակչութեան վրայ դրուած օրինական պարտականութիւնները, ինչպէս, զինուորութիւն, և օրէնքով սահմանուած տուրքերու վճարում: Այս քայլով Պապ հաւանաբար կ'ընդօրինակէր Վաղէս կայսրը, թէև այդ ալ կը յարմարէր իր ընդհանուր ծրագրին՝ եկեղեցապատկան հաստատութիւններու վերաբերմամբ:

Թագաւորը եկեղեցիներու դէմ նման խտուրթիւն չգործադրեց: Բայց նկատի ունենալով եկեղեցոյ հսկայական հարստութիւնը, հրաման արձակեց, Տրդատ թագաւորի կողմէ իւրաքանչիւր զիւղական եկեղեցոյ տրուած եօթը հողերէն հինգը վերադարձնել արքունիք: Թէև չենք գիտեր եօթ հողերուն տարածութիւնը, բայց Փաւստոսի յիշատակութենէն կրնանք եզրակացնել թէ բազմաթիւ անձերու ապրուստ հայթայթելու չափ մեծ էր: Եւ հողերու հաշուով ամէն մէկ զիւղին երկ-երկու պաշտօնեայ կը թողուր (Պապ), մէկ երէց և մէկ սարկաւազ, իսկ միւսներուն, այսինքն երէցներու ու սարկաւազներու եղբայրներն ու որդիները իր հպատակութեան կ'ենթարկէր⁽¹⁾:

Պապ թագաւորի այս հրամանները եթէ յաջողութեամբ գործադրուէին, պետական գանձը պիտի հարստանար նոր հարկատուներու վճարելիք տուրքերէն, և տկարացած հայ բանակն ալ զինուորներու նոր խումբեր պիտի ընդունէր իր շարքերուն մէջ: Միտաժամանակ, ամուսնութիւններու թիւը պիտի բազմապատկուէր:

Բնականաբար, թագաւորի այս յաջողական հրամանները ազուրկ յարուցին եկեղեցական շրջանակներու մէջ: Երիտասարդ Արքային ըրածը ամբարիշտ սրբապղծութիւն էր:

Բիւզանդիոն ապրած Պապի և իր ընկերներուն ապրելակերպը, նիստ ու կացը, Հայաստանի բնիկներու կենցաղաձաբութենէն տարբեր ըլլալուն, անշուշտ աւելորդ գէնք մըն ալ պիտի հայթայթէր իր քննադատներուն: Այս Արևմտականացած թագաւորը և իր բարեկամները, իրենց Պոլսական հովերով, վերջ ի վերջոյ տոհմիկ սովորութիւնները պիտի խաթարէին, հայրենի նուիրական աւանդութիւնները առ ոչինչ համարէին, և հայ երիտասարդութեան այլասերման պատճառ դառնային:

Հետագային Փաւստոս պատմիչ թանձրացեալ գոյներով պիտի նկարագրէր Պապի այս գործերը, որպէս չարագործութիւններ, որոնք կրնային կատարուիլ միմիայն օժակերպարան գեւերու զիրկը նետուած հրէչէ մը:

Պապ կրնար անդրադարձած ըլլալ, արեւելեան իշխաններէն Արեւմուտքի քաղաքակրթութիւն ստացածներու կեանքին:

Որմիզդ իշխան, Շապուհ Բ-ի մեծ եղբայրը, որուն իրաւունքն էր Սասանեան գահը բազմիլ իր հօրը մահէն վերջ, կը զբերկուէր անկէ բռնութեամբ, Պարսիկ աւագանիին կողմէ, որոնց ատելի դարձած էր իր յունական կրթութեամբ:

Կամ Վոնոն: Պապ անշուշտ ծանօթացած ըլլալու էր Արշակունի ընտանիքի պատմութեան, որպէս իր դաստիարակութեան մէկ մասը, և տխուր ժպիտով յիշած Արշակունի երիտասարդ թագաւոր Վոնոնը, որ Պապի ժամանակէն 350 տարի առաջ Պարթեւաստանի գահը նստած էր, ապա կտրճատեն մըն ալ Հայաստանի թագաւոր եղած: Վոնոն իր հօր կողմէ Օգոստոս կայսեր զրկուած էր: Երբ թագաւորը միտա, Պար-

(1) Փաւստոս, Ե. 31:

թեւեղը Օգոստոսէն խնդրեցին Վոնոնը իրենց թագաւոր:

Ան վերագործաւ Պարթեւաստան, և նստաւ իր հօր գահը: Անոր արեւմտեան կըրթութիւնը և կենցաղաժարութիւնը վրդովմունք պատճառեց շուրջիններուն: Կրքեր յուզուեցան, թշնամիներ բազմացան, որոնք երբ զէնքի գիմեցին, Վոնոն փախուստ տուաւ Հայաստան:

Այդ ատեն հայ գահը թափուր ըլլալուն, հայեր զինք թագաւոր ընտրեցին: Պարթեւ նոր արքան, Արտաւան Գ. հակառակեցաւ Վոնոնի Հայաստան գտնուելուն: Վէճ ու բանակցութիւններ Հոռոմի հետ: Վոնոն, ստիպուած, ձգեց Հայոց աշխարհը: Իրեն բնակավայր նշանակուեցաւ Կիլիկիոյ նաւահանգիստներէն մին: Փորձեց փախչիլ, բայց սպաննուեցաւ:

Վոնոն և Պապ! նմանութեան եղբեր եթէ կային երկուքի միջև, արդեօք զըժխնիմ զուգակշիռը պիտի յանգէ՞ր նաև Պապի սպանութեան:

Պապ թագաւորի հակառակորդներուն ազմուկը սակայն կրկնապատկուեցաւ, և աւելի յոռի, յամառ, ու յանդուգն շեշտ մը ստացաւ երբ նոր կաթողիկոսի մը ընտրութեան անմիջական հարցը հրապարակ գրուեցաւ:

ՀԻՍՏՆԻ Ք. ԱՐՄԷՆՆ

Երանանգի (25)



ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն Հ Ա Յ Կ Ո Մ Պ Ո Ջ Ի Տ Ո Ր Ն Ե Ր




21.

ԵՐԱԺԻՏՏ ԵՈՎԱՍՍՓ

Երաժիշտ Յովասափի գեղարուեստական գործունէութեան պատմութիւնը 725 երկար տարիների հնութիւն ունի: Նա ապրել է և գործել 13րդ դարի առաջին կիսում «հոչակաւոր» Կարին քաղաքում և ամբողջ էութեամբ նուիրուել է հայ երաժըշտութեան արուեստի զարգացմանը: Այդ տեսակէտից էլ նա արժանի է ուսումնասիրութեան:

Վաստակաւոր երաժշտի մասին կարգում ենք 1230 թուականին գրուած մի նկարագրող «Աւետարան» յիշատակարանում: Դա «չուշանափայլ, նուրբ և ազնիւ» մագաղաթի վրայ, «Մեսրոպեան բարձրագիր, յստակ և ընտիր երկաթագրով», Գրիգոր գրչի կողմից թէոդոպաւլիսում (Կարինում) գրուած արժէքաւոր ձեռագիրն է, որի յիշատակարանի էջերը ձեռք տանում են 13րդ դարի առաջին շրջանը:

Դա ա՛յն ժամանակաշրջանն էր, երբ Գոնիայի սուլտանը, 1204 թուին, արշաւում է թէոդոպաւլիսի վրայ: Վրացական բանակները, Զաքարէ սպասաւարի առաջնորդութեամբ, շուտով օգնութեան են հասնում և ուժեղ դիմադրութիւն ցոյց տալիս, բայց վերջում պարտում են և յետ նահանջում: Այդ հանգամանքը հաստատում են ժամանակի վաստակաւոր գրիչ՝ Վարդան քահանայի 1204 թուին, Մշում գրած «Տաւնական» ձեռագրի յիշատակարանի հետեւալ տողերը. «Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անուն բազմութեամբ . . . փքացեալ լեռնացեալ եհաս ի թէոդոպաւլիս և անդի կամեցեալ անցանել յաշխարհն հայոց և վրաց . . . Իսկ աւզնականութեամբն Աստուծոյ եկին հասին զաւրքն վրաց և մեծն Զաքարէէ հանդերձ Իւանեի(ւ) հարազատուն իւր և այլ աստուածասէր իշխանաւք



և նախարարաւք և յոգնախումբ խառնի-
ճաղանճ բազմութեամբ հասին ի վերայ
անաւրէն զաւրացն Տաճկաց և յանխնա
կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ ա-
րարին, և ոմանք ի փախուստ դարձան,
բայց սուլտանն անվրէպ մնաց . . . »:

Չնայած 13րդ դարի քաղաքական ծանր
և անմխիթար պայմաններին, հայ մշակու-
թային կեանքը Հայաստանում ո՛չ միայն
կանգ չի առնում, այլև առանձին փայլ ու
երանդ է ստանում:

Ահա ժամանակի մատենագրական գոր-
ծունէութեան և գեղարուեստական շարժ-
ման նշանաւոր մի կենտրոն է հանդիսա-
նում վաստակաւոր երաժիշտ Յովասափի
ծննդավայրը՝ «հոյակապ և հռչակաւոր»
քաղաք Քէոզոպուլիս (Կարին), ուր դար-
գանում և ուշագրաւ նուաճումներ են ա-
նում գրչական և մանրանկարչական ար-
ուեստները: Այդ պատմական քաղաքում
էլ ձեւակերպում և իրենց ինքնուրոյն
արուեստով փայլում են մի շարք տաղան-
դաւոր գրիչներ և վարպետ մանրանկարիչ-
ներ, որոնց շարքում պատուաւոր տեղ է
գրաւում բնիկ Կարնեցի վարդան քահա-
նան, որ 1204 թուին, Մշոյ «Առաքելոց»
վանքում, մագաղաթի վրայ, երկաթագրով
գրել է «Տաւնական» մեծադիր և հոյակապ
ձեռագիրը: Դա հայ գրչական և մանրա-
նկարչական արուեստների առաջնակարգ մի
ստեղծագործութիւն է, որ այժմ գտնուում
է Երևանի պետական Մատենադարանում^(*):

Կարնի գրչական և մանրանկարչական
դպրոցի պարծանքն է կազմում նաև ար-
ուեստագէտ Գրիգոր գրիչն ու ծաղկողը,
որ 1230 թուին հայ մատենագրութեան
նուիրել է մի նոր ձեռագիր «Աւետարան»,
որի յիշատակարանը, իր բովանդակու-
թեամբ, կրկնակի արժէք է ներկայացնում
այն տեսակէտից, որ նախ՝ ցայտուն գա-
ղափար է տալիս 13րդ դարի առաջին շրջ-
անում Քէոզոպուլիսում (Կարինում) ա-

ռաջ եկած մշակութային շարժման մասին,
Այնտեղ, պատմական քաղաքի, արուես-
տագէտ հոգեւորականները, մի գեղեցիկ
ներդաշնակութեամբ, ընդօրինակում են և
վրձինում մէկը միւսից ուշագրաւ ձեռա-
գրեր և զարկ տալիս դարաշրջանի գրչա-
կան ու նկարչական արուեստների զար-
գացմանը: Այդ շարժման մի գեղեցիկ պատ-
կերը տեսնում ենք 1230 թուականին Գրիգոր
գրչի ձեռքով գրուած «Աւետարան»ում,
որի յիշատակարանում կարգում ենք. «...
Եւ ես ըստ կարի խմում՝ բազում աշխա-
տութեամբ զձագրեցի խմով ձեռամբ և ծաղ-
կազարդեալ յաւրինեցի ոսկեով պատուա-
կանաւ, հրով փորձեալ և զտեալ և երփ-
ներփն երանդաւք, և պայծառ զեղովք
գրոշեալ ներգործեցի ի սմա ազգի ազգի
քանդակս խորանաձև և երկնանմանս և ալ
մանրամասն ինչ ծաղկաւք՝ ըստ տուեցե-
լոյ ինձ ի շնորհաց հոգւոյն սրբոյ . . . Եւ
հայկազնեան տումարիս վեցից հարիւրից
եւթանասուն և ինն ամաց՝ (679 + 551 =
1230) ի հոյակապ և ի հռչակաւոր քաղա-
քիս Քէոզոպուլիսս:

Չնուազրի յիշատակարանը հայ երաժըշ-
տական արուեստի պատմութեան համար
ուրոյն արժէք ունի այն տեսակէտից, որ
ցայտուն գաղափար է տալիս 13րդ դարում
Կարինում նոր երանդ ստացող երաժշտա-
կան մշակոյթի մասին, որի տաղանդաւոր
արտայայտիչը հանդիսանում է երաժիշտ
Յովասափը: Այս վաստակաւոր արուեստա-
գէտի մասին 1230 թուի ձեռագիր յիշատա-
կարանում ընդգծուած են այսպիսի սեղմ,
բայց բնորոշ տողեր. «... Յիշեսջիք Գրի-
գոր գրիչ . . . և զՅովասափ փիլիսոփայ
(= երաժիշտ) զհոգ(ե)ւոր եղբայր մեր . . . »:

Նոյն երեւոյթն ընդգծել է նաև Գարե-
գին Ա. կաթողիկոսն իր «Յիշատակարանք
Չնուազրաց» արժէքաւոր գրքի 119րդ է-
ջում, ուր կարգում ենք. «Փիլիսոփայ (=
երաժիշտ), «հոգ(ե)ւոր եղբայր»՝ Գրիգոր
գրչի, 1230 թ., Քէոզոպուլիս կամ Կարին
քաղաքում»: Թէ ի՞նչպիսի գործունէու-
թիւն է ունեցել երաժիշտ Յովասափը և
ի՞նչ գեղեցիկ մեղեդիներով ու տաղերով
է զարդարել հայ եկեղեցական երաժշտու-
թեան գանձարանը, դժբախտաբար, չու-
նինք փաստական աղբիւրներ: Այս քանը
միայն պարզ է, որ երաժշտագէտի կեանքի

(*) Հայ ժողովրդի այս ամենամեծ և արժէ-
քաւոր ձեռագիրը մանրամասն ուսումնասիրե-
ցինք 1926 - 27 թուերին, երբ որպէս գիտական
աշխատանք պաշտօնավարում էինք Երեւանի
պետական թանգարանի պատմա - գրական բաժ-
նում, ուր գտնուում էր գրչագիրը: Բաղկացած
է մագաղաթէ 720 մեծադիր թերթերից և ծան-
րութիւնն է 34 քիլոգրամ: Չնուազրւմ մի քանի
անգամ շփերեվարուել է, ինչպէս գրուած է
լուսանցքներում:

որոշ երեւոյթներն իր էջերում լուսարանոց 1230 թուականին գրուած ձեռագիր «Աւետարանն այժմ առանձին գուրգուրանքով պահուում է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանում:

22.

ԵՐԱԺԻՇՏ ՍՏԵՓԱՆՆՈՍ

Բարձրագոյն կրթութեամբ և գիտութեամբ զինուած իր ժամանակի կուլտուրական դէմքերից մէկը, որ հանրային կեանքում փայլում է նախ որպէս փիլիսոփայ: Սակայն, նրա հասարակական դերն առանձին նշանակութիւն է ստանում, որ նա օժտուած լինելով ձայնական հարուստ և երաժշտական մեծ ընդունակութեամբ՝ զարկ է տալիս իր ապրած դարաշրջանի երգեցողութեան և երաժշտական արուեստին: Նոյնպէս նա է, որ առաջին անգամ Բարսեղի գրութիւնից թարգմանում է 24 եղանակ:

Այս փիլիսոփայ, երգիչ - երաժշտի անունն առաջին անգամ կարդում ենք Գրիգոր Գպիր կեսարացիի(*) «Պիքք Նուագարան»-ի 236րդ էջում (1803) հետեւեալը. «Ստեփաննոս փիլիսոփայն գոյով հոչակափայլ երաժիշտ և հմուտ ձայնիցն, զհանուրս ձայնս գոյից՝ բաժանեաց ի մասուննս այս ինչ, որք են. բառաչել, կառաչել, խխնչել, բշել, գոչել և այլն. և ի սոցանէ առեալ ի ձայնիցս, ի գործի զուգաթիւս, առ մենայն ձայնս, մի առ մի երգէր ձայն արարեալ»:

Այնուհետեւ Ստեփաննոսի կերպարը տեսնում ենք Հ. Ղեւոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» խորագրով գրութեան 88րդ էջում, ուր, սակայն, երաժշտագէտի մասին չենք գտնում կենսագրական մի նոր տուեալ: Վենետիկեան տաղանդաւոր բանասէրը համարեա կրկնել է Գրիգոր Գպիրի հաղորդած տեղեկութիւնները, նշելով, թէ Ստեփաննոս երաժիշտը

քսան և վեց եղանակ է յորինել, բնական իրերի և կենդանիների ձայնից առնելով:

Սակայն, փաստն այն է, որ այդ 26 եղանակը Ստեփաննոսը ոչ թէ յորինել է, այլ թարգմանել է: Գրիգոր Գպիրի և Ալիշանի հաղորդած սխալ տեղեկութիւնները մեծանուն երաժշտագէտ Կոմիտասը դեռ 1894 թուին «Արարատ»-ում տպած իր «Հայոց եկեղեցական եղանակները» խորագրի կրող անդրանիկ յօդուածով սրբազարել է, ընդգծելով հետեւեալը. «Պատահարար մեր ձեռքն անցաւ մի ձեռագիր, որի մէջ կար մի անյայտ գրչի գործից մի գլուխ՝ «Բան յաղագս ձայնից թէ ուստի գտաւ» վերտառութեամբ, բոլորովին անկախ գրքի բուն նիւթից: Այս կտորը բաւական շահաւէտ տեղեկութիւններ է հաղորդում, որոնցից մէկն է ոմն Ստեփաննոս փիլիսոփայ երաժշտի մասին: Մեր կարծիքով Հ. Ղեւոնդ Ալիշանի յիշած Ստեփաննոս երաժիշտը նոյն ինքն այս անձն է, բայց ոչ թէ յորինել է յիշեալ քսան և վեց եղանակը, այլ թարգմանել է երանելի Բարսեղի գրութիւնից. և որ եղանակների թիւն է քսան և չորս»:

Նկատենք, որ Կոմիտասի միջոցով «Արարատ»-ում 1894 թուին արդէն լոյս տեսած «Յաղագս ձայնից թէ ուստի գտաւ» շահեկան այս հատուածը Յարութիւն Քիւրտեանը, որպէս անտիպ նիւթ, տպագրել է Փարիզում հրատարակուող Արշակ Զօպանեանի «Անահիտ» ամսագրում (1935 թ., թիւ 1-2, էջ 320), ընդգծելով հետեւեալ կտրուկ տողերը. «Զմե կարծեր, որ այլուր հրատարակուած ըլլան այս երկու հատուածները, որ արժանի են ուշադրութեան»:

Անշուշտ, եթէ Քիւրտեանը ծանօթ լինէր հայ մատենագրութեանը, տպագրուած մի նիւթ անտիպի անուան ներքոյ ո՛չ լոյս կ'ընծայէր «Անահիտ»-ում և ո՛չ էլ սխալ կ'ըրձիք կը յայտնէր: Բայց էականն այժմ այդ չէ. այլ այն, որ Ստեփաննոս երաժշտի՝ 24 եղանակի թարգմանութեան կարեւոր խնդրի լուսարանութեան համար պարտական ենք տաղանդաւոր բանասէր-երաժիշտ Կոմիտաս վարդապետին:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՛ 11)

(*) Հայ երաժշտութեան մասին գրող առաջին հեղինակը, որ կեսաբիայի հայ ժողովրդի պարծանքն է, ծնուել է 1740 թուին: Հայ երաժշտական գրականութեան աւանդ է թողել «Պիքք Նուագարան» և «Պիքք երաժշտական», որոնք իր ժամանակին տպագրուել են և պատկերում են հայ հնագոյն մաստակաւոր երաժշտագէտների ստեղծագործական զեղեցկութիւնները:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԻ) ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ՉՈՐԵՔՇԱՅԹԻ

ԻԶ.

Եւ ի չորրորդումն աւուրն՝ զլոյսն սփիւռ եւ տարածական,
արար աւղեղէն անօթ՝ հաւարեաց ըզլոյսն ի յաման:

ԻԷ.

Զըստակն ետ արեգականն, եւ լուսնին միջակ գիճական,
զայլն թանծրն աստեղաց հուլից՝ անմոլար եւ մոլորական:

ԻԸ.

Տերեկի եւ գիշերի, արեգակն է իշխանական,
երբ գընայ գիշեր լինի, երբ ծագէ նա լոյս տըւընջեան:

ԻԹ.

Խաւարըն չէ գոյութիւն, լոյսն է գոյ եւ յոյժ պիտեւան,
ի պակասութիւն լուսոյ՝ տարերացն ըստուերբ զօրանան:

Լ.

Արեւն ի հոլով գընայ, եւ լուսինն ի սահ սողըման,
անմոլար մոլորականք՝ աստեղունք ոստոստ ընթանան:

ԼԱ.

Արեգակն է լուսոյ ակն, եւ լուսնին է երկու բերան,
զլոյսն յարեգակնէն առնուլ, կամ ծածկոյթ է բացխրփական:

ԼԲ.

Սորա են քանոնք եւ չափք, տարեց եւ ամսոց զուգական,
ժամուց եւ ժամանակաց, շրջանից կէտից՝ հանգըստեան:

ԼԳ.

Արեւն յայծեղջիւրն իջեալ, մեզ ծմեռն եւ կէտ սուզական,
ի հարաւ ամառնանայ, ժամանակ պըտղոց հասըման:

ԻԶ. — 2. — անօթ, աման, Զ:
 ԻԷ. — 2. — հուլից, խըժպից, է:
 ԻԸ. — 1. — ... գիշերոյ ... է:
 ԻԹ. — 1. — ... պիտական, ժի:
 ԼԱ. — Զուսի, Խ:
 1. — լուսին, ժ. լուսինն, էի:

ԼԲ. — 1. — տարերց, Զժ. տարե-
 րաց, Թ:
 2. — հանգըսեան, փոփոխման, ժի:
 ԼԳ. — 1. — իջեալ, եմուտ, ժ:
 2. — ..., ի պատճառ պտղոցըն հաս-
 ման, Խ:

Հ Ի Ն Գ Շ Ս. Բ Թ Ի

1.Գ.

Ի հինկերորդում շաւուրն, Բարարիչ ստեղծողն էական, սասց ծընանիլ ջրրոյն՝ մեծամեծ կէտք եւ լողական:

1.Ե.

Նախ եւ առաջինն եղեւ, ծովայնոց վիշապ Լեւաթան, աւրինակ սատանայի, սատակի ի յօր գալըստեանն:

1.Զ.

Անթիւ ւ անհամար կէտունք, եւ զեռունք ի ջուրս յաւրանան, ծնընդոցըն խընամ չունին, ի ծնանելըն միշտ մոռանան:

1.Է.

Նոյնպէս ւ աւդային թրոչունքն, որ ի ջուրս ունին ընակարան, ի ծովըն թողուն ըզծուն, անխընամ ծագըրն գոյանան:

1.Ը.

Երկիր հանին անասունք, գազանք եւ թռչունք թեւական, կերպարանք զարմանալիք, զի տեսեալ մարդիկ հիանան:

1.Թ.

Ծաղիկք եւ արմատք դեղոց, ցաւելոց զառողջութիւն տան, բայց թէ կերեալ ուտելով, նա լինի առիթ մահրւան:

Խ.

Նոյնպէս գազանացըն ջոկք՝ ոչ թէ մարդակերք շարարան, ի սկըզբան հնազանդ էին ընդ մարդկային իշխանութեան:

ԽԱ.

Մինչ չէր մեղանչել Ադամ, չունէին ոխ թըշնամական, ինձն, առեւծն եւ գայլն եւ արջն, ընդ ոչխարսն էին միարան:

ԽԲ.

Ի պըտոց ծառոց կերեալ՝ անասունք ւ երէքդ ամենայն, գազանք, սողունք եւ թռչունք, հաշտ էին սիրով սեռական:

ԽԳ.

Երայք են զարդերք լերանց, եւ ջրոց զեռունքդ ամենայն, նաւորդաց ւ անցաւորաց մըլխիթար եւ ըսփոփարան:

- 1.Ե. — 1. — Լեւիթան, Խ: կերպ, Ը:
- 2. — ի յօր, յաւուր, ԷԽ: 2. — . . . ընդ մարդոյ են յիշանու-
- 1.Զ. — 1. — կհսուցի, կայտառք, Խ. թեան, Խ: . . . ընդ մարդոյն որ իշխանու-
- կետունք, Է: թեան, Է:
- 1.Ը. — 1. — բեւական, գանազան, Ի: ԽԱ. — 1. — Մինչ, զինչ, Ը: մեղան-
- 1.Թ. — 1. — ցաւելոց, ցանելով, Ը: Էեր, Զ: թշնամութեան, ԶԷ: ի
- Խ. — 1. — մարդակեր, Զ. մարդա- ԽԳ. — 1. — էրայք, Ը: զարդեր, Խ:

ԽԹ.

Յարալէզն և եղջերուաքաղն, յուշկապարըն պրղծարերան,
ոմանք ասեն է՛ եւ չէ, և ոչ գիտեն թէ կան թէ չկան:

ԽԾ.

Են ի ստորոտ աշխարհիս՝ մահաշունչ գազանք դիւական,
երբ Տէրն ըզմեզ խըրատէ, նոցա հոտն է դեղ մահըւան:

ԽՁ.

է ծով բոլոր՝ աշխարհիս՝ եւ անուն է Անդրընդական,
եւ ամպք անտի ջուր հանեն՝ եւ ոչ որ և ոչ նաւք ընթանան:

ԽԷ.

Զբոլորս որ արար Աստուած՝ ի պատիւ մարդոյն ստեղծան,
զի ի ստեղծանել մարդոյն՝ պատրաստեալ զըտոցէ զամենայն:

ԽԸ.

Որպէս որ ըզթագաւոր, որ սիրով առնէ մեծարան,
նախ ըզտունըն զարդարէ պիտոյիք բարեօք զանազան:

Ո Ի Ր Բ Ա Թ

ԽԹ.

Ի վեցերորդումն աւուր՝ մտրդասէր Հայրըն զըթական,
ասաց ընդ բնութեան Որդին, արասցուք զԱդամ մեզ նըման:

Ծ.

Պատկեր Աստուծոյ ասիմք՝ երրակի թըւոյն միութեամբ,
զի եմք միտք, եւ բան, հոգի, անծն երբեակ եւ մարդ միական:

ԾԱ.

Եւ նըմանատիպ նորա արուեստիք հանճարեղութեան,
զիտուն և իմաստուն շնորհօք, եւ հոգւով անմահ բանական:

ԾԲ.

Թէ անծըն Հօր էր միայն՝ արասցուք չէր պատշաճական,
այլ կամքըն միայն՝ բաւ էր եղանիլ գոյիցս ամենայն:

ԾԳ.

Ոչ էր անտեղեակ Որդին, խորհրդոյն իւր Հօրն էական,
զիջանի մերովս ընդ մեզ, զի գիտողք լիցուք զամենայն:

ԽԵ. — = ԽՁ, ԽԷ
 ԽԵ. — 2. — ... մեղ մահուան, ԽԷ
 ԽՁ. — = ԽԵ, ԽԷ
 1. — անդընդական, ԶԹ. անդըլլա-
 կան, Ժ. անդընդական, էԽԻ:
 ԽԷ. — 1. — Զբոլորս, գոր ինչ, ԴՁ,
 ստեղծական, Ը:

ԽԸ. — Զուցի, Զ.
 1. — ըզբագաւոր, թագաւորի, ԽԷ
 զթագաւորին, է: առնէ սիրով, է:
 Ծ. — 1. — միութեան, Զ է Ի Խ:
 ԾԱ. — 2. — բանակուն, բնութեան, Թ
 ԾԲ. — 2. — լինիմք, ԽԷ

ԾԳ.

Քան զբոլոր գոյից ստեղծուածս մարդոյն եօթն շնորհք յաւելան,
զի զնոսա բանիւ արար, եւ ըզսա պատուով տիրական:

ԾԵ.

Պատկեր արասցուք նրման, զգայական գոյիցքս իշխան,
զի հող ի յերկրէ առեալ եւ փրչումըն շնորհք հոգեկան:

ԾԶ.

Բանաւոր եւ մըտաւոր, եւ հոգի անմահ յաւիտեան,
շինող վաճառող տընկող, եւ ճառող միշտ աստուածութեան:

ԾԷ.

Արար Աստուած զմարդն Ադամ, ի պատկերն իւր սուրբ տիրական,
զոր ի վեց դարուն զգեցաւ, ի կուսէն Որդին Հօր եւ Բան:

ԾԸ.

Եւ ըստ պատկերի հոգոյն, մարդ հոգի է անմահական,
Հոգին Սուրբ անբըննելի, նոյնպէս եւ հոգիքն մարդկան:

ԾԹ.

Ըստեղծ ըզմարմինն յառաջ, եւ ապա զհոգին բանական,
զի մի ինքնատես լիցի, եղելոց իւր արարչութեան:

Կ.

Ջդըրախտն յարեւելս տընկեաց, եւ կոչեաց Եդեմ հողական,
Ադամն է հողոյ անուն, եւ Եդեմըն նոյն թարգման:

ԿԱ.

Ի յերրորդումն աւուր տընկեաց՝ ընդ այլոց ծառոց բուսական,
զայս աստուածատունկ ասաց՝ զայն միայն բանիւ ստեղծական:

ԿԲ.

Քան զայս աշխարհիս ծառերս՝ այն համով գունով զանազան,
անբաւ բարեաց տընդին, փառք նրմա այժմ եւ յաւիտեան:

ԿԳ.

Եւ արկ թըմբրութիւն մարդոյն, թանծրութիւն եւ բուն նընջրման,
էառ ի կողից նորա, եւ շինեաց պատճառ ծընընդեան:

ԾԴ. — 1. — զբոլոր, գամէն, Խ:

2. — ... զանազան, Ժ: ... , և ըզ-
մարդն ձեռօք իւրական, Խ:

ԾԵ. — 1. — ... գոյիցս իշխան, Ը:

Պատկեր արար իւր նման, ըզգալի գոյիցս
նա իշխան, Խ:

ԾԶ. — 2. — տնկող վաճառող, Խ:

..., և ճառող մի աստուածութեան, Զ:

ԾԷ. — 2. — լինի, Ժ: եղելոցս, Ը:

արարչական, Զ:

Կ. — 1. — հողական, վեցն ալ. շնչա-
կան, Ը:

2. — բարգըման, ի թարգման, Խ:

ԿԱ. — 2. — ստեղծական, Խ. տնկա-
կան, Ը:

ԿԲ. — 1. — համով, բազմով, Զ:

ԿԳ. — 1. — քուն հանգստեան, Խ:

ԿԴ.

Գիտէր զանցանել մարդոյն, եւ չկամէր մատնել մահրւան,
ըզբարին Աստուած արար՝ զչարն ուսոյց աւծն եւ սատանայն:

ԿԵ.

Աճելոյ զարգանալոյ՝ արհնութեամբ առին հրրաման,
նոյնպէս ւ ամենայն զեռունք, իշխողն յոչ իշխեալն ի նման:

ԿԶ.

Բահանայական պատուով զկենդանեաց կոչեաց զանրւանս,
բայց նորա ի յարարչէն արարած յերկիր կոչեցան:

ԿԷ.

Երկիրն երկիւղ թարգմանի, եւ աշխարհն ապաշխարութեան,
թէ աստ երկիւղած լինիս՝ աներկիւղ մընաս յաւիտեան:

ԿԸ.

Դըրախտն է ծառոց տեղիք՝ մըրգաւէտ ծաղկօք բուրաստոն,
բարձր է ի յերկրէս ի վեր, ճանապարհ է վեց ամբսան:

ԿԹ.

Որ ծառ զիտութեան ասէ՝ ծառ մահու եւ անմահութեան,
ի պատճառ տընկաւ մարդոյն՝ եւ ի փորձ աստուածսիրութեան:

Ձ.

Ձորս զետոցն յառաջ բըխումն, որ տըւան դրախտին առողման,
Փիսոն եւ Գեհոն, Տիգրիս, Եփրատէս անուն կոչեցան.

ՁԱ.

Առողաննն ըզդրրախտն, զի նա հարթ է հաւսարական,
պըտուղ անթերի լուսով՝ միշտ կանանչ եւ անթափական:

ՁԲ.

Իջանեն ջուրքն ի լեռունէն, եւ հորդեն ձոր եւ պատուհան,
մըտանեն ի ծոց երկրի, ւ ի ներքոյ լերանց ընթանան:

(18)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ԿԴ. — 1. — զյանցանել, Ձ. . . . ի կօք, պտղոց, Ձ. ծաղկոց, է:
մահւան, Ձ. . . . կորըստեան, ԺԽ: ԿԹ. — 2. — տընկաւ ի պատճառս, Խ:
ԿԵ. — 2. — զեռնոց, Խ: Հ. — 1. — առողման, Ձ. յառողման, Ժ:
ԿԶ. — 2. — . . . արարածք էր կոչե- Է. յառողան, Ը. ոռողման, Ժ:
ցան, Ձ: ՀԲ. — 1. — իջանեն զուրքն ի դրախտ-
ԿԷ. — 2. — մաւլ, Ձ: տէն լեռնէն, Ի. ի լեռունէն, ի դրախտէն,
ԿԸ. — 1. — ծառոց, ծաղկոց . . . ծաղ- Թ. ի լեռնէն, է: հորդեն, հարթեն, Ը:

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

“ՄԻՍԹԻԿ ՏԱԻՂ”

Հեղինակ՝ ԱՇՏԻՇԱՍ

Ամէն գրող անհատ ունի իր զգացական աշխարհը. անհատական տպաւորումի, խորանալու և զգացածը արուեստի շունչովը տալու առաւել կամ նուազ չափով կարողութիւն մը: Գրագէտի մը երկին մէջ կը փնտռուին հարազատութիւնը ներքինը, ուժականութիւնն ու բխումը արտայայտական կերպից: Որքան հզօր է գրողին զգացական աշխարհը իրրև անհատականութիւն, որքան խոր է անոր ներշնչումը իրրև ապրում ու իսկական կիրք, այնքան տիրապետող է ան՝ որպէս հեղինակ:

Հեղինակին անմահութիւնը պայմանաւոր է իր երկունքին հզօրանքովը և զայն տալու արուեստովը. ուրիժն, հեղինակը ինքն է որ կը հիւսէ իր գրական փառքը՝ համաձայն զգացական չափին և տալու կարողութեան: Գրագէտը իր ընկալուչն է ու տուիչը: Պիտի ստանայ այն՝ ինչ որ բնական է ու գեղեցիկ, և զայն պիտի փոխանցէ ընթերցողին՝ հարազատութեամբ և տպաւորական յուզումով:

Աշտիշատի Մէլիկ Տաշը քերթողագիրք մըն է, որուն մէջ կը բովանդակուին երեսունինը քերթուածներ, այսինքն՝ երախայրիքը իր բանաստեղծական յուզումներուն և զգացական ապրումներու տեղին. զանազան երկինքներու տակ և իրարմէ տարբեր թուականներու մէջ ձև ու մարմին առած: Այն մթնոլորտը՝ որուն մէջ ինքը կը շնչէ ու կը զգացուի, կրօնականն է. այս է զլիսաւոր պատճառը իր արուեստի մրազածութեան, դուք ըսէք խորհրդաւորութեան՝ որուն մէջ կը ծփան աղօթքի, գթասրտութեան և մարդասիրութեան կանչեր:

Աշտիշատի ներաշխարհը իրրև մտածում ու խոռովք, իրրև թեթափ ու խորհուրդ՝ մեզի հաղորդական կը դարձնէ կրօնական ըմբռնումներու ճամբով այն գաղափարապաշտութիւնը, որ կը միտի այլասիրութեան, ներողամտութեան, այսինքն՝ քրիստոնէական եղբայրակցութեան ցանկալի հաւատամքին. իրրև նիւթ և մշակում՝

անոր գիրքին մէջ կը տողանցեն կրօնականը, ընկերայինը, անհատականը և ազգայինը, ամէնքը բխած զգացական լարերէ, և ամէնքն ալ բնական հոսումով:

Գեղապաշտ մըն է Աշտիշատ, իր քերթողական արուեստովը կը միանայ այն գրագէտներու հոյլին, որոնք 1910էն սկսեալ ուժականութիւն տուին հայկական բանին և արուեստաւոր ոճ՝ մեր արտայայտութեան կերպին: Կը զուրգուրայ բռնեբու վրայ, ականջ կը դնէ անոնց ձայնին, կ'ընտրէ միայն անոնք՝ որոնք արի են և արու, որոնք առողջ են ու իմաստալից և կրնան ծառայել քերթողական արուեստին. ասիկա ալ բաւական չէ սակայն, Աշտիշատի քով ուրիշ մտահոգութիւն մըն ալ կայ, ընտրութեամբ բռնեբու ս'ըր, ե'րբ և ի'նչպէս գործածել, որպէսզի քերթուածը գառնայ դաշնաւոր, հնչական: Աշտիշատ իր գիրքին մէջ կ'ուզէ տեսնել լեզուական նարսարակեսութիւն, այսինքն՝ կառուցումի անհատականութիւն:

Դիտուած այս մտածումէն, ան կը ձգտի դիտել իրերն ու աշխարհը այնպէս՝ ինչպէս որ են, կը մտերմանայ այն բոլոր իրադարձութիւններուն՝ որոնք քով քովի գալով մարմին և իմաստ կուտան ապրումին, կը ստեղծեն կեանքը բազմազոյն և բազմատարազ, կեանք մը անբիծ և խաղաղարոյր, որուն մէջ պէտք է ապրին ու գործեն մտքի և հոգիի հերոսները միայն, ոչ թէ անոնք՝ որոնք կը պաշտեն նիւթը, իրենց սուտովն ու նենգութեամբը կ'ապականեն կեանքը և անոր նպատակը:

Ու այդ Հոգին, այդ Ալբիւրն մե՛ք պատե՛կինք իբր մեզ, Ի՛նչ փոյր դիպուածն երբ պատճեր կամ խորհակել մեզ փորձեր. Խուցկն անձկութեան երբ կ'իյնայ մեզն ուղեղիս իմ անգօր, Մըսածումներս կը մըլխա՛ն ու կը մերժե՛ն ուժգնօրէն Մըսածելու քե՛ կ'արժե՞ կեանքը նիւթով լիացնել, Եւ բողուլ որ հոն հոգին բանարկըւած մընայ միօս, Ինքն իր վրայ զալարուած, յետոյ մեռնի՛ յուսահաւս...:

Աշտիշատի մէջ մարդասիրական խոռովքը
 այնքան կը բորբոքի մերթ ընդ մերթ, որ
 կը մոռնայ ինքզինքը և կ'ընդզլի նոյնիսկ
 Աստուծոյ դէմ, սակայն այս ապստամբու-
 թեան մէջ յոխորտանք չկայ, ոչ ալ յան-
 ցապարտութեան մը արատը. ան կը վե-
 բածուի պարզ յիշեցումի մը:

Եթէ Ասուած իմ, չէիր, չէիր կրնար մար-
 դուն մեջ,
 'Իրենլ ՀՈՒԻ մը ազնիւ ու գաղտնօրէն հոն
 ցանել
 Ամենասեղծ ֆու աշովդ, վերամբարձող
 հունճ սիրոյ,
 Ինչո՞ւ ուրեմն դրբիր Պասկերիլ դրու՞մ ու
 Եունչ,
 Որ ան այսպէս եղծանէր, զանոնք բերէր
 հաւասար
 Հողին, գետնին երկրաբաւ, ու վիրաւոր իր
 մրսէն,
 Ու իր սրտէ՛ն զարնուած, երբար զրօնել
 մուր զամբանն ...:

Աշտիշատը խորագրած մարդ մըն է և
 յամառ հաւատացեալ մը. իր քերթուածնե-
 ներէն շատերը խնկարոյր աղօթքներ են,
 մանաւանդ՝ քաղցրահնչիւն մաղթանքներ:

Ուրեմն դուն Ասուած իմ, Քեզմէ եկած այդ
 հունճին,
 Քեզի դարձող այս սիրոյն, օ՛, միտս եղի՛ր
 ծոց մը տալ,
 Ու չքողուս ան մեռնի ...:

Ուրիշ մը.

Ուրեմն Տէ՛ր, ալ ինչո՞ւ կեանքս ապրիլ
 յամառիմ,
 Պարպուած եմ երբ Քեզմէ եւ չեմ ըզգար որ
 Հոգիդ
 Աննառապէս գար իջնէր, զրօնէր արմատն
 իմ հոգւոյն,

Որ չըլլայինք իրարու օտարի պէս, օտար
 սուն ...:

Կամ՝

Չիւնը հարուս կը բափի հիմա համակ
 օրհնութիւն,
 Յուրք ուժգին կը սահի երակներէն ծառե-
 ռուն,
 Բայց Ասուած իմ, սա տղաք, այդպէս ֆիչ
 ֆիչ ամեն օր,
 Մեռնի՞ն այսպէս աչֆիդ տակ, աչֆերնին բաց
 այս կեանքին ...:

Իբրև խորհրդաւորութիւնը սիրցնող
 երկունք և քերթուածը դաշնաւորող ճիգ՝
 զեղեցիկ կը գանձեմ Հասնի աշտիշատի
 ոտանաւորը:

Ոսեր բարակ ֆովէ ֆով, սըլա՛ցք, աղօթք
 մեղօօրօր,
 Ճիւղեր նիհար, կը հեւան միսքիկ հանդեսն
 այս տարուան.
 Որքա՛ն բազում են անոնք, բազում սքծողն
 րախիճներ:
 Կը բաժնուին իրարմէ ու կը մնան անբաժան,
 Անոնք՝ իղձերն են ծառին, ծաղկած սիրոյ
 արմատէն,
 Ու կը խորհիս քէ արդեօք այսպէս օրո՞ւ կը
 սպասեն ...:

Աշտիշատի լեզուն սահուն է, ներշնչ-
 չումը յորդ և դիւրարուխ, բռնազրօսիկն ու
 արուեստակեալը կը բացակային անոր քերթ-
 թուածներէն. ինչ որ կուտայ իբր ներշնչ-
 չում և գրական վաստակ՝ հարազատ է իմ
 հաւատոյ հանգանակին և ընկերային ու
 կրօնական ըմբռնումին:

ՍՕՍ - ՎԱՆԻ

Արէնք

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՔԷԼԻՆԱՄԻ ԱՍՏՈՒԱԾԱՌԱՆՍԱԿԱՆ

ԳՊՐՈՑԸ ԱՆԳՎԻՈՑ ՄԷՋ

Քանանայացուներուն կրթութեան և դաստիարակութեան համար շատ մը վարժարաններ կան Անգլիոյ մէջ: Քէլչամի Աստուածարանական Գործըր անոնցմէ ամենէն մեծն է և ունի մասաւորապէս 100 ուսանող, որոնց երկուքը հայ: Քէլչամ փոքր գիւղ մըն է Նիւարք-ան-Քրէնթ քաղաքին մօտիկ:

Անքիլքան Եկեղեցին շատ պէտք ունի քանաններու վերջին 50 տարիներու ընթացքին ձեռնադրուածներուն թիւը չի համապատասխաներ Անգլիոյ բնակչութեան անուսին կամ աշխարհի բոլոր մասերուն մէջ մեր գործին յարանուն պէտքերուն: Քէլչամի գլխաւոր նպատակն է եկեղեցիին ամենակարեւոր պէտքին զօհացում տալ՝ իր եկեղեցականներուն թիւը շատընելով:

Գպրոցին մեքսները. — Երեսուներէնք տարիներու փորձառութենէ ետքը, հասկցուած է թէ հիմնական կարեւորութիւնն ունին նեակեալ մեթոտները՝ գործը յառաջ տանելու համար:

ա) Ընտրութիւնն ու կրթութիւնը լաւագոյն մարդաց, ս'ը որ ալ գտնուին անոնք: Յաճախ կը պատահի որ լաւագոյն մարդը զորի կ'ըլլայ անբարձեւտ կրթութիւնն ստանալու միջոցներէն կամ զբամէն: Այսպիսի պարագաներուն՝ պէտք է որ առօր միջոցը զտնուի: Քէլչամի մէջ պահանջուած շափանիչներն են բարձր Գլխաւոր, իմացական ընդունակութիւն և եռանդ: Ամէն տարի դիմում ընող 300 թեկնածուներէն Քէլչամ մասաւորապէս 30ը միայն կրնայ ընդունել:

բ) Կոչումի փորձը: Գպրոցը խոստում չի տար բոլոր եկողները պահելու: Տարի մը կամ աւելի ժամանակ պէտք կ'ըլլայ հասկնալու համար թէ թեկնածուն մը իրական կոչում ունի՝ եկեղեցականութեան համար թէ ոչ:

գ) Երկար և կատարեալ իմացական կրթութիւն: Անոնք որ Հաւատք քարոզելու պիտի երթան՝ ամենէն առաջ պէտք է իրենք խորհին ատոր վրայ, և ասիկա շատ ժամանակ կ'ուզէ: Տարբական դասընթացքը կը տեւ մէկէն մինչև երեք տարի: Աստուածարանութեան, Փիլիսոփայութեան և Պատմութեան ընթացքը՝ չորս:

դ) Նկարագրի եւ նուիրումի կրթութիւնը: Քէլչամի գպրոցին կեանքը բացարձակ հնազանդութեան և պարզութեան կեանքն է: Սպասաւորներ չկան հոն, և առանին բոլոր աշխատութիւնները ուսանողներ և վերակացուներ միասին կ'ընեն:

ե) Ընդունուելու համար դեռաճառ արիք: Տղաք կ'ընդունուին 16 տարեկանին: Առաջին երկու կամ երեք տարին անոնք կ'ապրին զբոսորդին զատ մէկ բաժնին մէջ, զատ վերակացուի մը հսկողութեան ներքեւ: 19 տարեկանէն վերջ կը հետեին Աստուածարանութեան դասին:

Կրնայ ըստել թէ Քէլչամ ուրիշ աստուածարանական գպրոցներէ կը տարբերի իր պարզութեամբ և խտտակցութեամբ: Ուսանողի մը տարեկան բոլոր ծախքը 65 սթրլիննէ աւելի չէ: Ասիկա կարելի եղած է, վասնզի ոչլաւի ալ ուսուցիչներուն մեծ մասը բարձրագոյն արտղաներ ունեցող հոգևորականներ են, բայց թշուաչ չեն ընդունիր ամենեւին:

Քէլչամի գպրոցը հիմնուած է և կը կառավարուի վանական նկարագիր ունեցող միաբանութեան մը կողմէ, որուն անդամները իրենց ժամանակն ու ծառայութիւնը ամբողջովին ի սպաս կը զնեն միաբանութեան գործին: Անգլիոյ եկեղեցիին մէջ զանազան կրօնական Միաբանութիւններ կան, որոնցմէ մէկն է Էլնկերութիւն Սրբազան Առաքելութեանը (Society of the Sacred Mission): Այս ընկերութիւնը կրօնականներու և աշխարհական գործիչներու համայնք մըն է, որուն անդամները ուխտած են նուիրուիլ աստուածային պաշտամունքին՝ երեք պայմաններով. —

ա) Հնազանդութիւն: Անոնք կ'ապրին կարգապահութեան տակ, միաբանութեան կարգերուն ու կանոններուն ենթակալ: Անոնք կը հրատարին իրենց անձնական գործը ընտրելու իրաւունքէն:

բ) Ազգասիրութիւն: Անոնք կը հրատարին իրենց անհատական ինչքէն, և հասարակաց քսակ մը ունին իրենց եղբայրներուն հետ:

գ) Կուսակիցութիւն: Անոնք ընկերական կապերէ ազատ կ'ապրին, այսինքն չեն ամուսնանար:

Տ. Տ. Մ. ի անդամներն են որ ստանձնած են Քէլչամի գպրոցը պահելու պատասխանատուութիւնը, թէև անոնք ուրիշ շատ ծառայութիւններ ալ կ'ընեն Անգլիոյ եկեղեցւոյն, թէ՛ Անգլիոյ և թէ՛ Հարաւային Աֆրիկէի և թէ՛ ուրիշ տեղեր:

Գպրոցին ուսանողները, Քէլչամի դասընթացքը աւարտելէն ետքը, քննուելու համար պէտք է ներկայանան մէկ կամ աւելի եպիսկոպոսներու: Սարկաւոյց կամ քահանայ ձեռնադրուելէ ետքը անոնցմէ շատեր կ'երթան Անգլիոյ մէջ՝ ծխատեղ քահանայ կ'ըլլան և կամ օտար երկրներու մէջ՝ միսիօնար: Այս պարագային, անկիլքան եկեղեցականութեան մեծ մասին պէտք անոնք կը պահեն իրենց անհատական գոյքերն ու ստացուածքները, և ազատ են ամուսնանալու երբոր ուզեն: Բայց կ'ապրին ու կը գործեն իրենց գտնուած թեմին եպիսկոպոսին տնօրէնութեան և իրաստութեան ներքեւ և եկեղեցիի կանոններուն համաձայն:

Սակայն ուսանողներէն անոնք որ կը վաճառեն մտնել Տ. Տ. Մ. ի մէջ, այդ պարագային ձեռնադրութենէն առաջ կամ յետոյ, անոնք կ'ընդունուին իրեն ընկերութեան սկանակ կամ նորընծայ, և յետոյ կ'ընեն վանական կեանքի վերոյիշեալ երեք հանդիսաւոր ուխտերը:

Գրեց՝ ԼՍՅՐ Լ. ՊԸՔՍԵՆՆ

Հայացուց՝ ՆԵՐՍԷՍ ՍՐԿ. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

(Սիոն, 1927 Յուլիս - Օգոստ., էջ 251)

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԼԻԲՍՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻՍ

Ս. Արտոյա Միաբաններէն Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Տնօրէն Ժողովոյ որոշմամբ, Լիբանան եւ Սուրիա դրկուեցաւ առակերներ արձանագրելու ժառանգաւորաց Վարժարանի համար: Հոգեւոր Հայրութիւն յանձնարարուեցաւ նաեւ հետեւեալ ընդ Սուրբ Տեղեաց մէջ սպասուելու համար աշխատար Միաբաններ եւ արձանագրել, ու հետաքրքրելու նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի մեր վանապատան կալուածներու վիճակով: — Վերադարձին Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. տուաւ իր ընդարձակ Տեղեկագիրը, որմէ կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները:

Այցելած է Պէյրութ, Հալէպ եւ Դամասկոս քաղաքներու երեսուն հայ նախակրթարաններու 2. դասարանի եւ երկրորդական վարժարաններու աշակերտութեան. տեսակցելով անոնց հետ դասարանի եւ կամ վարժարանի սրահին մէջ: Արձանագրուած են 20 ուսանողներ. որոնցմէ Տնօրէն Ժողովը պէտք է ընտրէ յարմարագոյնները, որպէս ժառանգաւորաց Վարժարանի աշակերտներ եւ ատենին հողորդ եւ թիւսներուն որպէս զի անոնք պատրաստուին Սեպտեմբերի կէ-ին երուսազմ գալու:

Աշակերտ արձանագրելու գործին կապակցութեամբ, Հոգեւոր Հայրութիւնը շեշտեց Ն. տեհալ կէտը. —

Մայիս ամսու կէ-էն սկսեալ մինչև Յունիս ամսու կէ-ը, այսինքն Դպրոցական եւ Պետական կրթական ֆունկցիանց նախընթաց շարքին, յարմարագոյն ժամանակն է աշակերտ արձանագրելու: Նախ, որովհետև կարելիութիւն կայ աշակերտները անձնապէս տեսնելու զպրոցին մէջ եւ շրջանաւարտ դասարաններու աշակերտներուն ներկայացնելու ժառանգաւորաց Վարժարան ընդունուելու պատենութիւնը: Յետոյ, շրջանաւարտ ըլլալիք աշակերտներ, որոնք իրենց ապագայ ընելիքի մասին ծրագիր պիտի կազմեն, հոգեւոր ապարէզ մտնելու կարելիութիւնն ալ առիթ կ'ունենան առարկայ դարձնելու ծնողաց հետ խորհրդակցութեանց: Նոյնչափ կարևոր է տեսակցութիւնը զպրոցի Տնօրէնին հետ: Ողջամիտ Տնօրէն մը մեծ օժանդակ է, նկարագրով եւ ուղիւնութեամբ յարմար աշակերտներ արձանագրելու գործին մէջ:

Պէյրութ

Մայիս 16ի առաւօտուն ներկայացած է Պէյրութի Հայոց Առաջնորդ Դեր. Խորէն Սրբազանին որուն ներկայացուցած է Նորին Ամենապատուութեան իրեն տուած յանձնարարագիրը, ուղղուած Լիբանանի Սուրիոյ Սրբազան Առաջնորդներուն եւ հայ վարժարանաց տնօրէններուն: Առաջնորդ Սրբազանը իր կողմէ ստորագրուած պաշտօնագիր մը տուած է իրեն Թեմին Ազգային

Վարժարաններու Տնօրէնութեանց ուղղեալ, որմէ նաև շորս օրինակներ բազմազգրել տուած է կցելու համար Պատրիարքարանէն իրեն տուած յանձնարարագրին եւ զրկելու Պէյրութի շորս հայերէն օրթերթերուն — Ազգակ, Այլ, Արարատ, Զարթով: Ասոնցմէ առաջին երկուքը զանց ըրած են Պատրիարքարանի յանձնարարագիրը եւ հրատարակած են յայտարարութիւն մը, յիշուան Ազգ. Առաջնորդարանին ստորագրութեամբ. իսկ վերջին երկուքը հրատարակած են Պատրիարքարանի յանձնարարագիրը միայն, յայտարարելով Առաջնորդաց ակնարկութիւնը:

Մայիս 17էն սկսեալ, այսինքն Առաջնորդարանէն յանձնարարագիր ստանալէն եւ ծանուցումը թերթերուն յանձնուելէն յետոյ, օրական շորս վարժարան այցելած է, նախ ներկայանալով վարժարանի տնօրէնին, յետոյ, անոր առաջնորդութեամբ, բարձրագոյն դասարանի աշակերտներուն, ներկայացնելով ժառ. Վարժարանի ներքին կեանքը, ուսումնական ծրագիրը եւ նպատակը, եւ յայտնելով թէ թեկնածուները պէտք է ունենան Ֆիզիքական առողջութիւն, ուսումնատենչութիւն եւ երգելու սէր: Նոյն ատեն թելադրած է որ ինքնակենսագրութիւն մը պատրաստեն եւ իրենց ծնողաց հետ խորհրդակցելով անոնց հաւանութիւնը առնեն: Իսկ արձանագրութեան համար, երկու օր միջոց տալով, երկրորդ ժամագրութիւն մը տուած է իւրաքանչիւր տնօրէնէն, եւ երկրորդ հանդիպումին արձանագրած է խնդրագիր-բանաձևին մէջ պահանջուած մանրամասնութիւնները, նոյն ատեն կատարելով քննութիւնը թեկնածուներուն կրթութեան եւ երգելու ընդունակութեան: Դիւրացնելու համար աշակերտներուն բժշկական քննութեան ենթարկուելու գործը, Պէյրութի Բարեգործական Դարձանատան պատասխանատու Բժիշկ Երուստիկ Մարգարեանը սիրայօժար յանձն առած է քննել ներկայացող թեկնածուները եւ բժշկական վարժագիրը տալ:

Հոգեւոր Հայրութիւնը այցելած է 16 հայ վարժարաններ Պէյրութի մէջ: Հայ երկրորդական վարժարանի մը բարեացակամ տնօրէնին

թեւազրույթեան համաձայն, իր վարժարանի յարձարագոյն աշակերտներու ծնողաց նամակ զրկած է, ժամագրութիւն տալով անոնց Ն. Ե. Ը. ի գրասենեակին մէջ: Իսկ ուրիշ Երկրորդական վարժարանի մը աշակերտներուն չէ կրցած հանգիպել, որովհետեւ վերապատուելի տնօրէնը յարձար չէ տեսած իր աշակերտներուն խօսիլը, նկատի ունենալով հայ համայնքին երկպառակտուած վիճակը և ուղղելով անկողմնակալ մնալ, հակառակ որ Երուսաղէմի ժառանգ. վարժարանը որեւէ կայ չունէր երկպառակտումին հետ, և իր վարժարանի աշակերտներուն ստուար մէկ թիւը կուգար Հայց. եկեղեցւոյ դաւակներէն:

Հալէպ

Հոգ. Հայրը Հալէպ քաղաքին մէջ մնացած է Մայիս 29 - Յունիս 6. և այցելած է տասնըմէկ հայ նախակրթարաններ և Երկրորդական վարժարաններ: Առաջին օրը, մինչև կէսօրէ վերջ ժամը 4, փորձած է հաղորդակցիլ Առաջնորդ Տ. Ղևոնց Սրբազանին հետ, բայց կարելի չէ եղած: Եւ երբ յայտնած են թէ քաղաքէն կը բացակայի, Պր. Գէորգ Ներսոյեանի ընկերակցութեամբ Առաջնորդարան գացած է, ուր քարտուղար Պր. Սամուէլին և Առաջ. Փոխանորդ Տ. Մկրտիչ Հօր բացատրած է իր այցելութեան նպատակը: Եւ որովհետեւ յաջորդ օր Համբարձման տօն էր (և այդ առիթով ներկայ եղած է Քառասուն Մանկունք եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին), Ուրբաթ առաւօտ ստացած է պաշտօնական յանձնարարագիրը վարժարաններու տնօրէնութեանց ուղղեալ, և սկսած է այցելութեանց: Հալէպ ժամանելուն առաջին օրը, հաւանութիւնը առնելէ յետոյ Առաջնորդարանի և Բարեգործականի վարչութեան, Հալէպի երկու հայ թերթներուն մէջ (Արեւելիք և Սուրիա) յայտարարութիւն մը տուած է ծանուցանելով իր այցելութեան շարժառիթները և յայտնելով թէ իրեն հետ անձամբ տեսակցութիւն կարելի է ունենալ ամէն առաւօտ ժամը 10-12 Ազգ. Առաջնորդարանի, իսկ կէսօրէ յետոյ ժամը 4-6՝ Հայ Բարեգործական Միութեան գրասենեակներուն մէջ: Երկու թերթներն ալ, յաջորդական երեք թիւերով, հրատարակած են այս յայտարարութիւնը առանց վճարումի:

Դամասկոս

Դամասկոսի մէջ, Առաջնորդ Շաւարշ Սրբազանի գիտութեամբ, Հոգ. Հայրը այցելած է գոյութիւն ունեցող երեք նախակրթարանները՝ որոնք 2. աւարտական դասարան ունէին, շտացանցա թիւով մանչերով, Յունիս 7-11 մնացած է Դամասկոս, առաւելաբար զբաղելով վանքապատկան կալուածներով:

Հոգեւոր՝ Հայրուրբը իր Տեղեկագրին մէջ՝ իր մասնաւոր գնահատանքը և գոհունակութիւնները կը յայտնէ Պէյրութի, Հալէպի և Դամասկոսի Սրբազան Առաջնորդներուն եւ Ազգային վարժարաններու ժրջան Տնօրէններուն, այն

գիւրութիւններուն համար զորս իրեն ընծայեցին. և հայ թերթներուն — Ազգակ, Այդ, Ահաւա, Արեւելիք, Քարթոն, Նայիրի, Սուրիա — որոնք ազնուօրէն տրամադրեցին իրենց սուղ էջերը, ծանուցանելու համար իր առաքելութիւնը: Գոհունակութեամբ կը յիշէ Հոգ. Տ. Բարգէն Վրդ. վարժապետանը, որ իր ինքնաշարժով մեծապէս զիւրացուց Հայրուրբին երթեկութիւնը թէ՛ Պէյրութի և թէ՛ Հալէպի մէջ. նաև Պր. Գ. Ներսոյեանին, որ Հալէպի վարժարաններուն իր այցելութեան ընկերացած է, և Բժիշկ Երուանդ Մարգարեանին, որ Պէյրութի մէջ արձանագրուող աշակերտներուն բժշկական քննութիւնը կատարած է սիրայմար:

Պատասխանութիւնք և ժամապաշտականք

Իրեն տրուած պարտականութիւններէն անկախաբար, Հայրուրբը առիթ ունեցած է երկիցս այցելելու Անթիլիասի կաթողիկոսարանը, և զոյգ զպրեօնքերը Պր. Բարգէնի և Պէյր Մէրիի մէջ: Իսկ Պէյրութի, Հալէպի և Դամասկոսի մէջ եօթը դասախօսութիւններ տուած է «Ապաշխարութիւն», «Ազգային եկեղեցիի մասին Սխալ լմբրուումներ», «Շնորհներ և Անոնց Բաշխուած» նրութեան մասին, ժամապաշտութեանց ներկայեցած է Պէյրութի Ս. Գէորգ և Ս. Յակոբ եկեղեցիներուն մէջ (առաջինին մէջ Ս. Պատարագ մատուցած և քարոզած է), Հալէպի Քառասուն Մանկունք (Համբարձման օրը), Ս. Աստուածածին և Ս. Գէորգ եկեղեցիներուն և Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ: Հալէպի Կիրակնօրեայ վարժարանի ուսուցիչներու կազմակերպած դասախօսութեանց առիթով, ուր ներկայ էր աւելի քան երկու հազար բաղմութիւն, տեղի ունեցած են անհանջ միջազգային, հաւաքովիէն դուրս և յետոյ, որոնց մասին անզրադարձան իրարու հակընդդէմ թերթեր: Միջազգային արդիւնք էին ներքին անհանգուրժողութեանց և ոչ մէկ կայ ունէին իր անձին հետ, քանի որ ան հիւր մըն էր քաղաքին մէջ և պատրաստ էր ընդառաջելու որեւէ մէկ կազմակերպութեան կրօնական և մշակութային ձեռնարկին մէջ խօսելու հրաւերին: Պատահաբար ներկայ գտնուած է նաև Հալէպահայ Ուսուցչական Միութեան կազմակերպած մէկ դասախօսութեան, ուր առիթ տրուած է իրեն քանի մը խօսք ընելու:

Շնորհակալիք

Իր առաքելութեան աւարտին, Հայրուրբը պարտք կը զգայ իր գոհունակութիւնը յայտնել Պր. Յարութիւն Զօլաքեանին (երուսաղէմէն) և Հոգ. Տ. Բարգէն վարդապետին (Պէյրութէն), որոնք իրենց ինքնաշարժին մէջ ճամբու ընկերառին զինք, առաջինը Երուսաղէմէն Պէյրութ, և երկրորդը Պէյրութէն Հալէպ իրենց ճամբորդութեան ընկացքին: Նմանապէս շնորհակալիք Տէր և Տիկին Վահան Դօրղօրեանին (Պէյրութ), Տէր և Տիկին Սարգիս ձէպէճեանին (Հալէպ), և Շաւարշ Սրբազանին (Դամասկոս), որոնք հիւրընկալած են զինք:

ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՎԱՆԱՆԵՐՈՒ

Կ Ո Չ Ո Ւ Մ

Շաբաթ, 22 Յունիս, Կարուղիկէ Ս. Էջմիածնի տօնի հանդիսաւոր նախասօնակէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ կուսակրօն քահանայութեան կոչման արարողութիւնը՝ Ս. Արթուրոս Ընծայարանի Բարեկեան Սարկաւագներէն Գրիգոր Սրկ. Սահակեանի, Արմենակ Սրկ. Շիրվանեանի, Վարուժան Սրկ. Աբելեանի եւ Կարապետ Սրկ. Գապագեանի: Առաջին երկուքը արդէն իսկ աւարտած էին Ընծայարանի եւնուոյն դասընթացը, իսկ միւս երկուքը՝ Ընծայարանի Բ. դասարանը, եւ սակայն նկատի ունենալով հոգեւորականներու կարիքը Ս. Արթուրոս ներս ու անոնց ուշիմութիւնն ու յառաջդիմութիւնը ուսումնական մարզին մէջ, անոնք եւս, Պատ. Տնօրէն Ժողովոյ որոշումով, արժանի նկատուեցան ընդունելու քահանայութեան սուրբ ասիճանը:

Չորս ընծայեալները, սպիտակ շապիկներ հագած, եկեղեցւոյ մուտքէն՝ ձեռադիր զնայելիք, առաջնորդութեամբ Լուսարարապետ Գեորգ. Տնօրէն Նպս. Գալուստեանի՝ որ կը կատարէ խորհրդակցական պաշտօնը, եւ օժանդակութեամբ առընթերակայ վարդապետ հայրերու, առաջացան մինչեւ եկեղեցւոյ դասը՝ ուր, բնիկն առաջ բազմած եւ ձեռնադրիչ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, քահանայապետական զգեստաւորմամբ:

Երգուեցաւ «Նայեա՛ ի մեզ եւ ողորմեա մեզ Քրիստոս» սրտաուշ շարականը որ խորհրդաւոր շունչով մը եւ յուզումով համակեց եկեղեցին եւ ներկայ հաւատացեալներու խումբն բազմութիւնը:

Հարց-պատասխանի ձեւով Ձեռնադրիչ Սրբազանը քննեց թէ կոչեցեալներն ունե՞ին պահանջուած արժանաւորութիւնը այս սուրբ կոչման համար: Այս սուղումը կատարուելէն վերջ ընծայեալները մօտեցան Ձեռնադրիչ Սրբազանին եւ հրաւիրուեցան հրաժարելու 159 հերձուածողներէ եւ առակերտելու եկեղեցւոյ բոլոր ուղղափառ հայրապետներուն: Ապա միաձայն արտասանեցին հաւատոյ ուղղափառ դաւանութիւնը:

Չ Ե Ռ Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Յաջորդ օր, Կիրակի, պատարագիչն եր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ ձառու գիրքէն առաջ բազմեցաւ Ս. Սեղանին առջեւ եւ նորընծաները հանուեցան եւ ձեռադիր շարուեցան բնիկն վրայ: Խորհրդակցական Սրբազանը իրեն առընթերակայ ունենալով Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. ք. եւ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. ք. ներկայացուց եկեղեցւոյ խնդրանքը՝ նորընծաները քահանայ ձեռնադրելու: Ձեռնադրիչ Սրբազանը ընծայեալները իրեն կանչելէ ետք, իր աջը իւրաքանչիւրին գլխուն վրայ դնելով կարգաց ձեռնադրութեան հոգեբախտաբար:

Ապա նուիրեալները դարձան ժողովուրդին ձեռամբարձ, ի նշան աշխարհի իրենց հրաժարման: Երգուեցաւ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականը, որուն դպիրները վարեն կը պատասխանէին յանուն ժողովուրդին «արժանի են»: Այս երիցս կրկնուելէ վերջ ընծայեալները դարձան Ս. Խորհրդին: Ձեռնադրիչ Սրբազանը նորընծայից ուրարները դրաւ անոնց պարանոցին վրայ, ի նշան Քրիստոսի քաղցր լուծին, վերածելով այսպէս սարկաւագական ուրար քահանայական փորձութիւն: Այս կէտէն ընդհատուեցաւ ձեռնադրութեան խորհուրդը. կարգացուեցան ձառու գիրքն ու Աւետարանը եւ Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Ողջոյն», երբ ընծայեալները կրկին ձուկի եկան Պատրիարք Սրբազանին առջեւ: Պատեան աղօթքներէ յետոյ անոնք ստացան քահանայական սեւ փիլոն եւ եկեղեցական միւս զգեստները — սաղաւարտ, վակաս, գօթի, շուրջառ եւայլն, շրջուրեան ուրոյն աղօթքներով: Ապա Ս. Սեղանը վարագուրուեցաւ, դպիրները երգեցին նորընծաներուն համար առաջին «Խորհուրդ խորին»ը: Երբ վարագոյնը բացուեցաւ, ընծայեալները քահանայական լիւր զգեստաւորումով շարունակեցին խորհրդին ձախակողմը:

Օ Մ Ո Ւ Մ

Չեանադուրեան ամենէն յուզիչ եւ սր-
 ատու պանը կը կազմէ օման խորհուրդը:
 Ս. Սեդան կը բերուի միւս անարափ աղանին:
 Պատրիարք Սրբազանը «Առաքելոյ աղանոյ»
 տարականը երգելով կը հեղու Սրբալոյս Միւ-
 սոնը ոսկեայ ընդունարանի մը մէջ: Օման
 խորհուրդուրեան պահուն, անուններու
 փոփոխութեան հետաքրքրութիւնը կը համակ
 եկեղեցին լեցնող բազմութիւնը: Աւ անա
 Սրբազանը Ս. Միւսոնով կ'օժէ նակասն ու
 զոյգ ախերը նորընծաներուն, շալով իւր-
 անչիւրին նոր անունը: Գրիգոր Սրկ. կոչ-
 ունցաւ Տ. Գրիգ., Արմենակ Սրկ. Տ. Աբդ.,
 Վարուժան Սրկ. Տ. Լեւոն, իսկ Կարապետ
 Սրկ. Տ. Օհան կուսակիցի ֆահանայ:

բուրե իր ձեանասուններուն նորած նակաս-
 ները: Նոյնը կ'ընէ ամբողջ եկեղեցական
 դասը, բեմ բարձրանալով: Իսկ հաւասարեալ
 ժողովուրդը կատարեց այդ արարողութիւնը
 Պատարագէն ետք, երբ չորսն ալ եկեղեցւոյ
 դասին մէջ կը վերձանէին իրենց առջեւ
 գրուած Աւետարանները:

Ս. Պատրիարքը քարոզեց, ցոյց տալով նո-
 րընծաներուն առջեւ բացուող զործունեու-
 րեան դասը իբրեւ ծառայութեան ու նուիր-
 ութեան ասպարէզ մը, ուրիշ պէտք է ընթացան
 լուսաւորում Ս. Հոգիին լոյսով, ըլլալու
 համար տարունակողները այն մեծ գործին որ
 սկիզբ առաւ մեր մէջ Ս. Գրիգոր Լուսաւո-
 րիչով եւ Կարօղիկէ Ս. Էջմիածնի ճիմար-
 կութեամբ՝ որուն յիշատակն էր այսօր:



Նորընծաներ իրենց մեծատոններուն հետ:

Չախէն աջ՝ Տ. Օհան Արղ., Տ. Աբդ. Արղ., Լուսաւորապետ Տ. Շնորհ Նաթ., Ամեն. Ս. Պատրիարք Հայր,
 Ժառ. Վարուժանի Տեսուչ Տ. Հայկազուն Նաթ., Տ. Գալիք Արղ. եւ Տ. Լեւոն Արղ.:

Այս Պատարագիչ Սրբազանը կարճ ա-
 յոբի մը ետք, նորընծաներուն ձեռքը տուաւ
 Քրիստոսի կենարար մարմինն ու արիւնը
 պարունակող Ս. Սկիւնը՝ որով կը ստանային
 անոնք իշխանութիւն խորհրդակատարելու Ս.
 Պատարագը:

Այս ստացումէն անմիջապէս ետք, նորըն-
 ծաները տուին ժողովուրդին իրենց առաջին
 օրհնութիւնը: Օմումը վերջացած է: Սարկա-
 տազը կը ձայնէ «Ողջոյն տու միմիանց ի
 համբոյր սրբութեան», եւ Չեանադուրիչ Պատ-
 րիարք Սրբազանը ամենէն առաջ կը համ-

ՎԵՂԱՐԻ ՏՂԻԶՈՒԹԻՒՆ

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութենէն
 ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց
 նորընծաներուն վեղարի տալութեան կարգը:

Ս. Գրոց ընթերցումներէ եւ երկար ա-
 յոբներէ ետք, Սրբազան Հայրը վերջին կարճ
 ախոբով մը վերջուց անոնց զրուխէն սար-
 կաւազական ջբուրները բախով. «Հանցէ Աս-
 տուած զնին մարդն գործով իրով»: ապա
 հազցուց վեղարը, աւելցնելով. «Աստուած
 զլեցուցանէ քեզ զնոր մարդն...»: Նորըն.

ձաները, վեղարք իրենց գլուխներուն, կանգնեցան հաւասարեցաներուն առջե՛ր՝ գոհունակութեան եւ լուրջ ուրախութեան ժպիտով մը պայծառակերպում: Այսպէս վերջացաւ հոգեւոր երջանկութեան մեծ օրը Ս. Յակոբեանց Աբխիսի եւ համայն Մաղիմահայութեան համար:

Նորընձաները իրենց ֆառասունքի պատասաւրեան օրերը անցուցին Ս. Յարութեան Տանարին մէջ, իրենց առաջնորդ ու վարժիչ ունենալով Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեանը:

Նորընձայ Աբելյաները Յուլիս 23-26 Մայր Տանարին մէջ մասուցին իրենց անդրանիկ Ս. Պատարակները:

Պատ. Տնօրէն Ժողովոյ օրոշումով, Հոգ. Տ. Գալիք Աբղ. նշանակուեցաւ վարիչ Ս. Արոսոյս պատեօնաբերը Սէ:ի: Հոգ. Տ. Արիս Աբղ. կարգուեցաւ փոխ-Տեսուչ Ժառանգ. Վարժարանի: Հոգ. Տ. Լեւոն Աբղ. եղաւ գաւազանակիր Ս. Պատարակի. իսկ Հոգ. Տ. Սնան Աբղ.՝ Հիւրընկալ Ս. Արոսոյ:

կարսնցեկ իր ճնողքը, ու հրաւեով ազատեց եւս կը մտնէ Հալեպի Քառասուն Մանկանց վարժարանը: 1952ին Նուստապի գալով աւակերսած է ժառ. Վարժարանին եւ 1955 Սեպտ. 10ին ձեռնադրուած է Սարկաւազ, ու երկու տարի շարունակած է իր ուսումը Բնծայարանի բաժնին մէջ:

ՀՈԳ. Տ. ՕՀԱՆ ԱՐԵՂԱՅ ԳԱՊԱԳԵԱՆ
ճնած է 1935ին՝ Հալեպ: Յանախած է ճընը. դավալդի Վարդանեան եւ Մեսրոպեան կրթարանները եւ ապա Կիւլդեհեան ազգ. երկսեռ վարժարանը: 1951ին Նուստապի գալով ընդունուած է Ս. Արոսոյս Ժառանգ. Վարժարանը, որուն ֆառամեայ ընթացքը աւարտելէ եւս, 1955ին ձեռնադրուած է Սարկաւազ, իր օժակից Տ. Լեւոն Աբելյանին հետ, ու շարունակած է իր ուսումը Բնծայարանի բաժնէն ներս:

ՍԻՈՆ, այս ուրախ առիթով, յանձն Ամեն. Ս. Պատարակ Ըօր եւ բովանդակ Միաբանութեան, կը մաղթէ նորընձաներուն օրըլլան «մեակ առանց ամօրոյ», ի փառս Հայց. Առաքելական Ս. Եկեղեցիին:

Կ Ե Ն Ս Ս Ա Գ Բ Ա Կ Ա Ս Ե Գ

ԿԻՍՍՍԱՐԿԱՆԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ՏԵՒՉՈՒԹԻՒՆ

ՀՈԳ. Տ. ԳԱԻԻԹ ԱՐԵՂԱՅ ՍԱՀԱԿԵԱՆ
ճնած է 1935ին՝ Նուստապի: Նախնական ուսումը առած է Բաղաբիս Ս. Թարգմանչաց ազգ. վարժարանին եւ Թերա Սանրա սեղալան դպրոցին մէջ: 1951ին մտնած է ժառանգ. Վարժարան, որուն ընթացքը լրացնելով 1954 Օգոստոս 15ին ձեռնադրուած է Սարկաւազ ու շարունակած իր ուսումը Բնծայարանի բաժնին մէջ:

21 Յուլիս Կիրակի երեկոյեան ժամերգութեան ժամը, Ամեն. Ս. Պատարակ Ըօրը զպրօթեան շորս աստեղծանքները շնորհեց Ս. Աթոռոյս Ժողով. Վարժարանի նախապատարաստական դասարանի 10 աշակերտներուն, Յարութեան Գոհաօղանեանի, Պետրոս Աղոյեանի, Սարգիս Այաւեանի, Իսախի Այաւեանի, Ժիրայր Գարաբեդեանի, Յովհաննէս Յովհաննէսեանի, Ժիրայր Եղանեանի, Արամ Կիւղաչեանի, Յովհաննէս Այաղեանի եւ Գարեգին Շիրվանեանի: Առանց կ'ընկերանար Ս. Աթոռոյս Միաբաններէն Գարբիէլ Նալպանեանը: Արարողութեանց խորտակակէք Գեր. Լուսարարապետ Տ. Ենօրէք Եղս:

ՀՈԳ. Տ. ԱՐԻՍ ԱՐԵՂԱՅ ՇԻՐՎԱՆԵԱՆ
ճնած է 1934ին՝ Հայժար: Յանախած է սեղաւոյն Ս. Եղիա ազգային վարժարանը: 1948ի Պաղեսիին աղէտին հետեւանով ընտանեօք կը հաստատուին Պէյրութ: 1952ին եկած է Նուստապի եւ երկու տարիով փայլուն լաւ չողորքեամբ աւարտելէ եւս ժառ. Վարժարանի դասընթացը, 1954ին ձեռնադրուած է Սարկաւազ, իր օժակից Տ. Գալիք Աբելյանին հետ: Ապա շարունակած է իր ուսումը Բնծայարանի եռամեայ ընթացքը բոլորելով:

Ապա կատարուեցաւ կրօնաստեղծագութեան աստեղծանքի տրւելու ժառանգ. Վարժարանի ընթացաւարտ դասարանի հինգ աշակերտներէն երեքին՝ Տիր. Յակոբ Թաշեանի, Տիր. Ժիրայր Շիրվանեանի եւ Տիր. Յովհաննէս Գարաբեդեանի՝ որոնք եկեղեցականութեան լուծը ընդունելու սիրաշօժար խոստում տուած էին:

ՀՈԳ. Տ. ԼԵՒՈՆ ԱՐԵՂԱՅ ԱՐԷԼԵԱՆ
ճնած է 1935ին՝ Պէյրութ: Փոքր տարիքէն ընտանեօք փոխադրուած է Եռաշա, ուր յանախած է Ս. Գլխաղբի ազգ. վարժարանը: Պաղեսիին դէպքերու ընթացքին Լիբանան գաղթած ասն, նամբան արկածով մը կը

Սրբազան Պատարակ Ըօրու կ'աղօթքներէ վերջ տուաւ անոնց իշխանութիւն ուրբար կրօնը, ինչպէս նաեւ բարձրա՛ ինկարկելու Աստուծոյ Տունը:

Երեքն ալ, եթէ Տէրը կամեայք, ժառօրէն պիտի ընդունին Աւագ Սարկաւազութեան աստեղծանք Ամեն. Ս. Պատարակ Ըօրէն, եւ յառաջիկայ զպրօթական տարեկաններէն պիտի մտնեն Ս. Աթոռոյս Բնծայարանի բաժնը՝ շարունակելու համար իրենց եկեղեցապատական բարձրագոյն ուսումը:

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԿԻՒՐԵՂ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ՇԻՐՄԱՔԱՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ

1949 Նոյս. 28ին, ի Տեր հանգեաւ Ս. Արոսոյ վերջին Պատրիարք՝ Նրանաշնորհ Տ. Կիւրեղ Բ.: Առաք-Հրեական պատերազմին պատճառաւ կարելի չէր եղած իր մարմինը բաղել Ս. Փրկչայ վանքի պատրիարքաց յատուկ գերեզմանավայրին մէջ, հետեւաբար բաղուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւիթը:

Քանի մը ամիսներ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Պատ. Տնօրէն Փոլովոյ որոշումով, ձեռնարկուեցաւ գերեզմանաւարի շինութեան, ազնիւ մարմարի վրայ, պատշաճ անխաղաղորձութեամբ, եւ հետեւեալ արձանագրութեամբ.


Այս սալան զիր է հանգստան
Տեառն Կիւրի Եւրալէեան
Սուրբ Սաղիմայ պատրիարքին
Անձնաճուրհ հօրն իւր հօտին
Որ յես բազում սառապանաց
Չանուն բարի իւր ժառանգեաց
Եւ նստեալ զան չորս յիթոս
Ի վերնականն եմոս յանդար
Ի 28ն Նոյս.ի 1949 ամի:

Գերեզմանաւարի պատրաստութենէն յետոյ, Յուլիս 28ին, Այլակերպութեան սօսին օրը կատարուեցաւ Շիրմին բացման արարողութիւնը:

Յետ Ս. Պատրիարքի, Միաբանութիւնը, զլիսաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր, բոլորուեցաւ Նրանաշնորհ Պատրիարքի գերեզմանին շուրջ, ուր կատարուեցաւ հոգեհանգրստան հանգիստաւոր պատշոն: Այս առիթւ Հանգուցեալին գերեզմանը ծաղկազարդուած եւ հետեւեալ կազմակերպութիւններէն զըւր կըւած ծաղկեպսակներով.

- ա) Ս. Յակոբեանց Միաբանութիւն:
- բ) Փառնկ. Վարժարան եւ Ընծայարան:
- գ) Ս. Քարգմանչաց Վարժարան:
- դ) Նուսադեմացի Հայոց Բարեսիրական Միութիւն:
- ե) Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւն:
- զ) Հայ Ներսասարգաց Միութիւն:

Փոլովոյուրդի հոծ բազմութիւն մը, ինչպէս նաեւ Ս. Քարգմանչաց Վարժարանի, Հ. Ն. Մ. ի, Հ. Մ. Ը. Մ. ի եւ Մասիս խումբի սկաութներ եւ արեւուլեներ, զլիսահակ ու զգածուած կը բոլորէին գերեզմանը, անգամ մը եւս բերելու համար խոր երախտագիտութեան ու որդիական յարգանքի իրենց տուրք անոր՝ որ իր ամբողջ պատրիարքութեան չորս տարիներուն եղաւ ամենահաս եւ զօրովազուր Հայրը Միաբանութեան եւ Սաղիմահայ



ԿԻՒՐԵՂ ՊԱՏՐԻԱՐԳԻ ՇԻՐՄԱՔԱՐԸ

ժողովուրդին: Մանաւանդ Արաք - Հեռական պատերազմի այն տարիներուն՝ երբ հանգուցեալ պատերազմի հետաճեալութիւնն ու իմաստութիւնը փրկեցին վաննն ու գաղութը արհաւիրենք: Բոլորի արցունքոս այնքանն եւ յիշողութեան մէջ յայնմապէս անգամ մը եւս ձեռն կ'առնէր պատերազմը հանգուցեալ Սեբաստիանի: — համակ սեր, նախքան, զոհողութիւնն ու անսակարկելի սեր հանդէպ Ս. Արտիին: Այս միջոցին մէջ յստի կ'առնէր Կեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, որ տարիներ շարունակ եղած էր Հանգուցեալի առակներն ու գործակիցը: Հայկազուն Սեբաստիան գերեզմանաբար շինութեան պարագային ալ բերած էր իր գործնական բաժինը: Իր բնաբանն էր «Վասնզի լաւ է ինձ մի օր ի գաւիթս քո, քան զնազարս»:

«Ստրաստերգուն Գաւիթ, իր արեւոյական կեանքի նոխարութեան մէջ, երբ բազմաշուրթիւն մը կ'ընէր աշխարհիկ վայելներու եւ Տիրոջ հոգեւոր Տանը միջեւ, կը նախընտրէր հոն բնայիլ մեկ օր միայն, քան հազարաւոր օրեր զուտը, արտաքին աշխարհին մէջ:

Կիւրեղ Պատերազմ, որ շուրջ երեսուն տարիներ նախքան իր անձը այս Հաստատութեան իբրեւ ուսուցիչ եւ վարչական գործիչ, կապեց ինքզինքը այս Արտիին ծառայութեանը գերագոյն նախնական մը: Ան րոպեայ բաժակը տառապանքին զմեռչին մտաւն, մանաւանդ իր պատերազմութեան վերջին տարիներուն, եւ այն սեւ օրերուն, ուր այս Սեբաստիան Տանը հրաւիրուի մը միայն մնաց անապարտ: Երբ իր նախորդները զանազան շնորհներով եւ շնորհաբարութիւններով պայծառացուցին այս Արտիին, Կիւրեղ Պատերազմ վերջին տարին միայն բաւական պիտի ըլլար իբրեւ անձընդիր հովիւ մը իր հօտին, անմահներու շարքին անցընելու զինքը իբրեւ ոսկի մեկ օրակը դարաւոր այս Տանը, որ արժանացաւ ընդհողութիւն անոր գաւիթին մէջ»:

Հանգստեան պատշտենն յետոյ, Ամեն. Ս. Պատերազմ Հայրը կատարեց շնորհներ բացումը, վերջնելով զայն ծածկող մեծախնայ սեւ շարքը:

Այս առիթը շնորհակալութեամբ պիտի է յիշել որ Երուսաղէմահայ պատուական ազգայիններէն Տիրոջ Պատերազմ Հինգրեւան հոգաց ամբողջ ծախքը գերեզմանաբար շինութեան: Տիրոջ Պ. Հինգրեւան, ազնիւ եւ եկեղեցատէր հայ մը, եղած է բարեկամը մեր Հաստատ-

ութեան. այդ զգացումով ալ ան յանախ ուրիշ առիթներով եւս բերած է իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը մեր Հաստատութեան:

Կ'աղօթենք որ Տերը իր լոյսի խորաններուն մէջ հանգչեցնէ Երուսաղէմի պատերազմի հոգին, եւ երկնի արեւոյութեան երանութիւնը շնորհէ Հինգրեւան գերագոյնի համայն ննջեցելոյ:

«Յիշատակն արգարոց օրհնեալ եղիցի»:

**Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՀՈԳԵԻՈՐ ԶԵՄԱՐԱՆԸ**

Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանը 1956-1957 ուսումնական տարին աւարտած է յաջողութեամբ եւ լուսաւոյն արդիւններով: Անցած ուսումնական տարին սեղծած է յուսալիչ հնարաւորութիւններ տալիս մեզ հասցնելով Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանը իր կեդրեցաւեան ու ազգայնաւոր կոչումը լուսաւոյնս իրաւորելու կարեւորութեան: Նորին Ս. Օծուրիւն Վեհապառ Հայրապետի հայրական եւ հետեւողական հոգատարութիւնը ի մասնաւորի մեծագոյն շարժում հանգիստացած է կազմակերպող ուժը այս տարւոյ ընդգծելի յաջողութեանց:

1956 - 1957 ուսումնական տարին Հոգեւոր ձեմարանը սկսած է 46 ուսանողներով եւ աւարտած՝ 41 ուսանողներով: 1957 - 1958 ուսումնական տարւոյ սկզբին ուսանողութեան թիւը պիտի հասնի վարսունի:

Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանը վստահութեամբ կը շարունակէ իր գործը ազգային առաւել արդիւնաւորելու յոյսով:

**ԽԱՐԹՈՒՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԻ
ԲԱՐՇԵՐԱՐԸ**

Խարթումի շորաշէն Ս. Գրիգոր Լուսաւորի եկեղեցիի մասին տրուած հակիրճ տեղեկութեանց ընթացքին (տես Սիոն, Ապրիլ - Մայիս 1957), թղթակիցի շնորհակալութեան միջոցով էր շատ կարեւոր իրողութիւն մը այս եկեղեցիի շնորհակալական թեմային:

Խարթումի եկեղեցիի կառուցումն է Սեֆէրեան առեւտրական տան հիմնադիր բարեհամբաւ թոքատոյցի Գրիգոր Սեֆէրեանի շնորհակալութիւնը Միլանաբնակ այրիին՝ Ազն. Տիգրան Զուարթի եւ իր որդւոյ Յակոբ եւ Էտի Սեֆէրեաններու շնորհատուութեամբ:

դիմումնագրով: Այս դատարանը ընդունած էր իր դատը Մարտ 20ին, հակառակ Պատ. քիարքարանի փաստաբանին յառաջ բերած զորաւոր փաստերուն թէ նման դատ մը Քաղաքային Դատարանի իրաւասութեան սահմաններուն մէջ չէր իյնար: (Տես Սիոն Ապրիլ-Մայիս, 1957, երես 122): Դատավարութիւնը տեղի ունեցաւ Յունիս 22ին եւ 29ին, ու Յուլիս 20-23ին, եւ վճիռը տրուեցաւ Օգոստոս 1ին (*):

Երուսաղէմի Նախնական Դատարանը կը վճռէր թէ 1956 Հոկտ. 13ին Տէրտէրեան Եպս.ի Տեղապահութեան պաշտօնանկումը ապօրէն էր, եւ հետեւաբար նաեւ ապօրէն էր Տիրան Արքեպիսկոսի Հոկտ. 13ին եւ դարձեալ Նոյեմ. 17ին Տեղապահ ընտրութիւնը: Դատարանը իր եզրակացութիւնը կը հիմնէր հետեւեալ երկու գլխաւոր պատճառաւորութեանց վրայ.

ա) Միաբանական Կանոնը կ'ըսէ որ Տեղապահը պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ նոր պատրիարքի ընտրութիւնը, բայց որոշ ժամանակ մը չի սահմաներ, որու ընթացքին պէտք է կատարուած ըլլայ այս ընտրութիւնը՝ պատրիարքի մահուան յաջորդող քառասուն օրերէ յետոյ:

բ) Միաբանական Կանոնի մէջ Տեղապահի պաշտօնանկութեան նախատեսութիւն չկայ, եւ այս թերութիւնը չէ դարձանուած Կանոնի մէջ: Արդ, քանի որ նախատեսութիւն չկայ Կանոնի մէջ՝ Տեղապահ մը պաշտօնանկ ընելու՝ վերջինը պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ որ նոր պատրիարք մը ընտրուի:

Այս վճիռը եթէ ընդունուի, կը նշանակէ որ Երուսաղէմի Առաքելական Աթոռը դարձեալ ինչպէս ընտրութիւնը կախուած պիտի ըլլայ Տեղապահի մը կամքէն եւ քմայքէն: Երկրորդ կէտը կը խախտէ ժողովական շատ կարեւոր եւ հիմնական սկզբունք մը, ըստ որում այն մարմինը որ կ'ընտրէ պաշտօնեայ մը, կը նաեւ դառնայ զայն, մինչեւ իսկ եթէ այս մասին ոչ մէկ օրինական տրամադրութիւն գոյութիւն ունենայ տրուած կազմակերպութեան կանոնագրին մէջ: Երբ Ս. Աթոռի կանոնագրութեամբ պատրիարքը կրնայ ենթակայ ըլլալ ամբաստանութեան եւ պաշտօնազրկման, տրամաբանական է հետեւցնել որ Տեղապահը աւելի եւս ենթակայ կրնայ ըլլալ նման ամբաստանութեան մը: Ուրիշ բազում օրինական կէտեր եւ փաստացի տուեալներ անտեսուած կամ խեղաթիւրուած ըլլալով, տրուած վճիռին մէջ, Երուսաղէմի Նախնական Դատարանի վճիռէն անմիջապէս յետոյ դիմում կատարուեցաւ Վերաքննիչ Ատեանին, դատին վերաքննութեան համար:

Վճիռին յայտարարութիւնը Միաբանութեան եւ ժողովուրդին մէջ մեծ յուզում յառաջ բերաւ: Յանուն Միաբանութեան հետեւեալ հեռագիրը յղուեցաւ բոլոր նախարարներուն, Պատ. Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Եպս.ի ստորագրութեամբ:

Տնցուեցանք իմանալով երուսաղէմի Նախնական Դատարանի վճիռը ընդդէմ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան. կը խնդրենք որ ճանչնաք մեր ընտրելի պատրիարքը, վասնզի մենք զայն ընտրած ենք օրինաւոր կերպով: Կը խնդրենք նաեւ որ անհետէ վերոյիշեալ վճիռը որովհետեւ այն իր մէջ կը պարունակէ միջամտութիւն մը մեր կրօնական գործերու եւ իրաւանց՝ որոնք ճանչցուած են ի հնուց անթիւ:

Նոյնիմաստ հեռագիր մըն ալ ղրկուեցաւ յանուն Սաղիմահայութեան՝ Երուսաղէմի Հայոց Մուխթարին կողմէ: — Վճիռին տրուած օրը շատեր գոցեցին իրենց խանութները եւ վանք հաւաքուեցան ուր իրենց կրօնական զգացումներուն վիրաւորուած ըլլալը արտայայտեցին խաղաղ վրդովմունքով եւ առանց միջադէպի: Միաբանութեանն էն ու ժողովուրդէն պատգամաւորութիւն մը ներկայացաւ քաղաքիս Չինուորական Կառավարիչին եւ իր տեսակէտները պարզեց անոր եւ զայն հաւաստիացուց թէ ժողովրդային այս ինքնաբերու զարտայայտութիւնները խաղաղութիւնը վրդովելու նկարագիր չունէին:

Օգոստոս 5ին, տպանեւեօթ Սրբազան եւ Հոգեշնորհ Հայրեր, բոլոր Սարկաւագ-

(*) Այստեղ անցողակի յիշեցք որ դատավարութեան աւարտման յաջորդ օրը եւ վճիռին տրուելէն շարք մը առաջ, Պէյրութի կարգ մը թերթեր իմացած էին «Ամմանէն հասնող հաւաստի լուրերէն» թէ դատավճիռը արդէն իսկ տրուած էր ի նպաստ Տէրտէրեան Եպս.ին . . .

ներու և ժողովրդեան ներկայացուցիչներու հետ միասին, խմբովին Ամման գացին, Պատր. Փոխանորդ Տ. Սուրէն Եպս. ի գլխաւորութեամբ, և ներկայացան Վարչապետին և Արդարութեան Նախարարին և պարզեցին իրենց տեսակէտները: Թէ՛ Վարչապետը և թէ՛ Արդարութեան Նախարարը յայտարարեցին որ Երուսաղէմի Նախնական Դատարանի վճիռէն յետոյ կացութեան մէջ որ և է փոփոխութիւն յառաջ չէ եկած, քանի որ Պատրիարքարանը վերաննութեան դիմած է և դատը կը շարունակուի. «Տիրան Արքայս. կը մնայ պետութենէն անչլուած Զեր Պատր. Տեղապահը» ըսաւ Վարչապետը: Թէ՛ Վարչապետին և թէ՛ Արդարութեան Նախարարին տրուեցաւ ըլլոր ներկայ Միաբաններէ ստորագրուած հետեւեալ յուշագիրը.

Նորին Վեմուրիւն Վարչապետին, Արափին Գործոց Նախարարին, Ներքին Գործոց և Պաշտօնութեան Նախարարին, Ելեւմտից Նախարարին, Առաջապահութեան և Ընկերային Բարօրութեան Նախարարին, Հողագործութեան Նախարարին, Արդարութեան Նախարարին, Տեսչութեան Նախարարին, Հանրային Գործոց Նախարարին, Արեւայական Պալատի Նախարարին, Ամման:

«Արքոց Յակօրեանց Միաբանութիւնը և Յորդանանու Հայ համայնքը իրենց վստահութիւնը դրած են Տիրան Պատրիարքի վրայ: Անոնք կը յուսան որ արդարութիւնը պիտի հաստատուի և իրաւունքը պիտի տրուի իր տիրոջ ընդ հովանեաւ Նորին վեմափառութիւն Հիւսէյն Թագաւորին:

Արքոց Յակօրեանց Միաբանութիւնը և Յորդանանու Հայ համայնքը իրենց այս գանգատագիրը ներկայացնելով Ձեզի, այն յոյսը կը տածեն որ Դուք պիտի պաշտպանէք իրաւունքը և զօրավիշ պիտի ըլլաք արդարութեան յաղթանակին:

Այս առիթէն կ'օգտուինք կրկնելու Միաբանութեան և Հայ ժողովուրդին հաւատարմութիւնը Նորին վեմափառութիւն Թագաւորին: Թող Ամենակալը պաշտպանէ ու պահպանէ զինք, և շնորհէ իրեն յաղթութիւն իր թշնամեաց վրայ»:

(Ստորագրուած Երուսաղէմ զանուղ քաներեք կարգաւոր Միաբաններու կողմէ):

Այս յուշագրին կցուած էր հետեւեալ լուսարանիչ գրութիւնը.

Արքոց Յակօրեանց Ուխտի Միաբանական Ընդհանուր Ժողովը այն Մարմինն է որ բարձրագոյն նեղինակութիւնն ունի վճիռներ տալու Պատրիարքարանի ըլլոր վարչական և կարգապահական հարցերու մասին:

Ամենայն Հայոց Պատրիարք-կաթողիկոսը ամբողջ Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ բարձրագոյն հոգևոր նեղինակութիւնն է որ կը վճէ ամբողջ եկեղեցիին վերաբերեալ հոգևոր հարցերը:

Արդ, Տէրտէրեան Եպս. իր վատ արարքներուն և Պատրիարքարանի Սահմանադրութեան ղէմ իր կատարած գործերուն համար, վար առնուած է իր Տեղապահի պաշտօնէն, կանոնաւոր կերպով և գաղտնի քուէարկութեամբ, Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ, 1956 Հոկտեմբեր 13ին:

Ապա, որովհետեւ Տէրտէրեան Եպս. իր վատ արարքները և հակասահմանադրական գործերը շարունակեց և Միաբանութեան Ընդհանուր Ժողովի նեղինակութիւնը արհամարհեց, Ս. Յակօրեանց Միաբանութենէն արտաքսուեցաւ, Միաբանականան կանոնի համաձայն, Միաբանական Ընդհ. Ժողովին կողմէ, գաղտնի քուէով, 1957 Մարտ 5ին:

Վերջապէս, Տէրտէրեան Եպս. իր վատ արարքներուն համար և եպիսկոպոսական իր պաշտօնին և կոչումին անհաւատարմի գտնուած ըլլալուն համար, ինչպէս նաև ամբողջ եկեղեցիին Քրտա բերող իր յուր գործերուն համար, Ամենայն Հայոց Պատրիարք-կաթողիկոսը պաշտօնական վճառագիր մը հանեց, Ապրիլ 13ին, 1957, և կախազայեց Տէրտէրեան Եպս. իր ըլլոր կրօնական և եկեղեցական պաշտօններէն, այնպէս որ Տէրտէրեան Եպս. այժմ չի կրնար կատարել ոեւէ կրօնական պաշտօն և չի կրնար պաշտամանց նախագահել եկեղեցւոյ մէջ:

Հակառակ այս բոլորին, Երուսաղէմի դատական իշխանութիւնը կը փորձէ պարտադրել Տէրտէրեան Եպս.ը Միաբանութեան վրայ, ինչպէս կը տեսնուի Նախնական Դատարանի որոշումէն, տրուած 1957 Օգոստոս 1ին:

Արքոց Յակօրեանց Միաբանութիւնը և Յորդանանի Հայ ժողովուրդը կը բողոքեն կարելի ամենէն զօրաւոր բռնեւոր՝ Պատրիարքարանի կրօնական գործոց մէջ քաղաքային իշխանութեանց այս անհանդուրժելի միջամտութեան ղէմ, կը բողոքեն նաև ընդդէմ անտեսումին Պատրիարքարանիս առանձնաշնորհումներուն և նաղարեան իրաւանց, որոնք հաստատուած են նաւուրց կիրառութեամբ և Սուլթաններու Ֆերմաններով և Երուսաղէմի նախկին ըլլոր կառավարութեանց կողմէ:

Տէրտէրեան Եպս.ի արտաքսումը եւ կախակայումը դուռ հոգեւոր եւ եկեղեցական գործեր ըլլալով, այս հարցերը կ'իյնան միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ պատկան իշխանութեանց հեղինակութեան սահմանին մէջ, և եկեղեցական իշխանութիւններ միայն իրաւունք ունին զբաղելու կամ քննելու ունէ հարց որ կ'իյնայ իրենց իրաւասութեան սահմանին մէջ, քննութիւն կատարելով և որոշում կայացնելով և վճռելով ունէ բողոքի, խնդրանքի և այլնի մասին, որ իրենց կը վերաբերի: Քաղաքային դատարաններ, կամ վարչական մարմիններ այս հարցերուն մէջ իրաւասութիւն չունին:

Քաղաքային դատարաններու կամ վարչական մարմիններու կողմէ միջամտութիւնը Պատրիարքարանի հոգեւոր իրաւասութեանց՝ պիտի կազմէ շատ անբաղձալի նախընթաց մը և լրջօրէն պիտի խանգարէ երուսաղէմի հայ համայնքի կեանքի ներդաշնակութիւնը: Այդ պիտի փասէ նաև Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան իմաստուն կառավարութեան լաւ անունին այլ համայնքներու առջև, ինչպէս նաև աշխարհի մէջ բոլոր անոնց առջև՝ որոնք կը սիրեն Ս. Քաղաքը և Ս. Երկիրը, և անոնց յարած են կրօնական կապերով:

4 Օգոստոս 1957, Երուսաղէմ

Օգոստոս 7ին եւ 8ին եօթը հոգինոց պատգամաւորութիւն մը, գլխաւորութեամբ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Եպս.ի, ներկայացաւ վերոյիշեալ երկուքէն դուրս նաև մնացեալ նախարարներուն մի առ մի, եւ անոնց յանձնեց վերելի գրութեանց պատճէնները, իրազեկ դարձնելով զանոնք տիրող կացութեան:

Ըստ այսմ, երուսաղէմի նախնական Դատարանի վճիռէն վերջ կացութեան մէջ ոչ մէկ փոփոխութիւն մտած է: Գեր. Տ. Տիրան Արքեպս. կը մնայ պետութեանէն ճանեցըւած Ս. Աթոռոյ Տեղապահը եւ Միաբանութենէն ընտրեալ Պատրիարքը: Իսկ Տէրտէրեան Եպս., որ աղբիւրն է շուրջ տարիէ մը ի վեր Վանքէն ներս ստեղծուած այս դժբախտ կացութեան, որ պատճառն է Միաբանութեանս անդամներուն թանկագին ժամանակին, կորովին եւ այլ կարգի ուժերու յումալէտս վատնումներուն, որ պատասխանատուն է մեր Ազգին ու Եկեղեցիի վարկին աղարտման եւ Միաբանութեանս ու Յորդանանու հայութեան մարտեր եւ պատուաւոր անուան նսեմացման, կը մնայ Ամման, շարունակելով «մնաս հասցնել Հայ Եկեղեցուն եւ Երուսաղէմի Ս. Աթոռին»:

Այս մնասարարութեան վերջին տգեղ արարը, առաջինին նման եւ նոյնչափ դաւաճանական ու ստապատիր, այն դիմումագիրն է զոր Տէրտէրեան Եպս. տուած է Յորդանանու Վեհափառ Թագաւորին: Իր այդ նորագոյն զրպարտագրին մէջ, որուն ամբողջական օրինակը ի ձեռին ունինք, կ'ըսէ ան ի միջի այլոց.

«Տարի մըն է որ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ենթարկուած է ուժգին փոթորիկի մը, որ կը սպառնայ քանդել Միաբանութիւնը: Ասիկա գործն է անոնց որոնք ըսնի տիրացած են վանքին եւ որոնք որդեգրած են կործանարար սկզբունքները համայնավարութեան: Այս շարժումը կը գլխաւորուի Տիրան Եպս. ներսոյեանի կողմէ որ Ընտրեալ - Պատրիարքի պաշտօնին տիրացած է բնութեամբ...»:

«Այս հաւաստումները կ'ընեն՝ հիմնուած ոչ միայն իմ անձնական տեղեկութիւններու վրայ, ըստ որում Տիրան Արքեպս. յարաբերութիւններ ունի անոնց հետ՝ որոնք կը գործեն տարածելու համար Միջազգային Համայնավարութիւնը Մերձաւոր Արեւելքի մէջ, այլ նաև այն աւելի եւս լուրջ եւ սարսափելի տեղեկութեանց վրայ, որոնք կը պահուին Հանրային Ապահովութեան պաշտօնատան թղթածրարներուն մէջ(*)...»:

«Կը խնդրենք որ հրովարտակ մը հանուի որ տայ ինձ անհրաժեշտ օժանդակութիւնը մաքրագործելու նախ Հայոց Պատրիարքարանը եւ ապա Հայրենիքը Միջազգային Համայնավարութեան այս գործակալներէն...»:

Իր առաջին զրպարտագրին մէջ Տէրտէրեան Եպս. մատնած էր զՏիրան Արքեպս. կոպոս իբրեւ «Ամերիկեան գործակալ» եւ իբրեւ «Սիւնական»: Այժմ այդ «մօտայ»ին ժամանակը անցած ըլլալով՝ որդեգրած է ներկայ ժամանակի պահանջած նորածեւութիւնը:

24 Օգոստ. 1957

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՈՒՅՑ

(*) Յերիւսաղէմ եւ հայրաքաղաք անհուօճ իր կողմէ:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ն Ո Ս Գ Ի Բ Ն Ե Ր

Յ.ՍԻՆ. Ս. Պատրիարք Հայրը հեռեւեալ հեռագիրը յոյն Յորդանանու Վեհապետին, անոր գտնակալութեան բարերաստիկ տարեդարձին առիթով, 10 Օգոստոսին:

Կ'օգտագործեմ Ձերդ Վեհափառութեան զանակալութեան երջանիկ պատեհութիւնը վերանորոգելու իմ յարգանքս եւ նուիրումս Հաւիտական Գահին, թէ՛ իմ կողմէն եւ թէ՛ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու հայ համայնքին. եւ կ'աղօրենք Ամենակալ Աստուծոյ որ շնորհէ Ձեր Վեհափառութեան երկար կեանք, հանդերձ բարութեամբ եւ երջանկութեամբ, որպէսզի կարենաք պատշաճել Յորդանանը Ձեր յարգանակներով ընդ հովանեաւ Հաւիտական դրօշի, որ միշտ յարթոյ պիտի մնայ կամօքն Աստուծոյ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ
Տեղապան եւ Ընտրեալ Պատրիարք
Հայոց Ներուալքիմի

Ի պատասխան վերոյիշեալ հեռագրին, Ն. Վեհափառութեանցն ստացուեցաւ հեռեւեալ հեռագիրը, 13 Օգոստոսին:

Ամենապատիւ
Պատրիարք Տիրան Ներսոյեան
Ներուալքիմ

Շնորհակալ եմ Ձեր անկեղծ շնորհաւորութեանց եւ բարի մաղբաններուն համար մեր Գահակալութեան տարեդարձին առիթով:

Էլ - ՀԻՒՍԷՅՆ

Հեռեւեակն է վերոյիշեալ հեռագրի արարիւրէն ընդգիրը:

١٩٥٧/٨/١٣ القصر الملكي - عمان
غبطة البطريرك تيران زسويان القدس
أشكركم على تهنيتكم الصادقة وتمنياتكم
الطيبة بذكرى جلوسنا .
الحسين

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՐՄԱԿԱՆՔ

● Կիր. 30 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեորգ Արեղայ Նաղարեան:

● Ուր. 5 Յունիս. — Վաղուան նախատօնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբի Հանդիսապետն էր Գեոր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 6 Յունիս. — Ս. Հօրն մերոյ Գիշորի Լուսաւորչին զիս ճեխարաց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր, Տանն Կիլիկիոյ Միաբաններէն Կիւրաբար Ս. Աթոռ ժամանած Հոգ. Տ. Ներսէն Արղ. Փապուհեան:

● Կիր. 7 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբի ժամարարն էր Հոգ. Տ. Ասղիկ Ե. Վրդ. Ղազարեան:

● Դչ. 10 Յունիս. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբի Հանդիսապետն էր Գեոր. Տ. Հայկազուն Եպս. Արրահամեան:

● Եչ. 11 Յունիս. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատոյց. ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Կիրակի Վրդ. Գարիկեան, և քարոզիչ, ընարան ունենալով՝ օրուան ծառու Աւետարանէն Վի՛ր երկնչիր. Նո՛ւտ վաճարիկ, զի հանեցաւ Հայր մեր տայ մեզ զԱրքայութիւնս (Ղուկ. ԺԲ. 32), ու ներկայացուց Ս. Թարգմանիչներուն Հնօրհի իրագործուած մեծութիւնները մեր փոքր հօտին մէջ: Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թ. վարժարանի բովանդակ ուսուցչական կազմին ու ուսանողութիւնը ստացան Ս. Հաղորդութիւն. իսկ Ս. Պատարագէն ետք. Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգրստեան պաշտօն՝ հայ մշակոյթի բոլոր վաստակաւորներու հոգիներուն ի հանգիստ:

● Եր. 13 Յունիս. — Վաղուան նախատօնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ:

● Կիր. 14 Յունիս. — Գիւս Տիոյ Ս. Աստուածամէնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան երաշխատօր Ս. Աստուածամէն մատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլիան: Մայրութեան խորհուրդին շուրջ քարոզիչ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

● Ուր. 19 Յունիս. — Վաղուան նախատօնակն ի Ս. Յակոբ նախագահիչ Գեոր. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Եր. 20 Յունիս. — Ս. երկաստան առաւելոցն Գրիսոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. Ս. Պողոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Մանուէլ Վրդ. Բարխուսեան:

● Կիր. 21 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր, Տանն Կիլիկիոյ Միա-

բաններէն. Նոգ. Տ. Ներսէս Արղ. Փայտուհեան: Քարոզից Նոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէրեան: Ժանրանալով «Անդգամն ասաց ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած» Սաղմսի խօսքին վրայ (Սաղմ. ԺԳ. 1), և ցոյց տուաւ անդամութիւնը իրբի ստորնայնոյ ուժ մը մարդէն ներս:

● Գշ. 23-Ուր. 26 Յուլիս. Ս. Աթոռոյս չորս նորընծայ արեղաները իրենց անդրանիկ Ս. Պատարագները մատուցին Մայր Տաճարին մէջ:

● Ուր. 26 Յուլիս. — Վաղուան նախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարն մէջ: Լանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

● Եր. 27 Յուլիս. — Յիւստակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր նորընծաներուն ուսուցիչն ու վարժիչը Նոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան: Ըստ ստորագրեան, նորընծայ արեղաները կը սպասարկէին Ս. Խորհուրդին:

— Կէսօրէ վերջ՝ Մայր Տաճարին մէջ մեծ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ Այլակերպութեան նախատունակը: Լանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

— Ս. Պատրիարքը նախագահեց նաև իրիկ-նաղէմին՝ Մայր Տաճարին մէջ պաշտուած ձեկեացէջի և Նսկման արարողութիւններուն:

● Կիր. 28 Յուլիս. — ՎԱՐԳԱՎԱՌ (Տօճ Այլակերպութեան Տեսան): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, եզրակացնելով թէ բարձունքներու վրայ և կեանքի տաղտուկներէն հեռու է որ միայն մարդիկ կրնան այլակերպուիլ. պայծառակերպուիլ հօգիտի Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի նորակերտ շիրմին քայման արարողութիւնը (Տե՛ս էջ 203):

— Կէսօրէ վերջ՝ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաման», Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ Ապա կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ ետք Ս. Պատրիարքը կարգաց Ս. Եղիշէ Վարդապետի Այլակերպութեան ծառին աշխարհարար թարգմանութիւնը (Տե՛ս Սիոն, Յունիս 1957, էջ 144):

● Բշ. 29 Յուլիս. — Յիւստակ Տապանակը: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր ժամարարն էր Նոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Շնորհք Եպօ. Գալուստեանի նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն, նախ Տաճարին գաւթիք՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պտրք: Հօր շիրմին վրայ, ապա հին կրատան և Չամփաղի գերեզմանավայրերուն մէջ:

● Ուր. 2 Օգոստ. — Վաղուան նախատունը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպօ. Բէմհանեանի:

● Եր. 3 Օգոստ. — Ս. Թաղէսի առաւելոյն Եւ Սանդիսայ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին Ս. Գլխադիր մատարան մէջ: Ժամարարն էր Նոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

● Կիր. 4 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամաս, բան մէջ: Պատարագից և քարոզից Նոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, եզրակացնելով թէ մարդ միշտ հակամէտ է վտորմութեան մէջ իյնալու. սակայն միշտ ալ ընդունակ է իր սայթաքումներէն ու հոգեկան անկումներէն կրկնբարձրանալու. որուն համար. սակայն. նախապայման է որ ան գիտակցութիւնը ունենայ իր անկատարութեան ու Տիրոջ շնորհքը խնդրէ: Ժամեհարու համար կատարեալին՝ Աստուծոյ Ս. Պատարագէն ետք տեղի ունեցաւ սրբազօր. նէքճի արարողութիւն՝ նախագահութեամբ Գեր. Տ. Շնորհք Եպօ. Գալուստեանի:

● Կիր. 11 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ ժամարարն էր Նոգ. Տ. Դաւիթ Արղ. Սահակեան: Քարոզից Նոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիներ, քնարան ունենալով «Ուսարուք յինէն, զի հեղ եմ և խոնարհ օրտի» (Մատթ. ԺԱ. 29), ըսելով թէ խոնարհութիւնը և հեղութիւնը քրիստոնէութեամբ էր միայն որ ի պատուի եղող առաքինութիւններ դարձան, որոնցմով մարդ կրնայ բարձրանալ:

● Կիր. 18 Օգոստ. — Բարեկեցում Ս. Աստուծամի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարն մէջ: Ժամարարն էր Նոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէրեան: Քարոզից Նոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան, Նիւթ ունենալով օրուան Աւետարանի ընթերցումէն անդամալոյժի բժշկութեան պարագան, և Քրիստոսի այս, ինչպէս նաև միւս բժշկութիւններէն եզրակացուց թէ հաւատքը նախապայման է բժշկութեան, և թէ հիւանդութիւնները շատ անգամ արդիւնք են մեղքին ու բարոյական և ֆիզիքական օրէնքներու զանցումին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

● Եշ. 27 Յունիս. — Կէսօրէ վերջ, Քաղաքի Թէրբա-Սանթա զոյրոցի ամսվերջի և վկայականաց բաշխումի հանդէսին, ներկայ գտնուեցան Ս. Թ. Վարժարանի Տեսուչ Նոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան և Տիար Կարպիս Հինդիեան:

● Գշ. 3 Յուլիս. — Նոգ. Տ. Ներսէս Արղ. Փայտուհեան և Նոգ. Տ. Զաւէն Արղ. Արղումեան նախաբար ժամանեցին Ս. Աթոռ Առաջինը մեկնեցաւ Բշ. Յուլիս 29ին, իսկ երկրորդը՝ Գշ. Օգոստոս 6ին:

● Եշ. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 180րդ տարեդարձին առթիւ. Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տըրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Նոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և Տիար Կարպիս Հինդիեան:

● Բշ. 8 Յուլիս. — Իսլամաց Գուրպան պայրամի տունին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետ ունենալով Նոգ. Տ. Հայկասեր

Վրդ. Պայրամեանը և Տիար Կարպիս Հինգլեանը, շնորհաբարութեան գնաց Քաղաքիս Վսեմ. Մուհաֆէզին, Ոստիկանապետին, Վսեմ. Միւֆթիին և Իրաքեան, Աէուսի Արարիոյ և Եգիպտական Հիւպատոսներուն:

● Ել. 18 Յուլիս. — Սպանիոյ ազգային տունին առթիւ. Սպանական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ղոզ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Ղոզ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Ուր. 19 Յուլիս. — Տիկ. Յրէտէրթ Վէսթըրի կողմէ. Ի պատիւ Տօքթ. և Տիկ. Էլսլնի, Ամերիկեան Քոյօնի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Տիար Կարպիս Հինգլեան:

● Բշ. 22 Յուլիս. — Պեճիքայի անկախութեան 118րդ տարեդարձին առթիւ. Պեճիքական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Ղոզ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Գշ. 23 Յուլիս. — Եգիպտոսի ազգային տունին առթիւ, Եգիպտական Ընդհ. Հիւպատոսին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ղոզ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Ղոզ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Կիր. 4 Օգոստ. — Ասորեսոց Հոմի Պատրիարքի մահուան քառասունքին առթիւ, Ասորեսոց Ս. Մարկոս եկեղեցիին մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Ղոզ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիլեան:

● Բշ. 5 Օգոստ. — Իրաքի Հայոց Առաջնորդ և Ս. Աւետիս Միաբան Ղոզ. Տ. Զգոն Ծ. Վրդ. Տէր Յակոբեան ժամանեց Ս. Աթոռ:

● Գշ. 7 Օգոստ. — Տէր և Տիկին Անտրիւ Գրիգորի կողմէ, Ի պատիւ Ամերիկեան Նոր Հիւպատոսի և Իր Տիկնոջ՝ Ֆրանքլինի տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Ղոզ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը և Տիար Կարպիս Հինգլեանը:

● Եր. 10 Օգոստ. — Կէսօրէ առաջ ժամը 10.30ին, քաղաքիս Անկլիքան Գեր. Մաքիմէս Արքեպս.ը Իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր. որ ընդունեց զինք Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, Ի ներկայութեան Միաբան Հայրերու:

● Կիր. 11 Օգոստ. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան 5րդ տարեդարձի առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, հետն ունենալով Ղոզ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեանը, գնաց Ամման, Արքունի Պալատ և արձանագրեց Իր անունը շնորհաբարութեանց այցելուներու տոմարին մէջ:

● Բշ. 12 Օգոստ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Ամմանի Հոգևոր Հօլի և Տ. Վազգէն Աբեղան, ներկայ եղաւ պետական մեծ նաչկերոյթին, որ տրուած էր Վարչապետին կողմէ, Զարքայի մէջ, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան տարեդարձին առթիւ, ներկայ էին Վեհ. Թագաւորը, Նախարարները, օտար տէրութեանց ներկայացուցիչներ և պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ:

— Օգային գծով Ս. Աթոռ ժամանեց Եւրոպայի Հայոց Կաթող. Պատուիրակ և Ս. Աւետիս Միաբան Գեր. Տ. Սիրոյրէ Եպս. Մանուկեան, Իրեն կ'ընկերանար Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանմեան՝ որ երկու շաբաթներէ ի վեր օդափոխութեան համար կը գտնուէր Լիբանան:

Գեր. Տ. Սիրոյրէ Եպս. ընդունուեցաւ շրջապատուելով Նախ Մայր Տաճար, ապա հանդերձ Միաբանութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր տեղի ունեցան բարեկալուստի խօսքեր և հիւրասիրութիւն:

● Գշ. 13 Օգոստ. — Ֆրանչիսկեանց Միաբանութեան Նորընտիր Կիւսթոս Գեր. Ալֆրէտօ Փոլիտօրիի քաղաք ժամանելուն առթիւ արքեւած ընդունելութեան ներկայ գտնուեցան, յանուն Պատրիարքարանիս, Ղոզ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան և Ղոզ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

● Գշ. 21 Օգոստ. — Առաւօտեան ժամը 9ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Գեր. Տ. Ս. Աւրէն և Սիրոյրէ եպիսկոպոսները, Ղոզ. Տ. Զգոն Ծ. Վրդ.ը, Ղոզ. Տ. Հայկասեր Վրդ.ը, Ինչպէս նաև Տիար Կարպիս Հինգլեանը, պաշտօնական այցելութիւն տուաւ Երուսաղէմի և Բերրոնի շրջանին Նորընտիր Զինուորական Կառավարիչ Հասան Գէյ Քէթիպի՝ Կառավարչատան մէջ:

— Ժամ մը ետք, Ֆրանչիսկեանց Միաբանութեան Նորընտիր Կիւսթոս, հանդերձ Միաբանութեամբ, Իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր. և Միաբանութեան, Ղոզ. հիւրը ընդունուեցաւ բովանդակ Միաբանութեան կողմէ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

● Ել. 22 Օգոստ. — Առաւօտեան ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Ղոզ. Տ. Տ. Թորգոմ և Կիւրեղ վարդապետները, Ինչպէս նաև Գաւազանակիր Ղոզ. Տ. Լեռն Աբեղան, փոխադարձ այցելութիւն տուաւ քաղաքիս Անկլիքան Գեր. Տ. Մաքիմէս Արքեպս.ին՝ Իրենց եպիսկոպոսարանին մէջ:

— Երեկոյեան Ս. Աթոռ ժամանեց Փարիզի Հայ Ազգային Թանգարանի հիմնադիր Տիար Ալպէրթ Աշճեան:

● Ուր. 23 Օգոստ. — Առաւօտեան ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Ի զլուս Միաբանութեան, փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Երկրիս Ֆրանչիսկեանց Միաբանութեան Նորընտիր Պետին:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՄՆԵՐ Ա. ԱԹՈՌՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. — Ա. Թարգմանչաց Մանկապարտեզի

Կիրակի, 7 Յուլիսի կէսօրէ վերջ ժամը Վին, ժառանգաւորաց վարժարանի բակի հինաւոր ընթացակարգի ներքին հաստատուած շարժական բեմին վրայ տեղի ունեցաւ Ա. Թարգմանչաց Մանկապարտեզի ամալիբրէի հանդէսը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ժողովուրդի բազմութեան:

Երկու ժամուրու ընթացքին, Մանկապարտեզի փոքրիկները յաջորդաբար և յաջող կերպով կատարեցին արտասանութիւններ (հայերէն, արարերէն և անգլերէն լեզուներով)՝ երգեր, պարեր, մարզանքներ, և այլն, որոնք ի յայտ կը բերէին վարժարանի Տեսչութեան հոգածութիւնն ու Մանկապարտեզի ուսուցչական կազմին տարուան մը նուիրեալ ու խնամքտաւ աշխատանքին արգասիքը:

Հանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը բաժնեց Մանկապարտեզի 3էրնթացաւոր փոքրիկներուն վկայականները, և տայէ ետք անոնց իր օրհնութիւնն ու պատգամը փակեց հանդէսը զՅանգանիչձով ու Տէրունական ազօթքով:

Բ. — Ա. Թարգմանչաց Վարժարանի

Պայլիկներու երգման արարողութիւնը

11 Յուլիս, Լինքշարթի, Ա. Թարգմանչաց տանի երեկոյեան ժամը 7ին, ժառ. վարժարանի սրահին մէջ կատարուեցաւ Ա. Թ. Վարժարանի 35 Պայլիկներու և 15 Սկասուներու երգման արարողութիւնը, նախագահութեամբ Ամեն. Սրբ. Պատրիարք Զօր. և ի ներկայութեան Միաբանութեան, վարժարանի աշակերտութեան և ծնողներու ու հրաւիրեալներու բազմութեան:

Եղան բանախօսութիւններ՝ Սկասուութեան և անոր կատարած դերին ու անհրաժեշտութեան մասին, Արնոյշներու Խմբապետուհի Օր. Ազնիւ Ետղուպեանի և Պայլիկներու Պօղոս Աբրահամեանի կողմէ, ինչպէս նաև երգեր ու արտասանութիւններ վարժարանի Սկասուներուն կողմէ: Ապա կատարուեցաւ երգման արարողութիւնը: Հանդէսը փակեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Խօսելով Սկասուտիզմի ծագման և նշանակութեան շուրջ ու իր օրհնութիւնը տալով Սկասուներուն:

Գ. — Հնրուեան Ազգ. Վարժարանի, Ամման

14 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը 10ին Ամմանի Բէթթա սինէմային մէջ կատարուեցաւ

տեղւոյն Հեթումեան ազգային երկուս վարժարանի ամալիբրէի հանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. ներկայ էր խոսնակ բազմութիւն ժողովրդեան:

Հանդէսը տեղի աւելի քան երեք ժամը, որոնց ընթացքին հանդիսականները վայելցրին վարժարանի աշակերտութեան կողմէ եղած պարերը, երգերը արտասանութիւններն ու օգերձները: Վարժարանի Տեսուչ Զօր. Տ. Վազգէ Արեղան կարգաց վարժարանի միամեայ դորձու նէութեան տեղեկագիրը: Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց վարժարանի նախակրթարանի 7 և Մանկապարտեզի 20 շրջանաւորներու վկայականներու և յաջող աշակերտներու մրցանակներու բաշխումը ու իր փակման խօսքէն ետք տուաւ իր օրհնութիւնը վարժարանի ուսանողութեան:

Դ. — Ա. Թարգմանչաց Նախակրթարանի

և Եկրորդական բաժնի. — Նոյն երեկոյեան

ժամը 7ին, ժառանգ. վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ա. Թ. Վարժարանի նախակրթարանի և Եկրորդական բաժնի ամալիբրէի հանդէսը, որուն կրցաւ հասնիլ և նախագահել Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: ներկայ էին բովանդակ Միաբանութիւնն ու ծնողներու և ժողովուրդի հոծ բազմութիւն:

Հանդէսը սկսաւ Վրք զարգարեցին» Թարգմանչաց շարժականի երգեցողութեամբ, որմէ ետք իրագործուեցաւ աւելի քան երկու քուկէս ժամուրու տեսչութեամբ ճոխ յայտագիր մը: Երկրորդական բաժնի ընթացաւորներէն ուսման բանախօսեցին. կարդացուեցան շարագրութիւններ, հայերէն, արարերէն և անգլերէն լեզուներով: Նոյն լեզուներով, ինչպէս նաև Քրանտերէնով եղան արտասանութիւններ: Տեղի ունեցան նաև մենեթներ, ու խմբերգներ՝ ձեռնհաս զեկալարութեամբ Զօր. Տ. Թարգմ. Վրքի: Վարժարանի Տեսուչ Զօր. Տ. Կիւրեղ Վրք. կարգաց վարժարանի տարեկան տեղեկագիրը: որմէ կ'ընենք հետեւեալ մէջբերումները.

«Յիւ աշակերտութեան. — Տարւոյս ընթացքին մեր աշակերտութեան ընդհանուր թիւն էր 400. որուն 210ը ազջիկներէ իսկ 190ը կը բաղկանար տղաների, Ասոնց 37ը հետեւեցան երկրորդական վարժարանի, 233ը նախակրթարանի և 130ը Մանկապարտեզի դասընթացներուն:

Նախորդ տարիներու բաղդատմամբ մեր աշակերտներու թիւին զգալի պակասը հետեւանքն է երուսաղէմի անտեսական և բաղարական պայմաններու արդիւնք՝ երուսաղէմարձակ մեր ժողովուրդի

մեծաթիւ արտագաղթին ղէպի Ամերիկա եւ շրջակայ երկիրներ:

Պաշտօնէւորիւն եւ Ռուսացական կազմ. — Մեր պաշտօնավարութեան ընթացքին մենք վայելցինք սրտեռանդն գործակցութիւնը 30 հոգիէն ռուսացական կազմի մը: Անոնցմէ, չորսը կը պաշտօնավարէին Մանկապարտէզի բաժնին մէջ, զրլ-խաւորութեամբ բազմամեայ եւ փորձառու Մանկապարտիզականուհի Օր. Տիգրանուհի Նալպանտեանի իսկ մնացեալ 26ը Նախակրթարանի եւ Երկրորդական վարժարանի բաժնիներու մէջ: Այս ուսուցիչներէն վեցը Ս. Յակոբեանց Միարանութեան եպիսկոպոս եւ վարդապետ Հայրերէն են:

զատ ուսանող, որոնք այս տարի մասնակցեցան Ճէնէրալ Սրբի՛ֆիրէյթ ալ Էճուրէյընի քննութեան:

Մեր մասնաւոր խնամքին առարկայ եղած են նաեւ Նախակրթարանի եւ Մանկապարտէզի բաժնիները: Անձամբ հետեւեցանք զատախօսութիւններու ընթացքին. ամէն եռամսեայի վերջը աչքէ անցուցինք թոյր պարտականութեանց անարակները:

Իսկ մեր Մանկապարտէզի կրթական մակարցակը աւելին է բուն սովորական Մանկապարտէզի մը կրթական մակարդակը. անոր համար որ մեր Ծաղիկ դասարանը կը գտնուի նոյն մակարդակի վրայ ինչ



Ս. Թարգմանչաց Վարժարանի ռուսացական կազմը եւ շրջանաւարտներ

Հանդիսաւոր այս առիթով միայն շնորհակալութեան եւ զեաճատանքի խօսք ունիմ մեր պատուական ռուսացական կազմին, թոյլուն ալ ազնիւ եւ ջերմօրէն համագործակցող ինչ որ մեր զգրոցական ընդհանուր գործին յաշտութեան զլիսաւոր պայմաններէն մէկն է:

Կրթական մակարդակի բարձրացում. — Մեր վարժարանին համար նշանակելի եւ պատմական տարի մըն է այս տարին, երբ Ս. Թարգմանչաց Վարժարանէն ներս ունեցանք երկրորդական կրթութեան բաժին մը եւս. իր չորս դասարաններով, ու 40ի մօտ երկսեռ աշակերտներով: Ու պահ մը համարժակութիւն կուտամ ինրզինքիս ըսել որ մեր երկրորդական վարժարանը Երուսաղէմի իր տեսակի կրթական ձեռնարկներուն լաւագոյններէն է: Մեր այս ձեռնարկը այսօր արդէն իսկ տուած է իր առաջին հունձըը. 5 շրջանաւարտներ եւ մէկ ա-

որ են օտար նախակրթարաններու առաջին դասարանները:

Այս տարի եւս մեր երկրորդական եւ Նախակրթարանական բաժնիներուն մէջ ռուսացուեցան չորս լեզուներ՝ Հայերէն (աշխարհաբար եւ գրտարբ), Անգլերէն, Արարերէն եւ Ֆրանսերէն, իսկ Մանկապարտէզի նշաղիկ դասարանին մէջ Հայերէն, Անգլերէն եւ Արարերէն երեք լեզուները: Այս գլուխին յարակցաբար պէտք է ըսել որ մեր ռուսացական կազմի անդամներէն կարծես թիւ մը (վեց հոգի), տարիներու փորձառութեամբ լեցուն օտարներ են. ինչ որ մեծապէս կը նպաստէ մեր զպրոջէն: Կերտ օտար լեզուներու խօսակցական վարժութեան:

Գիտական դասերու անհրաժեշտ տարրալուծարանի մը կազմութեան ձեռնարկած էինք նախորդ տարիներուն: Բունակցութեան մէջ ենք հնդկական ընկերութեան մը հետ, ոյուն արդիւնքը պիտի ըլլայ

մեր տարրալուծարանին կրկինով ընդարձակումը յառաջիկայ Օգոստոսը չաւարտած :

Իրրեւ ձեռական աշխատանք . աղջիկներու համար ունեցանք ամենօրեայ ձեռագործի պահեր : Ռոննց արդիւնք մեր տարեկան պագարի ձեռագործները՝ արդէն իսկ կը վկայեն թէ . ինչ ինձամբ եւ ուշադրութիւն ընծայուած է մեր զպրօցէն ներս ձեռագործական արուեստի յառաջդիմութեան համար :

Ոգի. — Դժուար պարագայ մը թէ իրրեւ տարեկան սահմանում եւ թէ իրրեւ իրագործում : Կ'ուզենք եւ կը ծրագրենք որ մեր տղարը ըլլան լաւ բրիտանեաններ , ինչ որ ըսել է լաւ մարդեր . եւ ապա նաեւ լաւ դաստիարակուած առողջ մտածող : Կ'ոյսեր : Ասոր համար րոյտը դասարաններու յատուկ ունիներ կրօնագիտութեան եւ հայագիտութեան դասեր , որոնց կ'ընծայենք մասնաւոր ուշադրութիւն :

Հրահրելու համար աշակերտներու կրօնական ապրումները ամէն նիւրախի եւ ամական առիթներով անոնք ներկայ եղան եկեղեցական արարողութեանց , գործնականապէս մասնակցեցան մեծ սօնախմբու թիւներուն ու տարուայ ընթացքին Ս . Զատիկի . Ս . Ծննդեան եւ Ս . Թարգմանչաց տօներու երեք առիթներով մասնակցեցան նաեւ Ս . Հաղորդութեան յորհուրդին : Մեր կողմէ մասնաւոր կարգադրութեամբ Ս . Հաղորդութեան յորհուրդին մասնակցեցան նաեւ օտար վարժարաններու հարիւրի մօտ հայ ուսանողները :

Մարզական կեանք. — Ամէն առաւօտ տղար կ'ունենան մարզանքի վարժութիւններ : Այս տարի բաժնուած էին երկու խումբի՝ «Ազատ» եւ «Մասիս», որոնք իրենց մարզական վարժութիւններէն գատ ունեցան նաեւ ֆութպօլի . պասկէթպօլի . վոլբօլի . փինկ - փունկի փորձեր եւ միջիմարական մրցումներ : Իսկ աղջիկներ՝ բաժնուած «Երեւան» եւ «Սեւան» խումբերու . դարձեալ ունեցան իրենց մարզական վարժութիւնները :

Տղօց եւ աղջիկներու խումբեր իրենց միջիմարական մրցումներէն գատ . օտար խումբերու հետ եւս ունեցած են հանդիպումներ հետեւեալ արդիւնքներով . —

11 ֆութպօլի մրցումներէն Տը ի նպաստ վարժարանիս . 2 վոլբօլի մրցումներէն Էր ի նպաստ վարժարանիս . 2 փինկ - փունկի մրցումներէն Էր ի նպաստ վարժարանիս :

Խաղարանի շինութիւն. — Վարժարանս զօրկ է ընդարձակ եւ կազմակերպուած խաղարանի մը առաւելութեանէն : Հետեւաբար անցեալ Դեկտեմբերին լեցուցինք այս պահասը եւս : Ասոր համար պէթոնով սալաշատակցինք վարժարանիս ետեւ գտնուող հողաշերտը : Անոր մէկ մասին վրայ հաստատուեցան պասկէթպօլի սրահածրը . իսկ միւս մասին վրայ եւրոպական զպրօցներու յատուկ խաղալիքներ ինչպէս վահանակներ . օրօրոցներ եւայլն :

Խաղարանը մեծ խանդավառութեան առիթ մը եղաւ մեր փորձիկներուն համար . կրկանք ըսել որ այս սրահածրով անկիւս երուսադէմի մէջ միակն է :

Սկստական շարժում. — Մեր տեսչական պաշտօնավարութեան առաջին օրէն իսկ Սկստական շարժումը մեր զպրօցէն ներս նկատեցինք մաս

մեր դաստիարակչական գործին , վասնզի Սկստական թիւնք իր տխրիկիով . իր ուսուցումներով , իր օգնականութեամբ . ուրիշ բան չէ եթէ ոչ աղուն մէջ զարգացումը կարգ ու կանոնին բժժուումին . բաշտակերութիւնը ազնուական ապրումներու . ու մշակուած ֆիզիք առողջութեան : Հետեւաբար . ձեռնարկեցինք մեր վարժարանի յատուկ Սկստական խումբերու կազմակերպութեան : Մինչեւ 1957 որպէս նուիրակ մեր Ամերիկա մեկնումի թուականը մեր Սկստական խումբերու թիւը հասած էր 100ի (50 Սկստական եւ 50 գայիկներ) եւ սակայն մեր վերագործին այս խումբերը գտանք քայքայուած : Հետեւաբար . առանց յուսահատելու այս տարի անգամ մը եւս վերսկսանք կազմակերպել մեր Սկստական խումբերը : Այսօր ունինք 13 սկստական եւ 30 գայիկներ : Աստահօրէն կը հաստատենք թէ յառաջիկայ տարուայ ընթացքին , այս թիւը պիտի ըլլայ կրկնապատկուած : Մեր Սկստականներն են վարժարանիս աշակերտներէն Յովսէփ Եղիայեան եւ Պօղոս Արարձամեան :

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Արեւուշեակ. — Դարձեալ մեր տեսչութեան սկիզբը կազմակերպեցինք Արեւուշեակու եւ Արձուիկներու խումբեր զլիաւորութեամբ Օր . Ազնիւ Եազուպեանի եւ օժանդակութեամբ Օր . Նուարդ Արարձամեանի : Այս խումբերը ցայտօր առանց ընդհատի շարունակած են իրենց գոյութիւնը : Մեր Արեւուշեակու թիւն է 36 , իսկ Արձուիկներու 70 : Թէ մեր Սկստականներն ու գայիկները , եւ թէ Արեւուշեակու եւ Արձուիկները . ամէն շաբաթ կ'ունենան իրենց դաստիարակութիւնները . ընկերային հաւարոյթներն ու պատշաճները . Վարժարանիս ծախրով այս տարի մեր րոյտը Սկստականներն ու Արեւուշեակու ունեցան իրենց նոր համազգեստները :

Ս . Թ . Շրջանաւարտից Միութիւն. — Դրարոյի հովանաւորութեան տակ ունինք նաեւ նախկին երկսեռ Շրջանաւարտներու Միութիւնը : Անոնք տարուայ ընթացքին հայթայթեցին երկտասանեակ մը ազգայնական աշակերտներու զասպիրանտներ , իսկ ամէն նիւրակի կ'ունենան իրենց գրական եւ ընկերային հաւարոյթները դաստիարակութիւնները , պայտանքը եւ այլն :

Շինուածական. — Ծրագրուած աշխատանքով նորոգութիւններու սկսած ենք նաեւ վարժարանի շէնքին մէջ :

Տարեկան զպրօցին Ամերիկայի մէջ զպրօցի նուիրահաւարութեան արդիւնքէն մօտ 1000 տղար յատկացուեցաւ սալաշատակելու համար վարժարանի երեք ընդարձակ տանիքները : Այսպէս առաջըրը առնուեցաւ ձեռնարկին եղանակներու աշակերտներու ենթարկուած անտանկի վիճակին . որովհետեւ միւնն ու անձրեւը շատ առատօրէն կը թափանցէին մեր վարժարանին առաստաղներէն ու կը վնասէին նաեւ շէնքին :

Մեծածախս նորոգութեան կը կարօտէին մարտի ջուրի ջրամբարները , հետեւաբար 50 տիւնարի ծախրով մը շինել տուինք միակտուր նոր եւ ընդարձակ պէթոնէ ջրամբար մը , որով վերջ արուեցաւ նաեւ ամառնային տօթերուն վարժարանէս ներս ջուրի

պակասի անպատեհության և վարժարանի վարի յարկի բոլոր պատահանները ապահովեցինք երկաթեայ ցանցաբեղով. որուն համար ծախսեցինք մօտ 70 տիւար. ու այսպէս խնայուած պիտի ըլլան մշտապէս կտարուելու ենթակայ ապակիներու ամէն օրեայ ծախսերը:

Ցնունակաց. — Մեր կրթական գործին ծաղկման զուգընթաց, եռապատիկ աւելցած է նաեւ վարժարանի ծախսոց զուտը. ըստ նախահաշիւի (պիտեմէ) մեր սարեկան ընդհ. ծախսն է 4.400 տիւար: Այս ծախսը հաւասարակշռած ենք հետեւեալ մուտքերով:

Նախօրոյ տարւոյնէ պատաս	Տիւար	200
Ամսաքառակներէ		600
Ունեւայէն		500
Ն. Պ կիւլպէնկեանէն		350
Կիւլպայի կիւլպէնկեան ֆոնէն		350
Համասերասանայ Վերաշինաց Միութենէն		125
Հավրոս Գարակէօզեան Հիմնադրութենէն		390
Վարդանանց Ապսեներու եղբայրակցութենէն		350
Պրտէն (Հայ Ուսանողներու Ամերիկանայ Բարեկամներէն)		160
Վանառեալ զբնամբ		500
Պագարէն		360
Հանդէսներէ եւ այլ մանր հասոյքներէ		50
Կրասուր ազգայիններու նուէրներով փակուած բաց		675
		<u>4.400</u>

Բարերարներ. — Ձեռք կրնար փակել մեր տեղեկագիրը առանց անդրադառնալու այն բոլոր ազնիւ ու կրթաւէր հոգիներուն եւ կազմակերպութիւններուն որոնք իրենց մեծ կամ փոքր նպաստներով ապահովեցին մեր վարժարանէն ներս կրթական կարեւոր նուաճումներ: Ենթահակութեամբ եւ զոհունակութեամբ կը յիշենք անունները հետեւեալ նուիրատուներուն. իրենց նուիրատուութիւններով միասին:

Վարդանանց Ապսեներու եղբայրակցութիւն	Տ. Ց.	
Ամերիկա		350.000
Հանգ. Ներսէս Պ. Կիւլպէնկեան, Լոսնոն		350.000
Հավրտ Գարակէօզեան Հիմնադրութիւն, Նիւ Եօրք		390.000
Կիւլպայի կիւլպէնկեան Ֆոնտ. Նիւ Եօրք		350.000
Ունեւայի կազմակերպութիւն երաստղէմ		500.000
Համասերասանայ Վերաշ. Միութիւն. Ամերիկա		125.000
Պրտտ (Հայ Ուսանողներու Ամերիկանայ Բարեկամներ)		160.000
Էլբընթթընի Եկեղեցատէր Տիկնանց Միութիւն (Տիկ. Այրին Ուօլթըր Վարդանի միջոցաւ)		36.000
Արշակ Օտապաշեան. Ֆիլասելքիա		10.000
Քաղէոս Քամուզեան. Եղեմ		7.500
Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք		7.500
Համասուոհի Ամէթճեան, Քալարի		7.500
Միրար Գալֆայեան, Եղեմ		7.250
Արմէն Մէլնէնտեան, Եղեմ		7.250

Տ. Կարապետ Ա. Քճյ. Գալֆայեան, Եղեմ	7.250
Արսէն Խոկէսէրեան Եղեմ	7.250
Հատիկ Աւանեան. Շիքակո	7.500
Ճ. Մ. Յովհաննէսեան, Ֆրէզքո	7.500
Պօզոս Մանուկեան, Ֆրէզքո	7.500
Սիմոն Ժիկոզեան, Տիրոյք	8.000
Նազար Հիմալեան, Նիւ Եօրք	7.000
Ովսաննա Տ. Յակոբեան, Պոսթոն	9.000
Մ. Միրայէլեան, Պոսթոն	9.000
Աեհիս Սվաճեան, Նիւ Եօրք	9.000
Կոմիտաս Ակուճը. Ուարրերուան	17.000
Ս. Պոյաճեան, Պոսթոն	9.000
Ա. Խորասաֆճեան Բասասիւնա	9.000
Ս. Հմիրխանեան.	9.000
Քոյ Ասոյեան.	9.000
Սահակ Վարդանեան, Ռէյսից	9.000
Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք	3.700
Երուանդ Յակոբեան, Նիւ Եօրք	9.000
Ա. Բարիշեանեան. Ռիքի	9.000
Ճ. Գարակէօզեան, Ֆրէզքո	8.000
Ալիս ֆիրան, Նիւ Եօրք	8.465
Մէտհրիպէ Թիմուր Լոս Անճըլըս	8.465
Հիւսն Դաւիթեան. Քիլիկէն	8.400
Ա. Հաճըլեան, Պոսթոն	9.015
Քիւթանիոյ Վերաշ. Միութիւն. Նիւ Եօրք	42.000
Սիմոն Շմառնեան, Նիւ Եօրք	9.000
Գ. Կարապետեան, Ֆիլասելքիա	8.900
Զարի Աշճեան, Ռիչմոնտ	8.600
Սեդրակ Սուլթան. Ֆիլասելքիա	8.200
Է. Ս. Վայ. Օ. Է., Ֆրէզքո	9.000
Հոխիսիմէ Աւանեան. Շիքակո	9.000
Մարթին Արզարեան, Տիրոյք	9.000
Ք. Դանիէլեան, Պոսթոն	9.000
Մկրտիչ Մամբեան. Տիրոյք	9.000
Յ. Ա. Քալիլոյ, Ոզլէն	8.500
Սառա Խոյիկեան, Պոսթոն	8.500
Ն. Քաճճեան Եղեմ	11.000
Տիկնի Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք	11.000
Համասուոհի Ամէթճեան, Քալարի	10.000
Ալիս Կիրեղեան, Ֆրէզքո	9.250
Իրէնա Թումանեան, Լոս Անճըլըս	11.000
Հայաստան Պէյրըր, Ֆրէզքո	11.000
Էրի Դաւիթեան, Եղեմ	18.000
Է. Ս. Վայ. Օ. Մի, Կեդրոնական Ժողով	8.300
Դասերը Վարդանանց, Ամերիկա	84.800
Կարօ Գազէզեան, Շիքակո	9.000
Վարդան Խոյիկեան, Շիքակո	9.000
Սրբուհի Պաուկեան, Նիւ Եօրք	9.000

Շնչանաւորացիներ. —
Ա. — Մանկապարտէզէն 34 շրջանաւարտներ:
Բ. — Նախակրթարանէն 18 աշակերտներ:
Գ. — Երկրորդական բաժնիէն՝ 5 շրջանաւարտներ:

Փակելի առաջ տեղեկագիրս ի դիմաց մեր վարժարանին եւ աշակերտութեան կը յայտնեմ շնորհակալութեան սրտագին զգացումներս. —

Ձերդ Բարձր Սրբազնութեան եւ Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութեան, իրրու տէրն ու առաջ-

նորը, վերին հովանաւոր մեր կրթական այս յոյսի տան: Մեր երախտագիտութիւնը անձուս կը բազմապատկուի երբ կ'անդրադառնանք թէ հակառակ մեր վանքի անտեսական օտարապէս թէ անտեսական եւ թէ բարոյական գեղմունքով վրայ, մեր վարժարանը երբեք չի դադրիր ըլլալէ մեր Միաբանութեան առաջնակարգ մտահոգութիւններէն մին: Շնորհակալութիւն մեզի գործակից համայն ուսուցչական կազմին:

Շնորհակալութիւն մեր կրթական աշխատանքի բոլոր բարեկամներուն, որոնց կարգին նաեւ Ամերիկայէն Օր. Լիլիա Գարակէօզեանին, Տիկին Արամիս Գարակէօզեանին Պրնյր. Հայկ Գալուր Բճնանին. Յակոբ Անտոնեանին. Յակոբ Տէրաէրեանին, Գէորգ Զամիչեանին» (Պէլյուրթ):

Հանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարքը կատարեց վկայականներու եւ մրցանակներու բաշխումը նախակրթարանի 18 եւ երկրորդական րաժնի 5 երկուսն շրջանաւարտներուն ու յաջող աշակերտներուն եւ հանդէսը փակեց ուսանողներուն եւ ձեռքներուն ուղղած իր շատ սպասուրիչ յորդորականով:

Ա Մ Ս Վ Ե Բ Զ Ի Հ Ա Ն Գ Է Ս

Ժ Ա Ռ Ն Ն Գ Ա Ի Ռ Ր Ա Յ Վ Ե Բ Ժ Ա Բ Ա Ն Ի

և Վ

Ը Ն Ծ Ա Յ Ա Բ Ա Ն Ի

10 Յուլիս. Զորքշարթի, երկնայեան ժամը 7-9, կատարուեցաւ ժողով. վարժարանի եւ Ընծայարանի ամսօրէի մրցանակաբաշխութեան հանդէսը. վարժարանի հանգիստարանին մէջ: Հանդէսին կը նախագահէր Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը: Ներկայ էին Միաբան Հայրեր, ուսուցիչներն ու հրաւիրեալներ:

Հանդէսը սկսաւ Վերիտի սիրտէ վարժարանի քայլերգով. որէ ետք Գեր. Տեսուչ Սրբազանը ըրաւ հակիրճ բացման խօսքը: Ընծայարանի րաժնէն Բար. Սիմոն Սրկ. Խաչատուրեան եւ Բար. Վարդան Սրկ. Զաքարեան տուին խնամուած բանախօսութիւններ օրուան տօնին մասին (Ս. Թարգմանիչ վարդապետներ): Իսկ ժառ. սաներ մասնակցեցան խմբերգներու. մեներգներու եւ հայերէն (գրարար եւ աշխարհարար): արարերէն եւ անգլերէն լեզուներով արտասանութիւններու: Բարձրագոյն դասարանի ժառանգաւորներ կարգացին ինքնագիր շարագրութիւններ:

Ընդ վայրկեանի դադարէ մը ետք սկսաւ հանդէսին երկրորդ մասը. ընմանեալ Մոսիսի շարականով: Ապա վարժարանի Տեսուչ Գեր. Տ. Հայկազուն ետս. կարգաց զպրօջի տարեկան տեղեկագիրը, որմէ կ'ընենք հետեւեալ մէջբերումները.

«Այս հանդիսաւոր պահուն վարժարանիս Տեսուչութիւնը իր ուսուցչական կազմով ու ուսանողութեամբ

միասին կը յայտնեն իրենց սրտագին շնորհակալութիւնները Չերդ Ամենապատուութեան, Պատուարժան Միաբանութեան եւ Պատ. Տնօրէն Ժողովոյ անդամներուն, որ չզրպար ամէն բարին, իրենց կարելութեանը սահմանին մէջ. հանդէպ այս վարժարանին, անտեսական մեր այս նկ կազութեան մէջ:


Այս Հաստատութիւն է որ պիտի ելլեն ճշգրտոր եւ բարոյական մշակները մեր եկեղեցիի ու դպրոցներու. եւ ազգին ծով կարիքներուն համար ծառայող ճշգրտները: Հունձք բազումք են եւ մշակք սակաւ: Տիրոջ այգին է նոյնպէս ժառանգաւորաց վարժարանը իր Ընծայարանով: Աշխատինք, յոգնինք, գտանք բարի ճոգիները անոր մէջէն ու բնօրէնք Աստուծոյ սուրբ սեղանին ի սպասաւորութիւն:

Ա. — Հոգեւոր հունձք. — Ուրախ ենք յատարարելու թէ անցեալ տարուան տարեփակէն վերջ ժառանգաւորաց վարժարանը տուաւ ութ Սարկաւագներ, որոնք ձեռնադրուեցան 1956 Օգոստոսին, եւ այս տարուան Յունիսին այ ձեռնադրուեցան չորս կուսակրօն Արեղանք. (եւ էյեր Սարկաւագներ). ամէնքն այ գիտակից եւ իրենց կոչումին տէր երիտասարդներ:

Բ. — Կրօնական եւ եկեղեցական կեանք. — Դպրոցական այս տարեշրջանի ընթացքին, ուրախ եմ յայտնելու թէ մեր վարժարանէն ներս չպակեցաւ եկեղեցական պաշտամանց մէջ ազոց ծառայութեան ոգին. նոյն ոգին ցոյց տուին նաեւ Բարեշնորհ Սարկաւագներ: Մեր աշակերտները եւ Սարկաւագները միշտ յօժարակամ ցոյց տուին մանուանդ Սրբապետից մէջ իրենց ծառայութեան ոգին. որ լուսագոյն նիշը կը սրբէ իրենց Աթոռասիրութեան:

Գ. — Երթուհի կեանք. — Անցեալ տարուան Սեպտեմբերի վերջերք եւ Հոկտեմբերի սկիզբները Սուրիայէն եւ Լիբանանէն հասան 12 նոր աշակերտներ, որոնք թաժնուելով իրենց ախտիճանի դասարաններուն վրայ, Հոկտեմբեր 2ին բացուեցաւ վարժարանը չորս դասարաններով. եւ Ընծայարանը երեք դասարաններով: Ժառանգաւոր աշակերտներուն ընդհանրութիւն էր 27. Իսկ Ընծայարանի Սարկաւագաց՝ 12: Ուսուցչական կազմը բաղկացած է Չերդ Ամենապատուութիւնէն. Սրբազան Հայրիէն, Հոգեշնորհ վարդապետներէն, Բարեշնորհ Սարկաւագներէն եւ յարգելի աշխարհական ուսուցիչներէ. որոնց ցանկը եւ դաստեղծութեանց մանրամասնութիւնները հրատարակուած են մեր Օրացոյցին մէջ:

Այս հանդիսաւոր ուղթիս Տեսուչութիւնը հրապարակաւ իր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնէ իր ուսուցչական լրիւ կազմին, որոնք իրենց ամէն կարելին ըրին որպէսզի վարժարանը հասնի իր իսկական նպատակին: Տուա ի սիրա կը յայտնենք թէ, բաղարական ինչ ինչ պայմաններ եւ կարգ ըմ այլ դէպքեր, ազոցներ մեր կրթական գործի կանոնաւոր ընթացքին, եւ բաղձանք որ յառաջիկային չկրկնուին այս անպատեհութիւնները ու մեր կրօնական վարժարանը հասնի իր իսկական նպատակին: Վստահ եմ թէ Չերդ Ամենապատուութիւնը յառաջիկայ տարուան համար կ'ընէ անհրաժեշտ կարգադրութիւնները, ուսուցչական կազմին մէջ եւ այլ խնդրոց նկատմամբ, ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը վերանայու իր նպատակի հասունութեանը:



Պ. — Մշակութային կեանք. — Ժառանգաւորաց վարժարանի և Հնծայարանի ուսանողութիւնը ունի իր փառանգաւոր պարտերաթիւերը, ուր երեւան կուզան տղոց միտարի արդիւնքները գանձաւած սեւերով Յարդ լոյս տեսած են չորս թիւեր 70-80ական օրինակներով Ունին նաեւ ամառուան եղանակին ընթերցարարի մը. ուր կը հաւաքուին 30է աւելի կրօնական և գրական ամսագրեր. ամէնքն ալ նուէր ժառանգաւորաց վարժարանին հրատարակչներու կողմէ: Մեր շնորհակալութիւնը գանձեր առարդներուն, Առնցմէ գատ տղարը կը գրադին նաեւ շարականներու ռազմագրութեան գործով, նոր գնուած Սթէնսօլ մեքենային վրայ:

Ս. — Առողջապահական կեանք. — Գոհութիւն Աստուծոյ. այս մէկ տարուան ընթացքին չենք ունեցած ծանր և մտահոգիչ հիւանդութիւններ: Եղած են պատահական սկարտութիւններ, որոնք շուտով անցած են: Տղարը ունին իրենց հիւանդանոց-բլիւնիքը. և իրենց մէջէն ընտրուած են հիւանդապահներ, որոնք հոգ կը տանին իրենց տկար ընկերներուն:

Զ. — Գիւղացեացութիւն և օրական պոռոցներ. — Անցնող տարուան ամառուան երկու ամիսներու ընթացքին. աշակերտութիւնը և Սարկաւազները երկու խումբերու բաժնուելով մէկական ամիս Բնթղեհէմի Գարուն-Տէրի հովոց գային. և հոն անցուցին իրենց այժակուրդը. նոյն առնք մասնակցելով նաեւ Բնթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարի ժամբարաններուն և պատարագներուն: Խակ տարուան ընթացքին ունեցան գանձաւոր օրական պոռոցներ յերիւրով և Ղատի-Քրիթ և ուրիշ վայրեր:

Է. — Առօրեայ կեանք. — վարժարանիս առաջին կիսանքի ուղղակի հսկիչն է ֆոխ-Տեսուչ Հոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէլեանը որ ջանք չի խնայեր վարժարանիս աշակերտներուն վարժեցնել տնական գործերու իրենց պարտականութեանը մէջ: Մեր առաջին գործերը հեռուեւաններն են. — Վերահսկողութիւն ժառանգաւորաց գրադարանի. սերտարանի. Տեմարանի նշարաններու, շորատան. խաղարանի. բազմիւրի և հիւանդանոց-բլիւնիքի: Այս գործերուն կանոնաւորմանը մէջ ֆոխ-Տեսուչին կ'օգնեն նաեւ Սարկաւազներ սիրայօժար իրենց ծառայութեամբը:


Ը. — Մարզական կեանք. — Աշակերտութիւնը բաժնուած է երկու խումբերու Կարմիր և Կանաչ: Վարժարանէն ներս ունինք չորս պարտաւորիչ խաղեր ֆութպոլ. պասթիլֆոլ. վոլիպոլ և փինկ փոնկ: Ունեցած ենք գանձաւոր խումբերու հետ խաղարկութիւններ, որոնց մէջէն մեծաւ մասամբ յաղթող հանդիսացած են մեր աշակերտները, մասնաւորաբար ֆութպոլի խաղերուն մէջ: Խակ Կարմիր և Կանաչ խումբերու տխրաստեղծ մրցումները տեղի ունեցան այս տարուան Յունիսի 13-16 օրերուն:

Փակիչէ առաջ Տեղեկագիրը մեր միտմեայ գործունէութեան այս վարժարանէն ներս. դարձեալ հրատարակաւ պարտը կը զգամ մեր շնորհակալութիւնները յայտնել Չորդ Ամենապատուութեան, մեր Միաբանութեան քովանդակ կազմին. ինչպէս նաեւ ուսուցչական կազմի ամբողջութեանը, ֆոխ Տեսուչին և Բարեշնորհ Սարկաւազներուն, և բոլոր այն պաշ-

տօնեաներուն, որոնք իրենց սրտանուէր ծառայութիւնը կը բերեն այս Յարկին:

Նոյնպէս չեմ թերանար այս հանդիսաւոր պահուն հրատարակաւ յայտնել մեր շնորհակալութիւնները բոլոր այն ազնիւ հոգիներուն, որոնք հոս են և կամ ի սփիւռս աշխարհի ցրուած՝ աննատական-անծանց, պաշտօնական Մարմիններու, Միութեանց և կազմակերպութեանց, որոնք քարոյտպէս և նիւթապէս կը սատարեն ժառանգաւորաց վերելքին և քարգուսման ամէն տեսակէտով: Թող Բարին Աստուած վարձատարոյց լինի այս բոլոր քարի հոգիներունս:

Տեղեկագիր ընթերցուածէն ետք, Ամեն. Ս. Գատրիարք Հայրը բաժնեց ուսումնական և մարզական հիւղերու. ինչպէս նաեւ վարքի մէջ յաջող սաներուն մրցանակները ու իր փակման խօսքէն ետք օրհնեց ներկաները Պահպանիչ լոյով: Միաբանութեան երգուած Հայր մերով վերջ գտաւ հանդէսը:



Գ Բ Ի Գ Ո Ր Գ Է Ո Ր Գ Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ե Ա Ն Կ Տ Ա Կ

Կալկաթայէն Գր. Գրիգոր Գէորգ Կարապետեան կտակաւ երուսաղէմի Հայոց Վանքին կը թողու իր հարստութիւնը որ կը հասնի մօտաւորապէս 50 հազար սթերլինի: Այս գումարին առկոտը, ըստ կտակի տրամադրութեան, պիտի ստանար Տիգրին Կարապետեան կտակարարի մահէն վերջ: Գր. Կարապետեան վախճանեցաւ 1 Յունուար 1956ին:

Կինը սակայն օգտուելով իր ամուսնոյն հիւանդագին վիճակէն շինել տուած է նոր կտակ մը և ստորագրել տուած է ամուսնոյն՝ վերջնայանդիտակից վիճակի մէջ եղած միջոցին: Ըստ այս նոր յերիւրուած կտակին ամբողջ հարստութիւնը կը փոխանցուէր տիգրին:

Ս. Աթոռս իր իրաւունքներուն տէր կանգնելով՝ գատ բացած էր այս զեղծարարութեան դէմ: Ուրախ ենք ըսելու որ դատը վերջացաւ ի նպաստ երուսաղէմի Աթոռին:

Այս դատի յաջողութեան մէջ յոյժ կարևոր դեր կատարեցին Գարունայք Գ. Բ. Ալեքսի և Գ. Գ. Արգար, Կալկաթայի Ս. Նաղարէթ եկեղեցւոյ հոգաբարձուները, որոնք Գատրիարքարանիս կողմէ փոխառողջ նշանակուած են այս դատի նետապնդումին մէջ: Ամեն. Ս. Գատրիարք Հայրը շրկեց իր զնահատանքի և շնորհակալութեան գիրը Օգոստ. 7ին այս պատուական ազգայիններուն:

Այս առթիւ լուսարանութեան համար կ'աւելցնենք երկու կարևոր պարագաներ. ա) Կինը դիմած է վերաքննութեան, բ) Ս. Աթոռը եթէ վերաքննութեան դատը չաւի անգամ, այս կտակէն պիտի կրնայ օգտուել տիգրին մահէն վերջ միայն, որ տրուած տեղեկութեանց համաձայն շատ ալ յառաջացեալ տարիքի մէջ չի գտնուէր: